«Թող չտար որ լսէ՝ տեսնայ մեզ Գթած։
«Այսպիսաբար բարձի թողի կամք անտէր,
«Ցաւն այն է որ միմեանց հետն ևս չունիմք սէր.
«Ոխակալին կարելի չէ լսել Տէր,
«Ընդունայն են իւր պաղատանք և նուէր։
«Թէ մնամք միշտ ի մէջ այսպէս դրութեան,
«Զեմք պատահեր Մարդասիրի գթութեան.
«Այլ օր աւուր բռնաւորաց գաւազան,
«Զմեզ ճզմելով պիտի տայ մեր զգաթթան։
«Այս է ահա՛ իմ տրտմութեան բուն պատճառ,
«Զոր սիրելի եղբարցդ իմոց արկի ճառ.
«Այս մտածմունքս կարի ԼԿէ զիս խպառ,
«Եւ խոցեր է ձեր խեղճ Ղազար փոքր եղբայր։
Մինչ մեր եղբօր լուաք այն սա ազդու բան,
Անկաք ի մէջ սրտաճմլիկ թախծութեան.
Խինդ և բերկրանք փախչան ի մէնջ նոյն ժամայն,
Եւ նոցա տեղ սուգ կաշկանդեաց կարաման։
Լացաք ամենքս թշուառ վիճակ մեր Ազգին,
Եւ յանձնեցաք զինքն գթութեան Անեղին.
Ապա մնացեալ պակաս գնացք մեր ուզին,
Կատարեցաք սիր ու ցաւով տրտմագին։

digitised by A.R.A.R.@

Ժամ տասնի մօտ մուտ գործեցաք ի Տաշկուն,
Մեզ Մզտօյին յատկացուցին մնալ տուն.
Երեկոյին կերաք փոխինդ և մածուն,
Եւ մատուցաք փառս՝ գոհութիւն Բարձրելոյն։
Հանգչաք ապա խարախշոի անվերմակ,
Եւ տուին մեզ կատաղի լուք շատ լկանք.
Կարեկցութիւն չարին և ոչ խղճմտանք,
Մինչև ի լոյս գոդ կենդանւոյն թէ մեռաք։
Պատրաստեալ եմք պիտի գնամք ի Մանճկերտ,
Նախ քան զարև արշալուսի ատուղի հետ.
Մասիք սարէն սուլէ զեփիւռն մերթ ընդ մերթ,
Եւ յաւելու խանդ մեր առ ինքն ըղձիւ սերտ։
Փոքր ինչ չոգաք թէ ոչ գերեան իւր Տաշկուն,
Մածկեաց ի մէնջ՝ և նորա տեղն այժմ խոկոյն.
Մանճկերտի դաշտան՝ որ քռայիւք է լեցուն,
Ներկայացոյց մեզ ահա զիւր տեսութիւն։
Հազար հազար մեծ և զզոտիկ սև քռայ,
Դէզ դէզ սոյն տա լայն դաշտիս մէջ ոչչափ կայ.
Սոյդն ասեմ ուղևորին սիրտ դողայ,
Մինչդեռ ատի ստիպեալ է գնալ նա։
Պաշարեր է կարաւան ահ և երկիւղ,
Քանզի կայ տատ ոչ շինութիւն և ոչ դիւղ.
Մակաղատեղ հոս չիք հովուաց՝ և ոչ հիւղ,
Այլ անջրդի երկիր է տա անպտուղ։
Երթ և եկից տակս դարանին տատ միայն,
Աւազակաց խումբ խումբ ջոլիրք զանազան.
Քանի անմեղ արեան վտակս ընդունայն,
Վէմքս այսոքիկ լավ լիզեր են իրր դազան։

digitised by A.R.A.R.@

Միտս իմ բերեալ յիշեմ ես մի կարաւան,
Որ ի Պօլսոյ վերադարձեալ գայր ի Վան.
Խղճալիքն երբ եկեալ Հասին յայս քուայն,
Ելուզակաց սրովն ամէնքն մահացան..:

Մեր կարաւան սոյն սա դիպուածս բերեր միտ,
Սաստիկ վախէն ամէնիս ևս նեռէ սիրտ.
Կայր ոչ դէմք մի՝ որ ցոյց տայր մեզ քաղցր ժպիտ,
Ո՜հ դեղնատեալ գոյն մեռելի կրէր ճիշտ:

Աղերս արկեալ խնդրեմք մեր տուրբ յԱրարչէն,
Որ պահէ զմեզ անփորձ ճիւաղ գողերէն.
Միջնորդ արինք առ ինքն սրբոց Ղուկս ամէն,
Զի փրկէ զմեզ յայս մահամերձ վտանգէն:

Մինչև անցաք յայս տխուր դաշտն պժգալի,
Շատ երկիւղէն կէս մարդ դարձաք իրաւի.
Բիւր փառս Անուանդ կերտող երկնի և երկրի,
Որ չար գողոց չթողեր առնել մեզ դերի:

Յետ դիպուածոյս ողջունեցաք մեք Մանծկերտ,
Եւ նա որպէս ընդդրկեաց զմեզ սիրով սերտ.
Ապահունեան է սա մի հին ձեռակերտ,
Որ դրեր հիմն մեր Մանաւազ նահապետ:

Էր սա երբեմն ճոխ և պայծառ անուանի,
Ի մարդաշատ քաղաքս Հայոց աշխարհի.
Կաթուղիկոսք և քաջ իշխանք մեզ աստի,
Այո՛ լեալ են ինպէս ի գիրս կայ յայտնի:

Աշխարհակալ Տուղրիլ Պարսից խիստ արքայն,
Նախանձեալ է այս քաղաքի ճոխ անուան.
Ուստի բերեր իւր հետ շատ զօրք և բարբան,
Բայց ամօթով ետ դարձեալ է ձեռնունայն:



digitised by A.R.A.R.@

Գաղղիացւոյն գովեմ ես ասա քաջ Հանճար,
Որ մեքենայն Հրով այրեր չարաչար.
Ազատութեան Մանծկերտին լեալ է պատճառ,
Եւ բնակչաց յայտնի կացեր բարերար։
Յետ Տուղրիլայ եղբայր Նորին Ալփասլան,
Նստաւ արքայ և արշաւեաց Հայաստան.
Եկեալ տիրեաց Մանազկերտի նոյն ժամայն,
Եւ զիւր եղբօրն ելուծ վրէժն պարտութեան։
Ռամանոս կայսր՝ որ Դիոժէն ևս կոչի,
Յետ սուղ ամաց՝ Ալփասլանէն զկնի,
Տիրապետեալ սոյն քաղաքին տէր լինի,
Ըստ պատմութեան տէր Կիրակոս Հայ վիպի։
Իմաստասէր Տէր Յովհաննէսն Օձնեցի,
Բարեացապարտ մեծ Հայրապետ մերս Ազգի,
Սա մինչ նստէր յԱթոռն Սրբոյն Գրիգորի,
Բարգաւաճէր զԱթոռն և զԱզգ լի ու լի։
Առնէր ժողով ի սոյն քաղաք Մանազկերտ,
Ի հարց սրբոց նոյն մեծիմաստ Հօտապետ.
Սակս հերձուածոյն Քաղկեդոնի՝ որոյ յետ,
Բազումք յանդէտս թիւրեալ էին մերթ ընդ մերթ։
Ծանոյց Հօտին Մանազկերտի հարցն վճիռ,
Որ օտարաց չլինին բանից ունկընդիր.
Մերժեն ոօմարն մարդադաւան անպէտ գիր,
Որ միայն Եզրն գտեալ էր զայն անբաժիր։
Այս մեծ քաղաքն՝ որ երբեմն էր անուանի,
Երթևեկիցն այժմ իբրև գիւղ տեսանի.
Վաթառնի չափ Հազիւ տուն կան ի միջի,
Յորոց փոքր մասն միայն Հայոց են որդի։

digitised by A.R.A.R.@

Հին շինուածեանց բեկորք սորին ցիրուցան,
Նկատողաց աչաց լինին յանդիման.
Այսու դիպողն վճռէ ինձ պէս նոյն ժամայն,
Թէ լեալ է սա երբեմն քաղաք շահաստան։
Մեծ Եփրատէս որ է վտակ Ադինայ,
Հուպ Մանծկերտիս գտեր զչուն իւր գնայ.
Որոյ վերայ մի հոյակապ կամուրջ կայ,
Եւ իւր կամարք տասն և ութ հատ են ահա։
Մեղք հազար որ անցեալ տարիք քիւրտ իշխան,
Վայրենամիտ չար Ռըզկոն անպիտան,
Սոյն կամուրջի երկու կամարն անխիղճն այն,
Քակեաց՝ որ զօրք թուրքաց գան ոչ յիւր վրան։
Այնուհետև կայ խարխալեալ և աւեր,
Եւ ուղղորդաց չէ բնաւին օգտաբեր.
Մի նորոգիչ չերևեցաւ ցայժմիկ դեռ,
Որ կազդուրման սորին փութով պարզէր ձեռ։
Աւաղ մեր հարց այս հոյակապ հնութիւն,
Որ յօշատիչ դարուց մնաց աննկուն,
Ո՜հ մեր օրով վերոյիշեալ տմարդուոյն,
Չար բաղձանօք խորտակեցաւ գոգ իսկոյն։
Գիշեր Մանծկերտ լուսացուցաք ապահով,
Չի դաժան լուք եկին իսկի ոչ մեր քով.
Յարշալուսին՝ վերջի քառորդ լուսանկով,
Զուն ձեռք առաք զմեղ Անեղին յանձնելով։
Հասաք առ ափն օժանդակին Եփրատայ,
Որ է կայտառ վազկան գետակ մի ահա.
Սա Մանծկերտին հուպ ընթանայ գիրկս նորա,
Եւ յաւելու զյորդութիւն Մուրատայ։

digitised by A.R.A.R.@

Զինք շէնքեցաք բնաւ երկիւղ չկրելով,
Զի ունի մի քարեայ կամուրջ ապահով.
Դէպի Սիրատ յառաջանամք ծանր կերպով,
Եւ լի եմք ահ նոյն խրոխտի ահ դողով։
Հանդարտ ճեմիւք հասաք յեզր ճոխ Սիրատայ,
Որ ծովացեալ դարիւ դարիւ ընթանայ.
Իւր լայնադարձ պտոյտս եթէ ոք տեսնայ,
Անշուշտ պիտի լեզապատառ լեալ սոսկայ։
Դիտէ զընթացս սէգ գետին մեր կարաւան,
Եւ ներկայէ զմահ իւր աչաց յանդիման.
Աշէ զյորձանս՝ որք առնեն վազս ման ի ման,
Տարակուսեալ չերաշխէր իւր փրկութեան։
Նա մանաւանդ իւրաքանչիւր ոք իսկոյն,
Տէր Մարտիրոս Հօր միտ բերեր պատմութիւն.
Թէ որպէս նա՝ ընդ Ղազարու բարեւնայն,
Կարնոյ դարձին՝ որս եղեր է այս գետոյն։
Այս և սորա պէս չար դիպուածս կարաւան,
Ցուշ ածելով կայ ի մեծի վարանման.
Վտահ է ոչ հեծնել քալակն անպիտան,
Որ հրաւիրակ է գրէթէ լոկ մահուան։
Այժմ ցաւ ի սիրտ Ռզկոյի յիշատակ,
Անիծանէ ամենայն ոք համարձակ.
Թէ էր արար գետոյս կամուրջն աւերակ,
Որ այժմ կրեն խեղճ ուղևորք շատ վտանգ։
Ինչ և իցէ զմեզ Անեղին յանձնեցաք,
Մեր մանար մունար քալակ տարեալ դիզեցաք.
Նստեալ ի նա անքայլ Սիրատն ճեղքեցաք,
Միւս յափն ելեալ Փրկողին փառս ձօնեցաք։

digitised by A.R.A.R.@

Վերջի անգամ գետի պաղ ջուր խմելով,
Մեր զարտասուս խառնեցաք հետ թանալով.
Նուիրական իւր սահմանաց կաց բարով,
Տալով զատուանք ի նմանէ ողբալով։
Հանդերձեցաք գնալ ի գիւղն Նորատին,
Որ է շինիցն Ապահունեաց գաւառին.
Մօտ էր ուղին՝ հասաք զկնի կէսօրին,
Եւ մուռացաք վիշտ՝ ցաւ չուոյն գլխովին։
Գեղի իշխան զմեզ տարաւ յիւրեան տուն,
Բերաւ ուտեստ մեզ տաք փիլաւ և մածուն.
Յագեցաք ոչ հիւրընկալիս ջուխտ որդւոյն,
Խօսեց սրտանց մեր Ամիրխան օրհնութիւն։
«Ապրին ասաց այս պարմանիք պատուական,
«Որ բերեն փառս ձեր ցեղին և ազգութեան.
«Քեզ պէս լինին երթևեկիցն ապատան,
«Եւ խնամեն զմեզ պէս օտարս յաւիտեան։
«Թող պահէ Տէր սոքա քեզ ցուպ ծերութեան,
«Որդւովք թոռամբք ներկայ լինին քոյդ մահուան.
«Հողդ հողոյ տան՝ ուղարկաւոր բազմութեան,
«Ձոխ հացկերոյթ տալով մնան անսասան։
Գիշեր լուսի փոխարկելէն զկնի,
Մեր կարաւան Նորատինէն անջատի.
Ամենայն ոք իւր բեռն բարձեր նատեր ձի,
Կուզէ երթալ Կարաչօպան ուղղակի։
Դէմ եղեալ եմք երթամք ահա ի նոյն գեղ,
Հայր որդւոյ պէս ամէնքս սիրով միատեղ.
Քաղցր արեգի մատաղ ճաճանչք ինչ շքեղ,
Սա խիտ ամպոյն ներգործեալ են գիւրեանց գեղ։

digitised by A.R.A.R.@

Ժամ տասնի մօտ Կարաչօպան Հայ շինին,
Նուիրեցաք սիրոյ ողջոյն մեր նախկին.
Մի գիշեր անդ կեանս անցուցաք խմբովին,
Սպասելով մինչ մանկանայ ծեր արփին։

Ի պատիւ Տեառն սոյն գիւղի Հայ շինական,
Հիւրընկալեալ մեզ ափոփեաց քան զարժանն.
«Պանտուխտ հէգ էք ասէին մեզ միաբան,
«Մեր պարտն է որ զձեզ պահպանեմք անխափան։

«Զգեր էք դուք ձեր մայր՝ զաւակն՝ ամուսին,
«Քոյր ու եղբայր՝ սերտ բարեկամք գլխովին.
«Յօտարութիւն դիմէք աւծղ ձեր բախտին,
«Տէր տեա՛ս, զթա՛ սոյն ողբալեաց վիճակին։

«Անտանելի է ձեր ներկայ կացութիւն,
«Ո՞վ կարող է թողուլ զաւակ՝ կին և տուն.
«Ի մէնջ թէ ոք՝ օր մի չտեսնայ դէմս որդւոյն,
«Ի գիր չառուեր յայն ժամ նորա թախծութիւն։

«Ապա ի՞նչպէս դուք անտարբեր շատ տարի,
«Երթեալ մաշիք ի մէջ օտար աշխարհի.
«Զայս կերպ ընթացս չբռներ մի մարդ մտացի,
«Այլ առնէ նա՝ որ ունի խելք շոշորդի։

«Քանի՛ անգամ դուք պիտի գայք յայս կենցաղ,
«Որ չէք ուզեր շահուիլ ձեր տեղն անզբաղ.
«Մեզ աշեցէք որպէս ապրեմք աստ խաղաղ,
«Թէ տնտեսէք ձեր գործն ի մէնջ ուսնիք վաղ։

«Թքէք յերես շռայլութեան՝ ծուլութեան,
«Կեր խումի մէջ պարկեշտ կացէք յաւիտեան.
«Աշխատութեան եթէ տէր տաք միաբան,
«Ցայնժամ գիտեմք ի ձէնջ ոչ ոք ձգէ վ.ան։

digitised by A.R.A.R.@

«Բայց քանի որ էք ծոյլ՝ հպարտ և շռայլ,
«Սիրէք պարապ Վան-Տոսպայ մէջ միշտ ֆռալ.
«Դեռ իբր գինով չէք սթափեր՝ կայք թմբրեալ,
«Ձեզ կայ մնայ այս դառն վիճակ անիծեալ։

Իրաւացի՝ այլ սիրտ խոցող զայս խրատ,
Մինչ գեղացւոցն լսէր ի մէջ ամէն մարդ,
Զայն հերքելու ի ձեռին մեր կայր ոչ փաստ,
Ո՜հ բերանխուփ կարմրելով կացաք անդ։

Խիստ թափանցեաց մեզ այս եղբարցն ազդեւ բան,
Եւ ի մեծ հոգս ընկղմեցաւ կարաւան.
Ուստի Հանդէպ Տեառն ուխտեցին միաբան,
Հեղ մի այլ ևս չերթալ Պոլիսն ընդունայն։

Երբ էնն տայ մեզ յաջող գործ և դիւրութիւն,
Փութով դառնամք յօտարութեանց ի մեր տուն.
Մնացեալ զաւուրս մեր զաւակաց հետ սիրուն,
Կատարելով տամք Տարոդին գոհութիւն։

Դաշնաթուղթ մի գրեաց յայս միտ մեր Ղազար,
Զայն զմռելով հաստատեցին հաւատար.
Զի վերջ զիւր ուխտն ո՛վ որ գժրէ անպատճառ,
Ձեռագրովն իւր նա թո՛ղ դատուի չարաչար։

Ի սոյն նաև մեր ուղեկից Ծեր Պատուր,
Առաւ ի ձեռն իւր եղերկու մեծ չնկուռ.
Զարկաւ՝ երգեց հին քանի երգս դէմս տխուր,
Բայց Սրբիկի շինած մեր սիրտ խոթեց թուր։

Ճիշտ է այո՛ ի մէնջ բազումք իբր Վարդան,
Մինչ պանդխտիմք, փոյթ մոռանամք մեր պայման.
Զյիշեմք այլ ևս կին և զորդիս սիրական,
Գութ ծնողաց՝ եղբարց և քերցս լաց կական։

digitised by A.R.A.R.@

Մոռանալով մտաց հանեմք զնոսա,
Առնելով զնոյնս յոլով վշտաց ենթակայ.
Երկու տող գիր տարին հեղ մի ՝ի նոցա,
Դժկամակիմք գրել՝ առ այս սիրտ տոկայ։
Դժբախտ կնոջն իրաւացի է բողոք,
Առ այս երբէք ճիկ կարող չէ հանել ոք.
Ուստի դիպի նոցա սա կերպ ցաւ՝ մորմոք,
Ի մէնջ՝ որք կամք անկարեկից և անհոգ։
Տառապելոյն լալով երգեալ տխուր բան,
Իւր իսկ ոճով սատ զետեղելս է արժան.
Որ ամէն ոք ուշի ուշով կարդայ զայն,
Վերջ առնէ ճիշտ այր՝ կնոջ մէջ դատաստան։
Մաշուէմ իրիկս մկայ տոր ի,
Ո՞ր խանի քունջ կծկուերի.
Ուր խեղճ կնիկ միտ կբիրի,
Թէ ճիփճիփ ակ՝ զիկ մոռցերի։
Գիշեր ցերէկ ես ինքն ապով,
Կուլամ կուրցաւ աչքերս լալով.
Որբէվէրու պէս նատելով,
Կընցուցեմ օրս ակ ու ցաւով։
Տարին ընցաւ թուղթ չի գրե,
Լոկ բարևէն զրկերի մե.
Ի՞նչ չար բերան զիկ անիծե,
Որ Վարդան ուր Սրբիկ մոռցե։
Առածու սէր սիրես Վարդան,
Դարցի՝ արե Վան վէր քո տան.
Խեղճ Սրբիկիդ լաց ու կական,
Սրբի ըստեփ դիր գերեզման։

digitised by A.R.A.R.@

Թէ որ չիգաս ես ցաւերով,
Կմեռնեմ, ծածկեն սև հողերով.
Ի՞նչ շահ, որ դու առանց Սրբիկ,
Խեղճ կէլնես քո ճիժ պժերով։
Նոյն երեկոյ մեր վշտալի կարավան,
Անկաւ ի մէջ Ովկիանոս նեղութեան.
Կերպ կերպ հոգ՝ վիշտ զինքն լկեցին բաւական,
Մինչև եկաւ քուն՝ և վշտացն ետ վախճան։
Յառաւօտեան զկնի ծագմանն արևու,
Թողաք իւր տեղ՝ Ովհովիւ գիւղն լու ի լու.
Տէր յուսալով սրտապնդեալ անկաք չու,
Եւ միտք ունիմք երթալ մնալ ի Կօղլու։
Յերեկոյեան ժամ տան ու մէկն էր հասէր,
Երբ Կօղլու գեղջն նկատեցաք զպատկեր.
Հայ պարմանուոյ մի եղաք հիւր անդ գիշեր,
Մինչ կարապետ լուսոյն վառեաց զիւր լապտեր։
Նշմարեցաք թէ ոչ նորա սուրբ տիպար,
Քուն խլեցաք ի քաց աչաց մեր իսպառ.
Լուացուելով եղաք զուարթ և կայտառ,
Հանդերձեցաք գնալ Քիւլլու անպատճառ։
Ընկերացս հետ արշալուսի զեփիւռով,
Զուն ձեռք առաք յոյս մեր յԱստուած դնելով.
Ծերուկ լուսին լապտեր էր մեզ իւր լուսով,
Որով լեալ եմք մեք խնդութեան չատագով։
Ուստի ի մէնջ ոմանք ձայնիւ երգեն տաղ,
Եւ ոմանք ևս տաճիկ հնչմամբ կանչեն խաղ.
Այլ ոմն պատմէ զիւրոյ վարուց զկենցաղ,
Միւս ոմն պարէ՝ շարժէ բազմաց նա ծիծաղ։

digitised by A.R.A.R.@

Մեր ծերունի Ամիրխան իւր նաեր ձին,
Գայ Հանդարտիկ մեր եռեէն առանձին։
Մշտամռունչ խօսէ հետ իւր Արարչին,
Դէմս իւր թրչեր է արտասուօք խղճալին։
Զիւր աղօթից գիտեմք Հանէ մեզ բաժին,
Ինչու նա մեր ցանկայ տեսնալ միշտ բարին.
Քանի անգամ Բարսեղին՝ իմձ՝ Ղազարին,
Բարոյական խրատ խօսէր ծերունին։
Նորա Համար անշուշտ գիտեմ որ նա մեր,
Յաղօթս իւր՝ զանուանս երբէք զանց չառներ.
Պաղատեա Հայր՝ ինչ լսէ քեզ Սիթեր,
Եւ չարին դէմ զմեզ կացուցէ անվեհեր,
Սովորութիւն է ծերունւոյս սեփհական,
Միշտ ժամերով առնել աղօթս անխափան.
Ծանօթ զոլով նորա բարի ընութեան,
Յայն պահ չխօսիմք՝ չլինի լինիմք իւր սատան։
Կամաց կամաց երկնից կանթեղք իւրեանց լոյս,
Հաւաքելով ծածկուեցան մի մի կոյս.
Զի արևու պայծառ ճաճանչք նորաբոյս,
Ողջ աստեղաց կողոպտեցին նուազ լոյս։
Արևն առաւ երկու ժամէն զկնի,
Մի պաղ աղբիւր ահա Հանդէպ մեզ լինի.
Մտածեր եմք թափել մնալ մօտ պիտի,
Մինչ կարտան քիչ մի խոնչից Հանդարտի։
Կանանչ մարգաց գիրկ բազմելով կերաք Հաց,
Եւ զոհութիւն տուաքեցաք առ Աստուած.
Զոյգ ժամու չափ արևուն դէմ շող կորած,
Սպասէաք մինչ ձիք զիւրեանց բարձին քաղց։

digitised by A.R.A.R.@

Մերձ յաղբերս էջ մի կարավան մեզ նման,
Որ ի Պոլսէն վերադարձեալ գնայր Վան.
Մինչ միմեանց Հանդիպեցաք տեսութեան,
Զմեզ գտաք ի մէջ բազում ցնծութեան։
Ի նոցանէ բազում ծանօթք մեզ դիպան,
Որք են Հաւզոր, Դէլիսեղդ, Տօռիկ, Պնայեան.
Պճիկ, Տեղծուն, Վռանի լաճ, Թառկուլեան,
Հարիսակեր, Ճաշպռութոր, և Հողշաշեան։
Պնտուկէրէց, Պէսոբոզք, Մռտիկ, Փուճգեօզեան,
Տլմուխ Սիմոն, Պայլի Ջուրն, և Փոխարարեան.
Գեառգեառ, Կարսեան, Թօխմախ, Թուլէն, Պէշայեան,
Տէր Բարսեղեան, Էշկուտոզն, և Կանտօյեան։
Առ ամն Ջրոյն բազմեալ էաք միաբան,
Միմեանց Հարցման՝ տայաք զիւր ճիշտ պատասխան.
Մեք ի Պոլսոյ՝ նոքա Վանայ վերայ բան,
Ինչ որ պարտն էր Հարցեալ ուսաք զամենայն։
Մեղք Հազար որ՝ եհաս ժամն մեր բաժանման,
Նոքա ուրախ՝ քայց մեք ի խոր տրտմութեան.
Գրկախառնեալ տուաք Հրաժեշտ վերջնական,
Զուն ձեռք առաք յԱստուած եղեալ տպաստան։
Նստեր Հանգիստ իւրաքանչիւր ոք յիւր ձին,
Ի տես երթայ քաղցր յուսով Մայր Արքային.
Զորս ժամէն վերջ նորա քնքուշ եղերքին,
Ընձմամբ սիրոյ Համբոյր տուաք ջերմագին։
Իւր զով ջրով մեր պաք՝ ծարաւ մերժեցաք,
Մէջ մտնելով մի քառորդ չափ լողացաք.
Այտու խոնչ՝ շողն ի մէնջ ի լաց մղեցաք,
Եւ վաղընդվոյթ Հանգստութիւն զգեցաք։

digitised by A.R.A.R.@

Երբ խանչ ծարաւ և նեղութիւն կարաւան,
Ի բաց դրաւ, և մոռացաւ զամենայն,
Ի նոյն ժամու մարգասիրի տուրք Անուան,
Փղձկեալ սրտիւ մնաց այո՛ զոհաբան։

Անտ մեր Բարսեղ եղանակաւ թախծագին,
Գողտրիկ ձայնիւ երգեաց տաղ Մայր Արաքին.
Ողջ ունկընդիրք տաք տաք կաթիլս թափեցին,
Երբ նոյն տաղի ներքին իմաստն լսեցին։

Մեր Մայր Երասխ գղխի Կարնոյ լեռներէն,
Գայ և գնայ ասոի Շիրակն ուխտէն.
Հիւր ընդունի գիրկն Ախուրեան իւր անդրէն,
Նոքաւ Հանդերձ դիմէ Գառնի մեղմօրէն։

Անդ ստանայ սէգ Ազատ գետն ընկեր իւր,
Ապա Հրազդան Քասաղ և այլքն ևս գան հիւր.
Նախչուանայ, Սիւնեաց, Գողթան գետոց ջուր,
Հետ Տղմուտին առեալ գնայ դէպի Կուր։

Յուռեաց աշխարհ՝ մերձ ի Զաւաթ միանան,
Սոյն երկու գետ՝ և յորդելով ծովանան.
Անջատելով դարձեալ միմեանց համբոյր տան,
Այսու կազմեն զիւրեանց կղզի ճոխ Սալեան։

Կղզոյս համար պատմէ Սարգիս Զալալեան,
Թէ տասն երկու գիւղ ունի մէջն բազմական.
Ողջ պարսիկ են՝ զոյգ հազար կայ գերդաստան,
Թէև օդ ծանր՝ բայց ինքն է յոյժ շահաստան։

Ապա Հեզիկ ընթացս առեալ ճեմելով,
Կասպիական կամ Վրկանայ դիմեն ծով.
Լցուցանեն զանկուշտին քաղց և զով,
Անբաժ կերպով հաստատ մնան նորա քով։

digitised by A.R.A.R.@

Երբեմն յայս գետ՝ աշխարհաւեր Շահ Աբաս,
Մինչդեռ բանակն Զգալօղլուն նմա հաս,
Հրաման արար զօրացն՝ որ ողջ գերեալ Հայս,
Ականթօթափ անցուցանեն անապատ։

Աւազ քազումք իբրև ծաղիկս նռնենեաց,
Ընդ անցանելն ջուր թափեցան ի նեղչաց։
Քանի որդիք և օրիորդք սրբակեաց,
Անգիւտ կորեան՝ և թողին սուգ հարց և մարց։

Քանի քանի նոր լծակիցք սիրական,
Որք գրկախառն կեանս վարէին անբաժան.
Ո՜հ ի գերչաց խպառ միմեանց զատեցան,
Փեսայք յերկինս, հարսունքն ի խոր Խուժանան։

Ո՞րչափ անմեղ փոքր երախայք կամ թոռնկեր,
Որք հրեշտակի ունէին տիպ և պատկեր,
Ի գիրկս ծնողաց յՆրասխին ծոց մնացեր,
Իբրև ծաղիկ խորշակահար թառամեր։

Որքան այր՝ կին, կամ պառաւեալ մամիկներ,
Եւ որչափ ևս փորձառու ծերք ձիւնահեր,
Մինչ ի զգուանս որդւոց կային անվեհեր,
Վերջի շնչիկս իւրեանց ի գետս են թողեր։

Անէծք հազար նոյն քարասիրտ ամարդուոյն,
Որ զայսպիսի մտաբերեաց չարութիւն.
Զարար ընաւ մեր դժբախտ հարց զթութիւն,
Այլ իբրև իժ թափեաց առ նոյնս զիւր խակ թոյն։

Երկինք, ընդէր ատ մնացիր անտարբեր,
Եւ փակեցիր պատեանիդ մէջ քոյդ սուսեր.
Սուրբ վրիժաւոր զայս գազան ազգն շաղղակեր,
Անմիջապէս էր չարարէր վար ի վեր։

digitised by A.R.A.R.@

Վասն էր թողեր այսչափ անմեղ քրիստոնեայ,
Սրտաճմլիկ տառապանաց ենթակայ.
Անգթաբար բարձին զարևս անխնայ,
Անտէր ճեռոց բարեպաշտին Թորգոմայ։

Էր չիշեցիր ջանս և վաստակս Հարց մերոց,
Թադէի և Բարդուղիմեայ ընտրելոց.
Թէ որպէս նոյնք զայդին Հայկայ ի փշոց,
Մաքրեալ մեռան՝ կացին անբաժ նորա ծոց։

Վիշտս դառնակիրս անտեսեցեր Հօրն մեծի,
Մերս բազմերախտ Լուսաւորչին Գրիգորի.
Որ տասն և հինգ տարի կացեալ ի գբի,
Խնդրէր բարիս մեր Հայաստան աշխարհի։

Այս է բարիս՝ որ հէգ սրդւոցն դիպեցան,
Սրով՝ ջրով ճեռամբ Պարսից ջնջեցան.
Բազումք ի սուրբ հաւատոցն զրկեցան,
Շատք ևս ի սփիւռս երկրի եղէն ցիր ու ցան։

Արիստակեայ՝ Վրդանէսի և Ցուսկան,
Գրիգորիսին, Դանիէլի միաբան.
Բարդ բարդ աղօթս չելին ի քո յանդիման,
Որք սուրբ խնամոցդ զՀայս արարին ապաստան։

Ազնուական մեծի սուրբ առն Ներսէսի,
Եւ Սահակայ տեսանողին Պարթևի.
Սուրբ Ղևոնդեանց և Վարդանեանց քաջ զնդի,
Ո՞հ խնդրուածս էր չեղէն քեզ լսելի։

Հաճոյ չեղէ՞ն քեզ մրմունջք Հայ մաղթանաց,
Հայրապետաց, քահանայից, կուսանաց.
Արանց կանանց, եկեղեցւոյ սուրբ մանկանց,
Որ թոյլ եառար տիրել մեզ խիստ օտարաց։

digitised by A.R.A.R.@

Մինթէ հէգ Հայն քան զՊարսիկն և Հաքար,
Ամբարիշտ է և ունի յոյժ վարս վաթար.
Էր վասն նոքա կան ահարկու և պայծառ,
Իսկ մեք նոցա տրուկ՝ գերի չարաչար։
Կուզեմ գոյել զայս հոգեմաշ պատմութիւն,
Որ խոր սգով և թախծութեամբ է լեցուն.
Թերևս առ այս թերթս ընթերցող Տուապեցոյն,
Դատէ թէ մեզ բաւ է առթես տրտմութիւն։
Մեր կարաւան վերջի բարեն Երասխաց,
Հանդերձեալ է մատուցանել իւրն ահա.
Ամենայն ոք լալով համբոյր ափանց տայ,
Զուրն ըմպելով կարօտն առաւ տի երթայ։
Դեռ ձի չնատեալ պաղատեցին Անեղին,
Որ նպատակս իւրեանց օրհնէ ի բարին.
Երթան Բիւզանդ, յաջողութեամբ վերատին,
Գան ու խմեն վճիտ Ջուր մայր Արաքսին։
Փառք յաւիտեանս ետ աղօթից մեր վախճան,
Նատեալ ի ձիս գնամք Քիւլլու միաբան.
Ճանապարհին կանչեմք խաղ, տաղ, շարական,
Եւ լերինք տան փոյթ մեր երգոց պատասխան։
Քիւլլուն բացեր զիւր գիրկն՝ կանչէ զմեզ ահա,
Ուրախութեամբ ի ծոց դիմեմք մեք նորա.
Հրամայեցէք օրս ինձ հիւր էք ասէ նա,
Գլխոյս վերայ պահպանելու ձեզ տեղ կայ։
Հասաք նոյն շէն և մնացաք անդ գիշեր,
Երբեմն Հայ գիւղ՝ բայց այժմ քրդաց ձեռն անցեր.
Չի Ռուսիոյ հին կլուխէն՝ որ ի վեր,
Ուրիշ Հայոց պէս յԱրարատն են գաղթեր.

digitised by A.R.A.R.@

Այժմ նոցա տեղ երտունի մօտ գերդաստան,
Սոյն սա Փիլլուունի կարծեմ նստրական.
Այլ քրդաց պէս դան ոչ սոքա լեռներ ման,
Միշտ մնան զեղ՝ քանզի առնեն վար ու ցան։
Գիշեր մի ատ օր անցոյց մեր կարաւան,
Եւ ի քրդաց եռես նա սէր բաւական.
Բայց ոչ Հայոց պէս՝ զի նորա է միայն,
Հիւր ընդունելն՝ սովորութիւն սեփհական։
Ներոպացի ճանապարհորդքն զիմ այս բան,
Ճիշտ հաստատեն՝ որք եկեալ են Հայաստան.
Փրկչին մերոյ «օտար էի» ախորժ ձայն,
Հայն սերտելով՝ գործնականաւ յարդէ զայն։
Մի պանդուխտ թէ դիմէ առ ինքն թոռ՝ չտար,
Որ զեղի մէջն ատտ անդ գիշայ չարաչար.
Այլ հրաւիրէ յիւր բնակարան սիրտ յօժար,
Զինքն շահելով լինի խղճոյն մխիթար։
Մինչ առաւօտ մեք զատուէաք Փիլլուէն,
Դեռ արեգակն չէր արթնցեր յիւր քնէն.
Զօրանալով արշալուսի զեփիւռէն,
զՆրթեւայ չուն կարճեմք ահա մեղմօրէն։
Բայց ինչ օգուտ երեկոյի միջոցին,
Մեզ խոչ եղև Նրթեւայ լեռն գլխովին.
Զի ամպերէն գլուխն անցուցեր է անդին,
Ուստի խպտառ կատեալ մնաց մարդ և ձին։
Ինչ և իցէ շատ նեղութեամբ չարաչար,
Հազիւ ուրեմն ողջունեցաք զիւր կատար.
Եղիթայք բազում կայտառ լերանց, ձոր՝ անտառ,
Ի զննին մեզ կացուցան անդ շար առ շար։

digitised by A.R.A.R.@

Ի մէջ նոցա մինն էր միայն գերագոյն,
Որ գիտեա թէ երկնից սիւն էր հաստատուն.
Վարդավառի տօթին անգամ հերք ողջոյն,
Ճերմակ պսակ հիւսեալ էին իւր գլխոյն։
Ի մէնջ թէև բացակայ է շատ օրով,
Եւ պարփակուեր կէսէն ի հետ ամպերով.
Բայց իւր գագաթն արեգական ճաճանչով,
Իբր ադամանդ բոցափայլի յոյժ սիրով։
Գիտեա՞ որն է. այս պարթև լեառն պատուական,
Է նա Մասիք՝ որ մականուն տան Ցիպան.
Տուրուբերան նահանգ թէև շատ սար կան,
Բայց սա նոցին է թագաւորն և իշխան։
Ցարևմտեան Հիւսիս կուսէն մեր Վանայ,
Աղի ծովու ափանց սա միշտ համբոյր տայ.
Ակնապարար և գեղեցիկ պէս չկայ,
Անշուշտ դիտողն զայն Կերտողին փառս կուտայ։
Փղձկեալ սրտիւ մնաս բարեաւ միաբան,
Մատոյց լալով սատ Մասիքին կարաւան.
Ուրթն օր է ճիշտ՝ որ բաղդն կորզեց ի մէնջ Վան,
Մինչ ցարդ սա մեզ միխիթար էր միմիայն։
Ասացաք իւր, ա՛ռ մեր զողջոյն անձկայրեաց,
Տա՛ր և մատո՛ մեր դարաբախդ ընտանեաց.
Թո՛ղ աղօթեն բազկատարած առ Աստուած,
Ի՞նչ լսէ և արասցէ մեզ մի այց։
Մեզ և նոցա մէջ միջնորդ ես դու միայն,
Զի կամք հանդէպդ մեք սատ, և մերք որ ի Վան.
Սա՛ երհաս անփորձ յՆրթև կարաւան,
Տա՛ր զովվդ լուրս՝ մեր ընտանեաց թող խնդան։



digitised by A.R.A.R.@

Սէգ Ցիպանայ զայն յանձնարար մեր տալով,
Լեռնէն ի վար սկսաք գալ հոգալով.
Զորն ի ջաք ոչ չոգաք մի պաղ յաղբեր քով,
Որ ամենիս տարաւ ծարաւն անդ շուտով։

Թողաք զաղբիւրն այն մշտահոս ի տեղն իւր,
Նստեալ ի ձիս երթամք ահա յԵրթև հիւր.
Մինչ արևուն կտրէր ճաճանչս լուսափիւռ,
Ցայնժամ նոյն շէն մեզ նոր դաղար տայր և դիւր։

Ցերեկոյին սոյն Հայ գիւղի շինական,
Ըստ իւր կարեացն հիւրասիրեաց կարական.
Թէ և պիտոյս մեր փողով եւ զամենայն,
Բայց ներելի համարեցաք նոցա զայն։

Զի ի վերայ ուղին գոլով սոյն սա գեղ,
Գան Հայ, Տաճիկ, Ասուրի՝ քիւրտ և այլ ցեղ.
Օր մի լինին հիւր անպատճառ նոյնք յայս տեղ,
Ուստի փողով բան ծախելն չէ սոցա մեղ։

Առաւօտեան նախ քան զծնունդն արեգին,
Հանդերձեցաք հովով գնալ ի Կարին.
Երեկուան պէս չունիմք լեռ խոչ մեզ ուղին,
Այլ այս աւուր մեր չուն յարթ է և դիւրին։

Կէսօրէն վերջ հասաք քաղաք խոմբովին,
Մատուցաք Փառս մեր Արարիչ Ստեղծողին.
Որ անվնաս մեր դէմ եղեալ կէս ուղին,
Զմեզ պահելով ամօթ արար թշնամին։

Ցուսամք եթէ սա պէս շնորհիւ Բարձրելոյն,
Անվիշտ պիտի աւարտեմք մեր պակաս չուն.
Ցորձանք գետոցն, ահն և երկիւղն ըիրտ գողոյն,
Զեմք կարծեր որ առթել տան մեզ նեղութիւն։

digitised by A.R.A.R.@

Զի առեր է Փրկչէն զայս դաս կարական,
Թէ Հաւատով խնդրողն չմնար ձեռն ունայն.
Խնդիրս նորին իւր բաղձանաց համաձայն,
Ասէ Հայրն իմ, փոյթ կատարէ զամենայն։
Ուստի խնդրեմք ի նմէ Հաւատով,
Որ ի չու անդր զմեզ պահեսցէ անվրդով.
Պօլիս գործոց յաջողութիւն մեր տալով,
Յետ զոյգ Հնձոց դարձուցանէ Վան փութով։
Հայոց մեծաց Կարին քաղաք պատուական,
Սիրեմ գրել ի պատիւ քո զոյգ տող բան.
Ո՛չ լիովին, այլ համառօտ միմեայն,
Սակայն խնդրեմ, որ չվշտանաս յիմ վրան։
Քանզի եմ ես մի թերակիրթ պատանի,
Անուք, օտար կարեկցութեան արժանի.
Զուրկ ի ծնողաց, կամ ո՛հ յայս մուրթ պանդոկի,
Ի՞նչ սրտով զքեզ տեղագրեմ լի ու լի։
Ուստի առնեմ նկարագիրդ համառօտ,
Զունիմ միջոց, զի գնամք վաղն առաւօտ.
Արդէն դու մեր նորուս գրչին չես կարօտ,
Ինչու ունիս հմուտ հանճարս բաւ քո մօտ։
Քեզ շիներ են Բարձր Հայոց գիրկն անուանի,
Առողջ օդդ և թեթև ջուրդ է դովելի.
Բերս ունիս դու ցորեան, ոչխար, նժոյգ ձի,
Լերինք քո տան ցեղ ցեղ ծաղկունս հոտով լի։
Ընութիւն թէ և քեզ մրգատու ծառերէն,
Խիղճ չանելով կողոպտեր է համօրէն.
Բայց ի ժամու դու բերես ձեռդ զայնա ամէն,
Քեզ գրացի և հպատակ Թորթումէն։

digitised by A.R.A.R.@

Ասիոյ մէջ վաճառաշահ քեզ նման,
Քիչ կայ քաղաք, որ գայ գնայ կարաւան.
Ըստ բաւելոյն ունիս արհեստ զանազան,
Պայտ, և ապուխտ հասուցանես մինչ ի Վան։
Անուանի է քո կաղամբ և սերտ շողգամ,
Որ չափազանց ձօնէ երկիրն ամէ ամ.
Առանց եփել կուտուի, և տայ մրգի համ,
Գիտէ խաբել ազտիկ թոռունս նուաւ մամ։
Զմեռն սաստիկ ցուրտ լինի քո կլիման,
Նոյեմբերէն մինչև ապրել գոռգ լման.
Թէ Սողանլու սարի անտառն քո սահման,
Զաճէր, պիտի ցուրտ քեզ նեղեր անխափան։
Քաղաքիդ մէջ թանկագին է հնութիւն,
Զայնս ոչ տեսին աչք պատանի Տոսպեցւոյն.
Թէ և ունիս մզկիթ, պանդոկ յոյժ սիրուն,
Սակայն նոքա չեն հին դարուց շինութիւն։
Բնակիչքդ են երեք ազգէ բաղկացեալ,
Ցոյն ու տաճիկ, և Թորգոմայ ճեռք օրհնեալ.
Քանի են թիւս գերդաստանացն իմ չուսեալ,
Ուստի չգրելս ստոյ կաւոր եմ տեսեալ։
Կարծեմ ի գիրկդ կան մեր ազգէն հազար տուն,
Որ շոյելով պահեր ես քովդ հաստատուն.
Կանխաւ էին ստոյ նոքա շատ բազմութիւն,
Բայց ինչ օգուտ օտարք տարան զայնս ողջոյն։
Ներկայ Հայերն ի ծոցի քում յոյժ պայծառ,
Տեառն Աստուծոյ շիներ են մի ճոխ տաճար.
Որոյ նման Հայաստանի չիք յայլ վայր,
Այս քեզ, նոցա, պարծանս բերէ դարուց դար։

digitised by A.R.A.R.@

Միաբանից Աստուածածնի մատուռն սուրբ,
Որ հոյակապ եկեղեցւոյն է սա հուպ,
Ինչ հիւանդ որ խիստ ցաւոց մէջ կայ ի ծուփ,
Եթէ հոս գայ, ձեռաց պիտի ձգէ ցուպ։
Սորա դիմացն է Կուրապցու գերեզման,
Որ ի Մշոյ եկեալ առեր աստ վախճան.
Սա մանկութեանս մի ամ կացեր դէտ ի Վան,
Հազիւ հազ թէ երազի պէս յիշեմ զայն։
Մեր Ազգն ունի երեք հատ վանք քո սահման,
Որք ի նախնումն փառս առթէին հայ անուան.
Աւա՜ղ ներկայս կան ի դժբախտ դրութեան,
Վանզի չունին օրինաւոր միաբան։
Թէ Ազգն ուզէ բարեկարգել զայնս փութով,
Անմիջապէս պիտի ծաղկին Աստուծով.
Ինչու ունին բաւ թէմ հանդերձ հող ջրով,
Եւ գող քրդաց ճնշմանէն կան ապահով։
Քոյդ Վանուց մինն՝ որ մականուամբ է Կարմիր,
Հին դարուց մէջ համբաւ հաներ սիրալիր.
Դպրոց բացեր բարձր դիտութեանց յոյժ ընտիր,
Ինչպէս լուր տայ մեզ Աստղիկն վիպագիր։
Հարկաւ ելին ի նմանէ շատ բարուն,
Աստուածաշունչ գրոց հմուտ և գիտուն.
Անշուշտ գրեալ են ճառ, խրատ, մեկնութիւն,
Որ չեբեր մեզ ժամանակի հնութիւն։
Եկեղեցւոյ սիրոյն համար դար առ դար,
Ի քէն ելեալ են հայ վկայք յոյժ պայծառ.
Զանուանս նոցին՝ որ գիտակ եմ շար առ շար,
Աստ գծելով տամ դիտողին գաղափար։

digitised by A.R.A.R.@

Սահակ, Յովսէփ սուրբ հարազատք երկոքին,
Որք փայլէին անմեղ վարուք ծոյ քոյին.
Ձեռք հաքարու ակս ոսյա փորձ փորձեցին,
Թողուլ զՏէրն՝ և կալ հլու օտարին։

Անդ երջանիկ քաջ մարտիրոսք պատուական,
Հօրն և այլոց յորդորոզաց չլուան ձայն.
Այլ ժուժելով խոշտանգանաց զանազան,
Նահատակեալ յերկրէ յերկինս փոխեցան։

Զարիւնաներկ մարմինս նոցին ի տապան,
Ամփոփեալ են հարք մեր ուխտիւք քաղցրաձայն.
Մերձ ի մատուռն՝ որ անուանի Միքան,
Թէ հիւանդ ոք գայ՝ գտանէ զիւր դարման։

Սահակ Յովսէփ հայ վկայիցս զկնի,
Յանդիման մեզ հանդիսանայ ուղղակի.
Սուրբ Յորդանան նորահաւատ այլազգի,
Ըստ պատմութեան վիպագրաց մերս Ազգի։

Յետ հաւատոցն վասն Յիսուսի չարչարի,
Կրեալ տանջանս ազգի ազգի ցաւալի.
Ապա ի փառս Երրորդութեան Կատարի,
Եւ ի շիրիմս նահատակացն ամփոփի։

Մի քանի դար հայ նահատակք յետ սոցին,
Եղեալ են ոչ ինձ յայտնի չէ ի կարին.
Զյիշեմ հարուածս ատ անգութ Լանկթամուրին,
Եւ Դահմազին, որք շատ անմեղ մորթեցին.

Յետ Դահմազայ յաւուրս Մուրատ արքայի,
Վասն Յիսուսի արիանայ ի մարտի.
Պայծառ վկայն՝ սուրբ մարտիրոսն՝ մեծ արհի,
Տէր Յովհաննէս ըստ Տիրատուր նօտարի։

digitised by A.R.A.R.@

Ծնողք սրին ծնան զսա ի Խուտի,
Որ է Հայ գեղ Դարանաղեաց գաւառի.
Ի չափ հասեալ ատեաց զսերն աշխարհի,
Պարկեշտ վարուք բազմաց լեալէր սիրալի։
Հասեր ապա աստիճանի և շնորհաց,
Կուսակրօն բարուն կացեր բեմբասաց.
Վերջ դէտ լեալէ Կարնոյ և իւր վիճակաց,
Եւ խնամեր զհօտն Քրիստոսի։
Մինչդեռ շինէր տաճար սրբոյն Սարգսի,
Աշկալայ գեղջն՝ բանիւ Մուրատ արքայի.
Խուժան տաճկաց մոլեռանդից շեշտակի,
Զտանելով զայն մատնեն զանից և բանտի։
Հրաւիրեն զինքն թէ՝ «եկ անսա՛ կուրանի,
Եւ մի՛ մատներ զանձդ ի տանջանս սոսկալի».
Ասէ նոցա «ինչ դրեր էք ի մտի,
Կատարեցէք՝ զի ես զոհ եմ Քրիստոսի»։
Նայեցան որ չանսաց իւրեանց Համզման,
Վիշտ և լկանա տուին սրբոյն զանազան.
Վերջ խնդրեցին գատաւորէն փոյթ հրաման,
Թէ «տո՛ւր ասեն վճիռ սորա սպանման»։
Դատակնիք գատաւորէն երբ չառին,
Երանելին դարձեալ ազատ չբթողին.
Այլ իբր գազան շրջապատեալ խոցեցին,
Քարիւ սրով յերկինս առ Տէրն խրկեցին։
Կատարեցաւ սուրբ Հայրապետս պատուական,
Հազար քառասուն և մի, Հայոց թուական.
Մարմինն եդին սուրբ Միաբանքն ի տապան,
Ո՛ւր կան վկայքն Սահակ, Յովսէփ, Յորդանան։

digitised by A.R.A.R.@

Յետ Յովհաննու նահատակի ի Կարին,
Անմեղ վկայն՝ սուրբ Պաղտասար պատանին.
Ըստ պատմութեան Զաքարիա պուէտին,
Եւդոկիա բոյն Հայրենիքն էր տրին։
Բարի ծնողաց էր սա զաւակ սիրելի,
Տղայ տղայ կրթեալ յերկիւղն Յիսուսի.
Գայ ի Զմիւռին ընդ իւր տաճիկ վարպետի,
Կարել կօշիկս սակս առօրեայ ապրուստի։
Անդ պատանւոյն գլխահարկի հարկահան,
Այսէն շարժեալ հրաւէր կարդայ ուրացման.
Նա չանսալով բռնի մատնեն թլփատման.
Այնու իւր թէ թուրք արարին սուրբ վկայն։
Տաճիկ վարպետ երանելի պատանւոյն,
Մինչդեռ տեսաւ սոյա անզուսպ չարութիւն.
Ասէ որդի՛, արե՛կ դնա՛ դու ձեր տուն,
Հայ Ազգին հետ տո՛ւր Յիսուսին օրհնութիւն։
Ըստ խրատու բարեբարոյ վարպետին,
Յեւդոկիա դարձաւ անմեղ պատանին.
Դէպս ակամայ ծնողաց պատմէր լալագին,
Սիրտն ծեծելով աւա՜ղ կարդայր իւր բախտին։
Ըստ հրահանգի ծնողաց իւրոց նա կրկին,
Յէջմիածին դիմէր բոկոտն ցաւագին.
Ի վանօրայն երթայր մնայր առանձին,
Անդ զիւր հաւատս պաշտէր ազատ՝ ջերմագին։
Զաքարիա վարդապետ ոմն ի բերան,
Դաւթի Սաղմոսն՝ սիրով նմա դաս ետ զայն.
Երբ վարդապետն էառ ատի զվախճան,
Նա ևս եկեալ կօշիկս կարէր Յերևան։

digitised by A.R.A.R.@

Յաւուր միում մի ոմն տաճիկ խաբեբայ,
Պաղտասարին իբր թոխադցի ձևանայ.
Ծնողքդ ասէ քեզ սպասեն աներկբայ,
Հետս եկ երթամք, և զօրհնութիւնս ա՛ռ նոցա։
Համոզուելով երանելին նոյն չարին,
Ընդ նմա եկն յԵրևանայ մինչ Կարին,
Անդ խաբեբայն երթեալ յատեան փաշային,
Մատնէր զսուրբն՝ խիղճ չանելով բնաւին։
Անմիջապէս զօրականացն ետ հրաման,
Թէ գնալով առեալ բերէք փութով զայն.
Գայլք մարդախանձք հանին զգառն ի յատեան,
Վասն հաւատոյն տալ բդեշխին պատասխան։
Նհարց փաշայն՝ թէ դու երբեմն մեր դենին,
Հաւանելով տաճկացեալ ես ի Զմիւռին.
Պատմեն զքէն զայն ժխտեալ ես գլխովին,
Դարձիր, թէ ոչ, մահ բերես քեզ դառնագին։
Ետ պատասխան բդեշխին սուրբն համարձակ,
Թէ այդ ամէն զոր գիտես՝ են զրպարտանք.
Եմ Քրիստոնեայ հաւատով՝ և Հայ զաւակ,
Ի սէր Փրկչին փառս առթեն ինձ չարչարանք։
Տեսաւ բդեշխն՝ թէ իւր յորդորն մինչ չլսեց,
Փոյթ սուրբ վկայն զան ու բանտի ենթարկեց.
Դահճաց ձեռօք զնա սաստիկ չարչարեց,
Երբ որ չդարձաւ՝ մահուան վճիռն արձակեց։
Բանտէն հանեալ տաճկաց խուժան քաջ վկայն,
Վասն գլխատման ածին ի բլուրն սուրբ Նշան.
Բարձին զգլուխն մինչ գոհութիւն ի բերան,
Օրհնէր զՏէրն, որ զինք հասոյց նոյն մահուան։

digitised by A.R.A.R.@

Հաւատացեալքն ելեալ Հանդէպ ըդեշխին,
Սակս թաղելոյ զմարմին սրբոյն խնդրեցին.
Առեալ Հրաման՝ ամփոփեցին ի շիրիմն,
Ցեկեղեցւոյ Հարաւ կուսէն մերձ ի Հիմն։

Յետ թաղման լոյս էջ ի վերայ տապանին,
Որպէս տեսին բազումք բնակչաց քաղաքին.
Կատարեցաւ սուրբ Պաղտասար պատանին,
Հազար Հարիւր տասն երեք մեր Հայ թուին։

Երեք տարի անցանելէն զկնի,
Ի քէն Կարին մի նոր վկայ ևս լինի.
Նահատակի ի սէր Փրկչին Յիսուսի,
Որոյ անուն զզիր Յակոբ յորջորջի։

Սորա Համար Զաքարիա սարկաւագ,
Վերոյգրելոյն պէս ոչ ճառէ ընդարձակ.
Այլ ասէ թէ «կատարեցաւ սոյն քաղաք,
Վասն Յիսուսի զզիր Յակոբ նահատակ»։

Մարմին սորին եդին ի դիր ի նոյն վայր,
Ո՛ւր կայր վկայն Թոխատցի սուրբ Պաղտասար.
Կարնոյ Համար պատմութիւն մեզ մինչ մի դար,
Հայ նահատակ լեալ է թէ ոչ ցոյց չի տար։

Դարուս սկիզբն վկայուհի կոյս Վառվառ,
Հետն ունելով սուրբ Մարիամն և Գասպար.
Յանուն Փրկչին վկայեցին քաջաբար,
Եւ փոխեցան բարի մահուամբ փառս յանճառ։

Վառվառս այս էր Կարնոյ Գվնիկ գիւղացի,
Որպէս Գասպարն եղբայր նորին սիրելի.
Իսկ Մարիամն էր ինքն քնիկ Կարնեցի,
Սաղնջական օրիորդին երջանկի։

digitised by A.R.A.R.@

Գեղանի Կոյս վկայուհի պատուական,
Երբոր եղև ճիշտ տան և ջրոց տարեկան.
Ծնողք նորին ըստ օրինի Հայկական,
Նշանելով պատրաստեցին հարսնութեան։

Յայնմ միջոցին մի տաճիկ ցոփ պատանի,
Որ էր նա ևս ընիկ Դվնիկ գիւղացի.
Գերի եղեալ տրփական իւր չար ախտի,
Կամեր կորզել զանարատ հարսն Ցիտուսի։

Ուստի գրդմամբ սոյն գիւղի թուրք իշխանին,
Գայ Կարին, և մատնէ զկոյսն փաշային.
Ասէ թէ ինձ երբեմն խօսս եւ լինիլ կին,
Այժմ ժխտելով՝ հարս լինի նա օտարին։

Զայս լսելով ցասնու փաշայն նոյն ժամայն,
Զօրացն ասէ գնայէք փութով բերէք զայն.
Անմիջապէս կատարէին չար հրաման,
Սուրբ զօրիորդն անդ հանէին ի յաղեան։

Բահրամ փաշայն հարցանէր հայ աղջկան։
Քեզ սակս ասեն դաշն կուր ես տաճկուհեան.
Այժմ լսեմ թէ ժխտեր ես դու քո պայման,
Թէ չանաս ինձ պիտի մատնեմ քեզ մահուան։

Ասէ սուրբ կոյսն այդ պատմութիւն գլխովին,
Զրպարտանք է վայ հազար իւր ճառողին.
Ես հայ եմ և հարնացու հայ հօտաղին,
Թէ բռնանաս, մեռանելն է իմ բաժին։

Հոն գենպետի միոյ յանձնեաց սուրբ Վարվառ,
Սակս տաճկուհեան իցէ զոցէ մի հնար.
Նա տարաւ տուն՝ խիստ և ամոք շատ երկար,
Կոյսն համոզեաց՝ բայց ինչ օգուտ չեղև ճար։

digitised by A.R.A.R.@

Այլ ոմն ուրիշ անագորոյն դանիշման,
Կոյսն տարաւ տուն, և ենթարկեաց կոշկոճման.
Պարտիզին մէջ դեկտեմբերի խիստ ձմռան,
Մերկ և բոպիկ կախեաց ի լիճն սառուցման։

Համբերելով տոկայր բամբիշն դէմ ցրտին,
Եւ աղօթիւք եղկանայր Ջուրն սառ լճին.
Խիստ չարչարանք նմա ոչինչ չազդեցին,
Վասնզի վառեալ էր նա սիրով Յիսուսին։

Կրկին անգամ հանեն յատեան ըդեշխին,
Եւ վճռեն թէ կաց Հայ՝ բայց լեր տաճկին կին.
Կոյսն մերժելով ասէ չէ՛ այդ հնարին,
Սակայն խուժան չուզեց լսել իւր ձայնին։

Ուստի ըռնի առեալ տանեն տաճկին տուն,
Սիրով շահուիր ընդ կոյսն ասեն պատանւոյն.
Սա հաւատով Հայ է գիտցիր հաստատուն,
Պէտք է ազատ երթայ՝ գայ իւր ժամատուն։

Ակնածութեամբ յարգեմ, ասէ, ձեր հրաման,
Եւ Վառվառին շարժիմ կամացն համաձայն.
Իմ խնդիրս է ի նմանէ միմիայն,
Գերեւոյս առնէ արժանի իւր գթութեան։

Սուղ ինչ այս կերպ մնայր աղջիկն տաճկի տուն,
Սուրբ պահելով զիւր մարգարիտ կուսութիւն.
Յաւուր միում՝ մինչ ամէն ոք կայր ի քուն,
Նա ի տանէն խոյս եառ գնայր մեղմագոյն։

Յառաւօտեան փախուստ կուսին հռչակի,
Գան՝ որոնեն ի տան հօր զինքն ուղղակի.
Երբոր չգտին՝ դիմեն Կարին գանգատի,
Առ Իպրահիմ յաջորդն Բահրամ ըդեշխի։

digitised by A.R.A.R.@

Ծնողք կուսին և գիւղացիք խմբովին,
Խուռն բազմութեամբ եկին նոքա ևս Կարին.
Ելեալ յատեան Իպրահիմայ խրոխտին,
Ասեն զտիր տէր, դաւաճանս Վառվառին։
Զի օրիորդն տաճկի տունէն մինչ մեկնի,
Զերթայր իւր տուն՝ այլ յափն գեղոյն Ճուարի.
Իւր Հարազատն երեք օրէն զկնի,
Կամուրջի տակն՝ զիքն գտանէ յաղօթի։
Առեալ շալակն տանէ զնա ի Կարին,
Առ Մարիամ երանելի Հայ տիկին,
Գեղ աւանդ տամ, ասէ, ի սէր Յիսուսին,
Անմեղ բամբիշս, ա՛ռ ընկա՛լ սա տուն քոյին։
Գիտակ գոլով նա դիպուածոց սուրբ Կուսին,
Յօժարութեամբ յարգէր խնդիրս Գասբարին.
Առեալ ի տան պատուէր սիրով քոյր նորին,
Մինչ կատարումն նազելի Կոյս վկային։
Յետ ինչ աւուր կոչէ փաշայն զԳասբար,
Ասէ զիտեմ, ո՛ւր կայ մնայ քոյրդ Վառվառ.
Թէ ստոյգն ինձ չխոստովանիս ճշտաբար,
Իմա՛, հանեմ զքեզ կախաղան չարաչար։
Ժխտեաց վկայն թէ չեմ տեղեակ ընաւին,
Թերևս անխիղճք զիմ քոյրն ի մահ մատնեցին.
Առ այս եթէ տաս կախաղան իմ բաժին,
Վասն Յիսուսի սիրով դիմեմ կամովին։
Ասէ բդեշին ակնարկելով առ վկայն,
Այսուհետև քեզ հնար չիք փրկութեան.
Քո մահն և կեանքն սպասեն քոյդ որոշման,
Պէտք է ընտրես կամ կուրան կամ կախաղան։

digitised by A.R.A.R.@

Եւ պատասխան ելանելին գբեշխին,
Եւ լոյս Հաւատս չեմ ուրանար բնաւին.
Ուրեմն Հրաման տուր ծառայից դու քոյին,
Զոր ինչ վասն իմ, ի գործ դիցեն գլխովին։
Փաշայն տեսաւ թէ դառնալոյ չկայ յոյս,
Ասաց տարէք՝ բարձէք զարևն պարմանուոյս.
Յեկեղցւոյ դուռն Հաստցին չուան յուս,
Անդ կախելով, իսկոյն վրան ինչաւ լոյս։
Մարմին սրբոյն ամփոփեցին ի տապան,
Յարդարոց շարս օրհնութեամբ քաղցրաձայն.
Փառաւորեաց Աստուած փութով սուրբ Վկայն,
Ինչու կրկին լոյս ծագեցաւ իւր վրան։
Յետ կատարման Պասքարայ նոր վկային,
Մի տաճկի կին եռես ուր կալն Վառվառին.
Վաղվաղակի գնաց ծանոյց բդեշխին,
Թէ Հայ աղջիկն այն կայ առ մեր դրացին։
Զոգան կալան ըստ Հրամանի բդեշխին,
Ծառայք նորին, և պաշտօնեայք դենպետին
Սուրբ զօրիորդն, և Մարիամ բարի կին,
Զոյգ միասին Հանին յատեան գոռոզին։
Հարցափորձեալ փաշայն զանոնք անդ իսկոյն,
Տեսաւ մեր սուրբ Հաւատոյն մէջ Հաստատուն.
Ասաց իւրոցն տարէք ձգէք բռնատուն,
Թէ որ չդարձան՝ ոչ ևս տեսցեն փրկութիւն։
Զոյգ միասին ի սէր Փրկչին Յիսուսի,
Շատ օր ի բանտ կացին ծարաւ և նօթի.
Սրատպնդեալ միմեանց կային յաղօթի,
Ասելով Տեառն լեր կապելոցս Հոգոնի։

digitised by A.R.A.R.@

Բդեշխն կրկին հանեց զնռա իւր առեան,
Այն յուսով թէ՝ այժմ անսան իւր համոզման.
Երբոր լուաւ նոցա ազատ պատասխան,
Ասաց դահճացն տարէք հանէք կախաղան։

Առ այս բաղդք կալաւ սուրբ Կոյն առ փաշայն,
Ես պռենիկ չեմ, որ զիս հանես կախաղան.
Խնդրեմ ի քէն տուր ծառայիցդ դու հրաման,
Զիս գլխատել հրապարակաւ անխափան։

Առեալ տաճկացն վկայուհիս զերկոսին,
Խուռն բազմութեամբ սպանման տեղն հասուցին.
Մեղք էք, դարձէք, վերջի յորդորն կարդացին,
Երբոր չլուան՝ ժամտան դրնէն կախեցին։

Ո՜հ երեք օր ի կախաղան այնպիսի,
Անթաղ թողին՝ մեր սուրբ վկայս նազելի.
Բայց Տէրն զնոյնս փառաւորեաց շեշտակի,
Զի եկեալ էջ նոցա վերայ լոյս յայտնի։

Վերջ ըդեշխէն թաղման հրաման առնելով,
Առ նահատակս եկին իսկոյն թափորով.
Սուրբ պարանոցս նոցին խեղդէն հանելով,
Դագաղ դրին՝ ջերմ արտասուս թափելով։

Մեծ հանդիսիւ յեկեղեցին փոխելով,
Նոր վկայիցս քաղցր յիշատակն օրհնելով.
Զարիւթիւն նոցին ի յուշ ածելով,
Երկնաւոր Հօրն առաքէին փառս յոլով։

Մարմինս նոցին յեկեղեցւոյ մերձ տապան
Դրին, ուր կան Հայ նահատակք պատուական.
Ջերմէն տանջեալս՝ որք ցուպ ի ձեռն ուխտի գան,
Առողջացեալ դառնան իւրեանց օթևան։

digitised by A.R.A.R.@

Հազար երկու հարիւր վաթսուն Հայ թուին,
Կատարեցան վկայուհիքս երկոքին.
Ականատես պատմողք վարուցն են սոցին,
Տէր Մատթէոս, Լաս և Հաննէ պատուելին։
Հայ վկայից պատմութիւն ատ աւարտի,
Բաց ի սոցունց թէ կան՝ ինձ չեն հասատի.
Կուզեմ կարճ այժմ դիպուածդ Կարին ուղղակի,
Անմիջապէս շարայարել յայս շարի։
Թէոդորոս կայսեր օրով Համանդ քար,
Խորհելով եդ Անատոլ մեծ զօրավար.
Շինեաց չորս շուրջդ ամուր պարիսպ և պատուար,
Որ յարձակողք գան և լինին նեռահար։
Արդարև դու Պարսից գնդին բաւական,
Դէմ դնելով Յունացն եղեր ապատան.
Երբեմն և եղեր նոցա դու սահման,
Մինչ. Պարսից հետ բաժանէին Հայաստան։
Անցան ամք ինչ Պարսից Խոսրով դոռ արքայն,
Իւր զօրավար Սշոան խրկեց քո վրան.
Դու չտակալով նորա խիզախ յարձակման,
Յաղթուելով նուաճեցար նոյն ժամայն։
Զօրք հզօրին ատի անդի ներս մատն,
Որդիքդ եղեն լեզապատառ՝ ցիրուցան.
Յունաց բաժնի կաթուղիկոս Տէր Յոհան,
Առեալ ի քէն գերի տարան Համատան։
Մինչդեռ Հերակլ կայսերական թագ կապեաց,
Զքեզ Պարսից բռնութենէն ազատեաց.
Ինչպէս նաև տէրունական խաչն փրկեաց,
Պարսկաստանէն բերեալ՝ Սաղիմն ուղարկեաց։

digitised by A.R.A.R.@

Հերակլ քո դիրկ ժողով արար իւր օրով,
Առ ինքն մեր Եզր կաթուղիկոս կանչելով,
Նա արքային ձօն և պատիւն յարդելով,
Աւաղ եղև քաղկեդոնիկ հապճեպով։
Հերակլէն վերջ թշուառացար Կարին դու,
Վասնզի անկար ի ձեռս զօրացն Հազարու.
Ո՜հ ամբարիշտք քեզ բռնացան լուի լու,
Այժմ չեմ ուզեր նոյն դիպուածս հոս գրելու։
Ապա կայսեր Լևոնի լաճ Կոստանդին,
Մեծ ամփոխիւք եկեալ տիրեաց քեզ Կարին.
Հազարացի խորդ զաւակունդ խմբովին,
Կաշկանդելով տես փութացոյց Բիւզանդին։
Կարծեմ տարին անցաւ թէ ոչ քեզ Կարին,
Եկեալ տիրեց Եզիդ որդի Ուսազին.
Սա հրամանաւ Ապտուլլահ գոռ ամիրին,
Հարկապահանջ եկեալ էր մեր աշխարհին։
Նկատելով կեղեքողիս բռնութիւն,
Ազատութեամբ ապրիլ ուզեց Հայկայ տուն։
Մամիկոնեան Մուշեղ՝ Սմբատ Բագրատուն,
Ընդ այլ իշխանս ուխտ կռեցին հաստատուն։
Այնուհետև շատ կեղեքիչ հարկահան,
Նեղեալ Հայոց ձեռամբ իջան գերեզման.
Եդին Կարին սոքա ի մէջ պաշարման,
Որպէս ասէ Ղևոնդ բարբուն պատմաբան։
Յաւուրս Վասլի և Կոստանդին կայսերաց,
Գիտեմ Կարին սեպհական լեալ էր Յունաց.
Չի թագաւորն Սէնեքերիմ Արծրունեաց,
Վան՝ Ռատան ևս սոցա խնամոցն աւանդեաց։



digitised by A.R.A.R.@

Յետ այնորիկ Պարսիկք եկալ տիրեցին,
Ի նոցանէ Մուղալք ապա կորզեցին.
Ինձ թուի թէ Վիրք ևս փոքր ինչ իշխեցին,
Յաւուրս յաղթող Զաքարիա իշխանին։

Պարսից արքայքն Մելիք շահ և Տուղրիլ խան,
Կարնոյ երկրին սուքա ևս լեալ են իշխան.
Ինչպէս նաև Հուլաւուն և Արղուն խան,
Որ ողջ երկրին մեր գրեթէ տէր եղան.

Զկնի սոցին եկեր անգութ Լանկթամուր,
Եւ պատենէն իւր Հաներէ կարուն սուր.
Հարկաւ առ քեզ ևս սա մնաց Կարին հիւր,
Եւ զաւակացդ գիտեմ թափեր արիւն զուր։

Լանկթամուրէն վերջ Զհան շահն է եկեր,
Տաճկաստանի Հայոց Պարսից ողջ տիրեր.
Նմա Ուզունհասան և այլք յաջորդեր,
Մինչ գալ սուլթան Սուլէյմանին յաշխարհ մեր։

Սա շահ Սօֆու հետ մի մարտէն զկնի,
Հայաստանին մինչև ի Վան տէր լինի.
Կարգէ Կարին այլ քաղաքաց յարգելի,
Եւ ենթարկէ զնոսա տրին Հրամանի։

Քանզի նատէ սատ մեծ վէզիրն սարասքար,
Որոյ բանիցն պէտք է անսան անպատճառ.
Փաշայք՝ միւտիրք, և կոզմնակալք հաւասար,
Եթէ չանսան անշուշտ տուժին չարաչար։

Շահ Սօֆիէն յետոյ եկաւ շահ Դահմազ,
Դավրիժու մինչ եկն Երզնկայ վազէվազ.
Գերեալ զերփեայ սոյն սա կոզմանս ոչ նուազ,
Մեծ աւարաւ վերջ դարձաւ տեղն հազիւհազ։

digitised by A.R.A.R.@

Շահ Դահմազէն եաք ինձ թուի թէ Կարին,
Չէ մատնուեր ի ձեռն երբէք օտարին.
Այլ մնացեր ի ձեռն տաճկաց սուլթանին,
Մինչ երևիլն Դահմազգուլի Նատրին։
Դահմազղուլին կամ Նատրը շահն իւր օրով,
Յառաջ եկեալ յոյժ զօրացաւ հապճեպով.
Պարսկաստանէն մինչ Քազկեդոն փութալով,
Բոլոր երկիր գոգ թէ լցոյց ահ դողով։
Բայց չերկարեաց այս գոռ արշաւ Նատրին,
Յետ հաշտութեան զօրօք ի Պարս անհետին.
Յաջող աւուրց դիպաւ դարձեալ սա Կարին,
Եւ կարաց ոչ իշխել վրան թշնամին։
Այսպէս մնայ խաղաղութեամբ շատ տարի,
Մինչև յաւուրս Մահմուտ հզօր արքայի.
Ապա ձեռամբ Ռուս զօրայ նուաճի,
Պահէ զնոսա ժամանակ մի յիւր գրկի։
Բայց երբ կռուէն Ռուսն և Թուրք ձանձրացան,
Մէկմէկու ձեռն կարկառեցին հաշտութեան.
Կարին Տաճկին յանձնեց Ռուսն նոյն ժամայն,
Եւ զօրսն առեալ, չուեալ գնաց յիւր տահման։
Անտի ի վեր չունեցաւ ոք թշնամի,
Մինչև ցայսօր կայ ի խաղաղ վիճակի.
Տիրապետաց Կարնոյ հոս վէպն սպառի,
Ես յիշածներս ի դիր առի ըստ Կարի։
Ահա զայս չափ դիպուածս Կարին քաղաքին,
Կարճառօտ իմն ծրագրեաց Տասպեցին.
Այժմիկ պիտի փոխէ զնթացս իւր գրչին,
Առ ի գրել մինչ ի Պոնտոս գէպս ուղին,

digitised by A.R.A.R.@

Անվրդով կեանս զոյգ օր Հասաւ մեզ բաժին,
Անցուցանել կարավանին հետ Կարին.
Յետ այնորիկ չուն ձեռս առաք մեք կրկին,
Դէպի քաղաքն Միհրդատայ մեր քաջին։
Նստեալ ի ձիս երթամք ահա միաբան,
Ի սուրբ սրտէ յոյս մեր եդեալ յԱստուած Բան.
Հայցեմք, որ մեզ լինի սատար և պաշտպան,
Եւ պահեսցէ ի փորձանաց կարաւան։
Ի՞նչ սիրուն է մեր այս աւուր հարթ ուղին,
Չկայ ոչ լեռ և ոչ բլուր խոչ նորին.
Իբր ի զբօսանս աչաց մերոց երևին,
Հեռի և մօտ շատ գիւղարայք ի սին։
Հարիւրաւոր խումբ ոչխարաց և նախիր,
Այն դաշտիս մէջն սփռեալ կան ցանուցիր.
Քանի քանի մանճկալ՝ հօտաղ՝ մշակ ժիր,
Արտ հերկի հետ զբաղեալ կան անձանձիր։
Եւ այս թեթև մանտրիկ սայլեր ճրուվրուն,
Որք բարձեալ են երկրիս բարիս զոյնզգոյն.
Լծեալ ի նոյնս ահա եզինս ճլպլտուն,
Գնան Կարին՝ որ տան նմա դիւրութիւն։
Այս նախնական սրտագրաւ տեսարան,
Դիտէ այո՛ ակնապիշ մեր կարաւան.
Լսէ նաև սայլորդաց երգս տեղական,
Եւ կայ ի մէջ բերկրապատար ցնծութեան։
Առաջին օր գնացեալ կացաք յԻլիճայ,
Որ Կարինէն երեք ժամ է բացակայ.
Նստականքն են ծնունդք Հաւոյն մեր Հայկայ,
Եւ երեսուն գերդաստան կան այժմ նոքա։

digitised by A.R.A.R.@

Մի անուանի Ջերմուկ ունի սոյն սա գեղ,
Որոյ նման երկրիս վերայ քիչ կայ տեղ.
Տկար մարդիկ փութան գան ասա բազմագեղ,
Լուղանալով ցաւոց գտնեն դիւր և դեղ։
Մեք ևս քանի ընկերաց հետ միասին,
Ողջոյն սիրոյ դիմեալ տուաք Ջերմուկին.
Լուացուելով հանգստացաք գլխովին,
Եւ գոհութիւնս առաքեցաք Ստեղծողին։
Չի այս ամէն բարիս արար վասն մարդկան,
Որ վայելեն և մնան իւր գոհաբան.
Ո՛ւր է այն մարդ, որ յուշ ածէ զայս կերպ բան,
Դիոգինէս թո՛ղ զայ ճրագով խնդրէ զայն։
Տե՛ս դու եղբա՛յր, առանց կրակ ինչպէս սա,
Ուխտէն ջուրն, ո՛հ եփ ելեր է եռայ.
Քո գթած Հօրն զարարան յուշ ած մտմտա՛,
Եւ գոհութիւն անմիջապէս տո՛ւր նմա։
Եթէ պահես ի միտ պատուէրս օգտակար,
Զուարթ սրտիւ օրհնես քո Տէրն բարերար.
Զինքն պարտաւոր պիտի առնես անպատճառ,
Զքեզ հսկելու՝ որով դիպի քեզ ոչ չար։
Յաշխարհի ասա զքեզ շահելէն զկնի,
Առնէ նաև փառաց սրբոցն արժանի.
Ընդ երջանիկս քեզ վայելել տայ պիտի,
Սիրուն եղբա՛յր. զիւր սուրբ բարիան լի ու լի։
Ուրեմն ոիրեմք զինքն հաւատով երկիւած,
Եւ գաւանիմք մեզ մարդասէր Հայր գթած.
Տիւ ու գիշեր զիւր սուրբ անուն անմոռաց,
Ցեղյեղեմք զի չձգէ զմեզ ի ձեռաց։

digitised by A.R.A.R.@

Խաւար լուսի հետ փոխեցաք յԻլիճայ,
Յարշալուսին չուն սկսաք մեք աՀա.
Լուսի մեծ աստղ՝ դեռ Հանդէպ մեր ելվըլայ,
Եւ արևու ծագման չուզեր տեղի տայ։
Իւր բիւրաւոր ընկերք լեալ են ցիրուցան,
Անհունութեան մէջ գրեթէ կորուսան.
Սա միայն կայ յանձնապաստան իւր արձան,
Եւ կուզէ որ առնու պսակն յաղթութեան։
Կէս ժամ այսպէս դէմ դրաւ նա քաջաբար,
Եւ սիրեր միշտ՝ որ արեգակն մնայ մար.
Բայց ինչ օգուտ վերջ յաղթեցաւ չարաչար,
Ինչու արևն լուսոն լցոյց սարն ու քար։
Ամենայն մարդ այս դիպուածէն զկնի,
Քուն թմբրութիւն դնէ մի կողմ շեշտակի.
Քանի օր կայ փոյթ իւր գործին սկսի,
Որ ճարէ զին՝ իւրն և որդւոց պարենի։
Տինից ելեալ փութան ի դաշտն ցնծալով,
Հովիւն փողով, մանճկալ Հօտաղ՝ կիւթանով.
Զրկալն բահով, սերմնացան իւր մէզարով.
Վիճակաւորն ևս պաշ և պօլատ չուխտ եղնով։
Երջանկեալ իւր չորս կողմից կարավան,
Հանդէպ աչացն ունի սոցա տեսարան.
Ամոլվարին լսէ անուշ խաղի ձայն,
Որ աշխոյժիւ վառեալ դովէ զիւր կռվան։
Մեր մէջէն ևս սոցին երգոց պատասխան,
Խոտիկ օղլին Պատուրին Հետ շուտով տան.
Հին վարպետաց յօրինեալ խաղս զանազան,
Զութակ սազիւ երգեն ուրախ ի բերան։

digitised by A.R.A.R.@

Թէ և ինքեանք բանաստեղծ են և վարպետ,
Երբեմն երբեմն նաև մրցին միմեանց հետ.
Բայց ախորժեն ասել զայն խաղս մերթ ընդ մերթ,
Զոր շիներ է Խառակոնացի Նահապետ։

Զուն թլփատեմք հանդարտօրէն այս կերպով,
Գնամք ի գիւղն Խօշապիտնար ցնծալով.
Ճանապարհին վիշտ և վտանգս չկրելով,
Կամք և մնամք հանգստութեան ջատագով։

Ժամանեցաք ժամ տաս կիսուն ի նոյն գեղ,
Զմեզ գրկելով՝ սիրաշահեալ առաւ տեղ.
Բնակիչքն են խորդ հազարու ճեռոց ցեղ,
Զգիտեմ տանց թիւն, թող ինձ սա ոք չհաշուէ մեղ։

Գիշերն յայս գեղն լոյս փոխելէն զկնի,
Հանդերձեցաք Էշկիալմայ ուղղակի.
Որք են պանդոկք շինեալ ի մէջ ձորակի,
Որոյ մակտիրն Գանլիտարայ յորջորջի։

Ճանապարհին շատ խոչերու յաղթելով,
Ինչևիցէ հասաք մեր տեղն Աստուծով.
Զուարեցաք մի փոքր խրճիթ մեր խմբով,
Լուսոյ աստղի նոր ծննդեան աշելով։

Զի միտք ունիմք նորա լուսով հով դիշեր,
Դէպ ի Բաբերդ գնալ փութով ի չուն մեր.
Ուղին համար ինչ որ պէտք է բերել ձեռ,
Հայ՝ իւղ՝ բրինձ, քանզի կայ մեզ չորս օր դեռ։

Աստղի ծնունդն մեզ աւետեաց աքաղաղ.
Լսեցաք ոչ՝ քուն մերկացաւ աչք մեր վաղ.
Ի չու անկաք մին խաղ կանչէ՝ միւս տաղ,
Եւ այլ ոմն ևս աւաղէ զայն սուտ կենցաղ։

digitised by A.R.A.R.@

Տիեզերաց պատեր է խոր լռութիւն,
Զի ամէն ոք հանգիստ ի տան կայ ի քուն.
Միայն պլպուլք ի թուփս վարդից իւրեանց բոյն,
Սկսեալ են օրհնել զանմահ Բնութիւն։
Ո՜հ ինչ քաղցր է սոցա անմեղ դայլալիկ,
Զոր բերէ մեզ թրթրալով սիգ հեզիկ.
Լսելով զայն՝ գո՛ղ թէ լեալ եմք երջանիկ,
Զի ազդու է քան զտաւիղ և արինդ։
Քեզ գոհութիւն ամենակալ Աստուած Բան,
Որ արարեր բազում բարիս սակս մարդկան.
Տուիր լեզու սա փոքր հաւքին ճարտասան,
Տեառնդ օրհներգու, և մեզ առիթ ցնծութեան։
Ժիր պատանիք պարոն Բարսեղ և Ղազար,
Առաւօտեան քաղցր և անուշ երգ ճարտար.
Որ շիներ է Աստապատցի ըաբուն հայր,
Սոխակաց հետ ո՞րպէս երգեն անդադար։
Այսպէս ահա՛ մեծ խնդութեամբ և երգով,
Զուն կրճատեմք ախորժ և քաղցր եռանդով.
Խումբք աստեղաց մեր վերայ լոյս ծագելով,
Սիրեն մղել զմեզ ի հրճուանս հապճեպով։
Զարկեալ անցաք քարեայ կամուրջ Ճորոխին,
Որ է հանդէպ Էշքի ալմայ ձորակին.
Ուղին հարթ է քաղաք գնամք հետ գետին,
Բայց շատ երկար՝ երբ տի հասնեմք կատարին։
Ճորոխս է մինն ի վտակաց դրախտին,
Որ իւր զով ջուրն խմեր Ադամն և իւր կին.
Սա պատկանի բաժին Տայոց նահանգին,
Զի Պարխարայ բարձր գօտիքն են մայր սորին։

digitised by A.R.A.R.@

Նոյն նահանգէն անցանի սա ճեմելով,
Գետս և վտակս բազումս առ ինքն ձգելով.
Խաղտիք Կողքիս աճապարէ վազելով,
Թափի անտի լայնաբերան է Սև ծով։
Զախ թևի տակ թողաք մեր յետ Մասաթ գեղ,
Որ կայ շինեալ լերանց գիրկ մի աղուր տեղ.
Միջի մարդիկ գող են մեծ մասն՝ և շատ հեղ,
Երթևեկող կարավանաց ձգեն նեղ։
Սոցա վէպ ես չսիրեմ առնուլ ի գրի,
Զի այժմ միջոցս չներեր հիքոյս իրաւի.
Թողում զայնս կիրթ ուղևորին սոյն երկրի,
Թող տեղագրէ ըստ արժանւոյն մի առ մի։
Մեր կարաւան քանի ժամէն զկնի,
Ժամանեաց խանն, որ կայ շինեալ անդ յուղի.
Յափն Ճորոխին՝ ի վայր աղուր մարգալի,
Անդ թափեցաք՝ մինչ կարճի տապն արեգի։
Բազումք ի մէնջ գետ մտնելով լողացան,
Եւ զիւր պաղուկ ջուր խմելով զովացան.
Տօթ և տաքի բռնութիւն փոյթ մոռացան,
Առ այս մնացին երկնաւոր հօր գոհաբան։
Արևու տաքն երբոր փոքր ինչ տեղի ետ,
Զիք բառնալով յուղի ելաք սիրով սերտ.
Խրոխտ Ճորոխն ընկերացեալ է մեր հետ,
Օձապտոյտ շառաչմամբ գայ ի Բաբերդ։
Ի մէջ գետոյն կերպ կերպ թռչունք բարդ ի բարդ,
Որպէս ճեմեն, անգղ, ձկնկուլ, սագն ու բադ.
Երբեմն երբեմն ձգելով ձուկս իւրեանց կարթ,
Զայնս ճաշելով՝ ճախրին լուզան յոյժ զուարթ։

digitised by A.R.A.R.@

Մեր կարավան դիտէ ոտին խաղն ու պար,
Որ հանդէպ իւր շարունակեն անդադար.
Ընդ միմեանս առնեն նաև վէճ պայքար,
Որով կրեն ոմանք վնաս չարաչար։
Փառք քեզ Տէր փառք և գոհութիւն քո Անուան,
Ճարտարապետ Հեղինակիդ չիք սահման.
Լոկ Հրամանաւդ յոչէից դու սակս մարդկան,
Գոյացուցեր բիւր ցեղ էակս զանազան։
Երեկոյեան ժամ տասն կիսու միջոցին,
Զոգաք ի տես Բաբերդու մերկ քաղաքին.
Շինեալ են սա մօտ յափունս մեծ Ճորոխին,
Ի դիւրութիւն երթ և եկիցն Պոնտոսին։
Մէջի բնակիչք Հայ ու տաճիկ են միայն,
Հազարի մօտ կարեն կազմել գերդաստան.
Թէ և տեսի քանի մի յոյն խանութպան,
Բայց չեն բնիկ, սակս առ ծախսի աստ մնան։
Խանութից թիւն ինձ թուի կայ զոյգ Հարիւր,
Որ նստելով ի նոյնս առնեն առ և տուր.
Աստ նոր արհեստն որոնելն է կարի զուր,
Զի հին դարուց մնացորդք են կցկտուր։
Մեծ մասն տաճկաց տեղւոյս են կոշտ՝ անուպայ,
Որոց նման դեռ ուրիշ տեղ չհանդիպայ.
Թէ և Բաբերդ Պոնտոսին է մերձակայ
Բայց սոքա կան դեռ չարութեան ենթակայ։
Կեղել գերփել, վատ բարբանջմունք ստգտանք,
Գործ է սոցա, առնեն առանց խղճմտանք.
Ենթէ մի ոք դիմադրէ նորա կեանք,
Չյուսացուցիր որ թող տան մնայ անվտանգ։

digitised by A.R.A.R.@

Թագաւորի հրամանաց ոչ կան ապատկառ,
Զանցառութիւն առնեն առ այնս չարաչար.
Թէ պաշտպանես դու զիրաւունս քո արդար,
Պէտք է կրես վնաս բազում անպատճառ։

Քաղաքիս մէջ աչաց գարնող հնութիւն,
Ակն ետես ոչ ճանապարհորդ Տոապեցւոյն.
Թէև ինչ ինչ կայր քարեայ տանց շինութիւն,
Բայց տասն և ինն դարուոյս գործ են գոգ ողջոյն։

Պասգևիչի մարտէն յառաջ սոյն Բաբերդ,
Իւր ապատան ունէր անառ մի խիստ բերդ.
Սա փշրեր զինքն պաշարողաց զէն և նետ,
Եւ չէ ձգեր՝ որ կենդանւոյն գային ետ։

Ի գալստեան Ռուս զօրաց լոկ միայն,
Կարողացեր ոչ կալ նոցա յանդիման.
Սոքա զկնի մեծ պաշարման առին զայն,
Եւ տապալեալ թողին նշան յաղթութեան։

Դիրք քաղաքիս գեղեցիկ է բաւական,
Ցափն ձորոխին եղեալ է իւր քար հման.
Զուր օդն թեթև՝ և առողջ է կլիման,
Եւ տենդն միջի նստողաց հետ չունի բան։

Մեծ դիւրութիւն տայ ձորոխ սա քաղաքին,
Զուկն ի պաշար՝ ջուրն այգւոյն և պարտիզին.
Զաղացաց ևս դարձուցանէ վէմս ուժգին,
Որ իւր փոշի աղան ցորեանս կեր երկրին։

Տնկոց մասին չէ սա աղքատ իւր Կարին,
Զի անցորդաց շուք ձօնեն ծառք յուլխին.
Յաճախեալ են երկար բարտ և ուռենին,
Յորոց կատարս ագռաւք բունով ծածանին։

digitised by A.R.A.R.@

Ունի թէև ծառա պողատու զանազան,
Բայց կարող չէ պարծիլ որպէս քաղաքն Վան.
Պակասեալ միրգս Կիւմիւշխանան առանց ձայն,
Ամ ըստ ամէ մատռուակէ զամենայն։

Մեր Հայ ազգէն քանի Հարիւր գերդաստան,
Բաբերդի մէջ ներկայս ապրող մարդիկ կան.
Մեծ մասն Հազիւ իւրեանց ճարեն օրական,
Մնացեալ փոքր մասն բացառութիւն են միայն։

Երեք են թիւք եկեղեցեաց մեր ազգին,
Մին Նորաշէն և երկուքն են տարուովք Հին.
Յորս խմբելով թէ լին և թէ կիրակին,
Գիտէ փառս տալ մէն մի Հայ իւր Արարչին։

Եկեղեցւոյ սիրոյն Համար սոյն քաղաք,
Զօներ Փրկչին սուրբ Շնորհվոր նահատակ.
Այն բարի կին, որ Տէր Յիսուս Համարձակ,
Դաւանելով՝ Հոսեր արեան իւր վտակ։

Ղազար անուն մի թարգմանիչ վարդապետ,
Յանցեալ դարուն տուեր ազգին սոյն Բաբերդ.
Լատին լեզուն ուսանելով եղեր սերտ,
Եւ նոցա բանս ի Հայ փոխեր մերթ ընդ մերթ։

Պալեանց ցեղի Պալի անուն նահապետ,
Զիւր առաջին օդ ծծեր է յայս Բաբերդ.
Մեծանալով Ձգեր ապա իւր բուն կերտ,
Մինչ ի Բիւզանդ դիմեր իւր նոր բախտին Հետ։

Յաւուրս Հորդորդ տաճկաց Մէհմէտ արքային,
Յուպ ի ձեռին անդ ժամանէ պարմանին.
Ամուսնանալ՝ յետ աներոյ վախճանին,
Հրատարակի ճարտարապետ սուլթանին։

digitised by A.R.A.R.@

Այնուհետև յաջորդաբար զարմք սորին,
Մինաս՝ Մակարն՝ քաջ Գրիգոր յետ սոցին.
Պերճ Կարապետ որդովք իւրովք միասին,
Կացին ճարտարք տիրապետաց Վասիորին։

Ներկայիս է ճարտարապետն արքունի,
Ճոխ Սարգիս պէյն՝ որ է պարծանք սոյն ցեղի.
Ինչպէս եղբայրն իւր Յակոբ պէյն անուանի,
Որոց կերտք են պսակ շինից նոյն երկրի։

Բաբերդցի էր Տէր Յովհաննէս պատրիարգ,
Եւ զառաջին օդ իւր ծծեր յայս քաղաք.
Դանիէլէն վերջ սա հովուեր Հայոց ազգ,
Վարքն երկար է, լոկ ծանուցի յիշատակ։

Այս չափս բաւ է սակս Բաբերդու տեղագիր,
Թող ընթերցողն հիքոյս չլինի մեղադիր.
Զի կարաւանն նախ քան զարևն լուսալիր,
Պոնտոսի չուն առնելու է մտադիր։

Նորա համար բանս արարի համառօտ,
Որ չլինի թէ քուն նեղէ զիս յառաւօտ.
Զընդարձակն տամ նոցա գրել՝ որ միշտ մօտ,
Սոյն քաղաքին կան՝ և շնչեն նորա օդ։

Ընկերացս հետ Պօղոս եղբօր սրճարան,
Տեղաւորեաց զմեզ ծերունի Ամիրխան.
Թէև մութ էր տեղն՝ և չունէր տեսարան
Բայց հայու էր՝ մեզ անդ մնալն էր արժան։

Բարեղին հետ մեր ծերունի Ամիրխան,
Բան առնելու համար չոգան ի շուկայն.
Մինչ ի Պոնտոս ինչ պէտք է մեր միութեան,
Սակս ուտեստի՝ պատրաստեցին զամենայն։

digitised by A.R.A.R.@

Բեռնաւորեալ դարձան առ մեզ նոյնք փուլթով,
Առ այս զխումբն մեր արարին ապահով.
Վերջ խմբեցաք ի սեղան չորս ընկերով,
Կերաք ճլպուրն՝ հետ քաղցր գինին խմելով։
Յետ ընթրեաց ուղիղ սրտիւ միաբան,
Երկնաւոր Հօրն կացաք անուան գոհաբան.
Որ հոգալով զպիտոյս մեր ամենայն,
Ինչ որ պէտք է փուլթալ տալ մեզ անխափան։
Յետ այնորիկ փոքր եկեսցէն առնելով,
Քաղցր ի քուն ոհ մրափեցաք անվրդով.
Յուղին մերոյ վիշտն և խոնջն անդ՝ ինչ փուլթով,
Տեղի եառն՝ բարեաւ մնասն ասելով։
Արշալուսի հետ գրեթէ միաբան,
Զարթեաք ի քնոյ ողջ ուղևորքս ամենայն.
Թողաք զԲաբերդ յոյս մեր եգալ յԱստուած Բան,
Պոնտոսի չուն ձեռն իւր առաւ կարաւան։
Երթամք ահա՛ հով զեփիւռով խնդագին,
Զաղջամուղջ մութն փարատեր է ջինջ լուսին.
Զայն հերկաղաց իբրև տաւիղ առանձին,
Ի՞նչ աղուրիկ գայ զարնէ մեր ականջին։
Մեր միջէն ևս երգիչք ոմանք քաղցրաձայն,
Վառեալ ի խանդ՝ երգեն հայ երգս զանազան.
Խնդութեան մէջն անկեալ ծփայ կարաւան,
Փառք քեզ Աստուած՝ փառք գոհութիւն քո անուան։
Մութ տեղի եւ ծագեցաւ նոր առաւօտ,
Հասաք մեք ևս մի յոլովաբուղխ աղբեր մօտ.
Իջեալ առ ինքն թողաք զձիս անդ յարօտ,
Իւր զով ջրէն առաք ամէնքս մեր կարօտ։

digitised by A.R.A.R.@

Փունջ փունջ ծաղկունս ժողովելով գոյնզգոյն,
Որոց տերևք շաղի ցօղով են լեցուն.
Մէն մի պսակ հիւսէր գնոյնա իւր գլխոյն,
Արարողին տալով բազում գոհութիւն։
Ի գիրկս մարգաց ամենայն ոք իւր խմբով,
Բազմեալ ուտեն զակրատն իւրեանց ապահով.
Փոխան գինւոյ ազբեր զուտ Ջուրն ըմպելով,
Հալածական առնեն յինքեանց պաքն և սով։
Երբ խոնջն առաւ փոքր ի շատէ կարական,
Զիաւորեալ չուն սկսաւ նոյն ժամայն.
Կամի գիշերն երթալ մնալ Էրկիզխան,
Անդ սպասել արշալուսի գալստեան։
Հանգարտօրէն չուն թլփատեմք յետ առ յետ,
Խօսակցելով քաղցր և անուշ միմեանց հետ.
Զունիմք սատան մեզ առապար և ոչ զետ,
Այլ հեշտ ուղի, որ մեր ուզածն է սա մերթ։
Յետ ցորեկին Էրկիզ պանդոկն ի ծոց իւր,
Ընդունելով զմեր կարական տուաւ դիւր։
Բռնադատեալ առ ինքն պահեաց սիրով հիւր,
Այսու կորեան խոնջ՝ քիրան ի մէնջ փոյթ յայլուր։
Յառաւօտեան զկնի ծագման արեգին,
Էրկիզխանին տուաք հրաժեշտ մեր յետին.
Զմեզ յանձնելով պահպանութեան Յիսուսին,
Ի Զրաղան անկաք ի չուս խնդագին։
Խատիկ օղին՝ վարպետ Պատուրն ինչ սիրուն,
Կարավանին մեր առբերեն դիւրութիւն.
Զի նախնի Հայ գուսանց երգս գոյնզգոյն,
Կանչելով մերն առաւելուն ցնծութիւն։

digitised by A.R.A.R.@

Ահա այսպէս խաղ և տաղով կարավան,
Մեղմիկ ընթացս իւր կատարէ օրական.
Մտադիր է ի սոյն գիշեր միաբան,
Գնալ՝ մնալ հիւր ի պանդոկն Զրաղան։

Ժամ տասն կայր ոչ մեր դէմ եղեալ հասաք շէն,
Որ մեզ ձօնեց տեղ բնակութեան և պարէն.
Հիւր մնացաք քով մեր խմբով համօրէն,
Մինչ նոր արևն փայլեաց յերկնից կամարէն։

Զրաղանին տալով հրաժեշտ մեր յետին,
Ի չու անկաք կարավանին հետ կրկին.
Գազուխլու լեռն ամպերէն բարձր ահագին,
Արձանացեր յանդիման մեզ առանձին։

Դէմ եղեալ եմք երթամք առ ինքն դէպ ուղիղ,
Զի կատարէ նորին է մեր ճիշտ շաւիղ.
Ճեպեմք գլխել՝ մինչ արևու շառաւիղ,
Լրջաբար ցոյց տար մեզ նորա խորդ բաւիղ։

Փառք Աստուծոյ այսօր ահա մեր բախտէն,
Մշուշ և մէգն հեռացեալ են այս լեռնէն.
Աճապարեմք՝ որ չլինի թէ նոյնք մէկէն,
Զմեզ պաշարեալ վարեն ի զուր դէս ու դէն։

Լեալ է երբեմն, որ յաւլիսի միջոցին,
Յայս Գազուխլու ձիւն եկեալ է սաստկագին.
Զէ կարելի հաւատալ իւր պարզ օդին,
Զի կէս ժամէն յայլ կերպ փոխիլն է դիւրին։

Վասն այսորիկ աճապարեմք մեք փութով,
Որ անվտանգ սարն անցանեմք արևով.
Անտի իջնեմք Զայիրներիսան շտապով,
Եւ գիշեր հոն լոյսի փոխեմք ապահով։

digitised by A.R.A.R.@

Տէրն յուսալով սկիզբն արաք մեր ելին,
Դէպ ի կատար պոնտոսական տոյն լերին.
Սահին ըռպէք՝ նուաղեցաւ մարդն և ձին,
Դեռ չկարացաք տալ բարև իւր զազաթին։
Ինչևիցէ դժուարութեամբ ահագին,
Ժամանեցաք հազիւ հազ մեր փափագին.
Հասաք գլուխն՝ որ ամպերէն էր անդին,
Եւ մատուցաք առ այս փառս մեր Արարչին։
Խոնջն և վաստակ փոյթ մոռացաւ կարաւան,
Վանզի ունի իւր իսկ աչաց յանդիման,
Նկատելոյ արժան նոր նոր տեսարան,
Մատղաշ լերինք՝ պատեալ տնկովք զանազան։
Դիտեմք նաև Հեռաստանէ մեք աստի,
Մրրկայոյզ տիպար ծովոյն Պոնտոսի.
Թէև ի մէնջ բազում ժամ կայ մեկուսի,
Բայց Գազուխլուոյ բարձրութենէն ոչ թագչի։
Սարի կատար չորս հինգ ըռպէ մնալով,
Լաւ մի տեսաք ելուրս՝ վտակս՝ գետ և ծով.
Ցեռոյ պախուրց ձիանց մերոց բռնելով,
Լեռնէն ի վար սկսաք գալ ցնծալով։
Զայիրներաց պանդոկաց կերաք նոյնժամայն,
Ամենեցունցս ելին աչաց յանդիման.
Դէմ եղեալ է առ նոյնս երթայ կարաւան,
Եւ գիշերն անդ կամի մնալ անխափան։
Պանդոկատեարք եկին փութով Հանդէպ մեր,
Փափագէին հիւր կալ նոցա նոյն գիշեր.
Վասն մեր ո՛րպէս մրցի ընկեր ընդ ընկեր,
Պախուրց ձիանց մեր տատանի ձեռնէձեռ։



digitised by A.R.A.R.@

Սոցա սա կերպ իրարանցման բուն պատճառ,
Գիտես ի՞նչ է՝ լա՛ւր որ պատմեմ քեզ եղբայր.
Սակս ուտեստի կամին ծախել մեզ նպար,
Եւ փոքր ինչ վոզ շահիլ այնու չարաչար.
Ինչևիցէ մի քառորդ վերջ մեր խմբով,
Հազիւ հազ թէ մի տեղ գտաք ապահով.
Յետ ընթրեաց Հանգստացաք ըշտապով,
Յուղին առթեալ խոնջ քիրտն իսկոյն մառնալով:
Յառաւօտեան զարթեաք թէ ոչ նոր արև,
Տիեզերացն սկսաւ տալ զիւր բարև.
Շաղի ցօղովն լցուեր ծաղիկն՝ բոյս՝ տերև,
Պսպղալով երևին մեզ ակներև:
Փոքր նախաճաշ մի առնելէն զկնի,
Մեր կարաւան պատրաստեցաւ փոյթ յուղի.
Մտադիր է յայս երեկոյ ուղղակի,
Գնալ՝ պառկիլ հիւր ի պանդոկն Մաթրաչի:
Զայիրներաց տալով յետին մեր ողջոյն,
Ելան արտէն սկսաք գալ վար իսկոյն.
Իջաք ի ձորն վտակաց հետ զզզուն,
Որոց ընթացք առթեն մեզ յոյժ ցնծութիւն:
Ո՜հ ինչ անուշ լերինք վայրեաց գո՛զ ողջոյն,
Իբրև դրախտ ուսկեր անմահ Բնութիւն.
Տունկք ուռճալի սօս, նոճ, մայր, զի, զոյնզզոյն,
Վարեն կենցաղ հորաց սիրով հաստատուն:
Տեղւոյս մարդիկ ընակին ոչ միաբան,
Ի գիւղօրայս՝ ինչպէս է մեր Հայաստան.
Այլ մէն մի մարդ՝ իւր ուզած վայրն ու տահման,
Կերտեր զիւր տուն անդ կայ մնայ առանց ձայն:

digitised by A.R.A.R.@

Ի զովասուն անտառաց մէջն ինչ ազուր,
Ամբին Հանդարտ՝ թէև փոքր ինչ չքաւոր.
Զունին ինքեանց կեղեքիչ ոք բռնաւոր,
Եւ ոչ նաև կաշառակեր դատաւոր։
Այլ ամէն Հայր իւր ընտանեաց և զարմին,
Սիրաշահէ՝ որպէս յաւուրս էր Նոյին.
Աշխատութեան կան Ջատագով գլխովին,
Մինչ երեկոյ գործով իւիք զբաղին։
Նոյն սա Լազից գոգ անծանօթ է կիւթան,
Վանզի չունին լայնարձակ վայր և սահման.
Տեղ տեղ Հազիւ տեսաք չորոց միմիայն,
Իսկ մնացեալս բահով փորեն զամենայն։
Հանդարտօրէն չուն կրճատեմք խնդագին,
Հետ կարաչի զուտ սրընթաց գետակին.
Որ է նոյն իսկ Պոնտոսի գետն անուանին,
Ցիշեալ ի վարս գետադարձ սուրբ Պետրոսին։
Յաւուրս Ցունաց Վասիլ կայսեր Հզօրի,
Մերձ ի Ծննունդ Փրկչին մերոյ Յիսուսի.
Մեր գետադարձն գայ ի Պոնտոս շեշտակի,
Ի տեսութիւն կայսեր յօգուտ մերս Ազգի։
Ըստ խնդրանաց կայսեր սոյն սա Հայրապետ,
Կղերս Հայոց և Հօտս նոցին առեալ հետ,
Ի Ջրօրհնէս մկրտութեան գայ յայս գետ,
Եւ կատարէ զայն սուրբ Հանդէսն ըղձիւ սերտ։
Մինչդեռ թափէր զիւղն օրհնութեան նա ի Ջուր,
Երկնային լոյսն ծագէր անդրէն Համապիւռ.
Իբր Յորդանան ընդհատէր գետս զընթացս իւր,
Դիպողք հրաշիցս տային անդ փառս Տեառն մեր քրիստոս։

digitised by A.R.A.R.@

Յետ Համառօտ այս պատմութեան այժմ կրկին,
Մտադիր եմ գրել զդէպս մեր ուղին.
Նա որ կուզէ հմուտ լինիլ գլխովին,
Թող ընթեռնու վարս գետադարձ Պետրոսին։

Ներկայ չուն մեր ՝ի՞ր չափ քաղցր է և պայծառ,
Բիւր ցեղ տնկովք զարդարեալ է սարն ու քար.
Յուղին վերայ շինեալ պանդոկս շար առ շար,
Երթևեկիցն ծախեն նպար և պաշար։

Յետ միմեանց իբր քաղաքի՝ հրապարակ,
Գան և գնան ձիաւորն և հետևակ.
Յուստեքէ չիք երկիւղ՝ կարես միայնակ,
Յուսալ ի ձեռինդ երթալ ի տունդ համարձակ։

Քանի քանի կարաւան դէմս մեր ելին,
Որ ուրախ սիրտ իւրեանց երկիրն դառնային.
Աւա՜ղ հազար հայրենազուրկ մեր խմբին,
Որ յօտար հող դիմեալ երթայ կամովին։

Ի սոցանէ մի կարաւանն էր Վանայ,
Որ մերձ յաղբեր մի հանդիպան մեզ նոքա.
Զորս հինդ բոպէ հազիւ հազ թէ ընդ նոսա,
Զօդ ծծելով կացաք միմեանց մերձակայ։

Վերջ գրկախառն նոցա հրաժեշտ մեր տալով,
Անջատեցաք ի միմեանց գո՛դ լալով.
Նոքա ի Վան՝ մեք ի Բիւզանդ գնալով,
Հակողութիւն մեր Անեղին յանձնելով։

Հազար բերան տամ երանի՜ ես նոցա,
Որ հրճուելով դառնան ի գիրկ Վանտոսպայ,
Երջանիկ են և բարեբաղդ ո՛հ սոքա,
Որ եղեն այս քաղցր վիճակին ենթակայ։

digitised by A.R.A.R.@

Երանի՜ և ես նոցա զարմից հօրն և մօր,
Քաղցր ամուսնոյն նազելի քեռն և եղբօր.
Յիշատակաց արժանի է նոյն մեծ օր,
Մինչդեռ դիտեն պանդուխտն ի տան անդանօր։
Ընդ հակառակն վայ բազում մեզ վայ հազար,
Ամէն լեզու թոռ յեղյեղէ անդադար.
Հաւն իւր ճեռովն՝ թռչուն ձագիւն իւրեանց թառ,
Սիրեն մնալ, իսկ մեք յօտար և թշուառ։
Եղուկ նաև մեր եղկելի հարց և մարց,
Որ յաղագս մեր միշտ արտասուեն յաչս ի լաց.
Գիտեմ յիշեն այո՛ իւրեանց զաւակաց,
Զայս ցաւալի պանդխտութիւնն անմոռաց։
Աւելի և նոցա ցաւ՝ վիշտն սաստկանայ,
Մինչ մեզ դիպեալ սոյն կարաւան Վան գնայ.
Գիտեմ ծնօղքս պիտի երթան տես նոցա,
Ի վերայ մեր լուր հարցանեն աներկբայ։
Անդ տեսանեն նոր եկողաց տանց հանդէս,
Հարց մարց նոցին և ընտանեաց փառս պէս պէս.
Տան հարան՝ աղջիկն, ամէնք՝ իւրեանց գլխոյ գէս,
Ոսկեթելիւք հիւսեալ ման գան դէն ու դէս։
Տան երանի գիտեմ նոցա լի ու լի,
Որ հանդիպան սա կերպ բարի վիճակի.
Բայց ինքեանց ոչ կաթիլն յաչաց պակասի,
Վասն մեր որ կամք անօգ յօտար աշխարհի։
Ամենակալ Աստուած հզօր Տէր գթած,
Տես աղաչեմ զարտասուս մեր ծնողաց.
Յաջողութիւն տո՛ւր մեզ փութով արա՛ այց,
Եւ շտապեա՛ մեր ի Վանտոսպն վերադարձ։

digitised by A.R.A.R.@

Դառնամք անդրէն առ ծնողս մեր սրտամաշ,
Որ յաղագս մեր Հոգոց Հանեալ կարդան վաշ.
Մեզ տեսնալէն վերջ ակնուն կալ ի նաշ,
Նայգեօթին սիրեն առնեմք խաշ և ճաշ։
Զգեմք ի բաց զենթադրութիւնս այս տխուր,
Որ մարդոյ սիրտ գիտէ խոցել իբրև թուր.
Որչափ խորհիմք և մտածեմք ողջն է զուր,
Հարկ է խմել պանդխտութեան զայս մրուր.
Թողումք վախճան օրհնեալ կամաց Աստեղին,
Թող գործադրէ ինչ որ վասն մեր է բարին.
Աստ ծռելով շեղեմք գրնթացս մեր գրչին,
Գրել կարգաւ որ ինչ դիպան մեզ յուղին։
Վառեալ սիրով ընդ միմեանս իբր անշէջ,
Մեր կարաւան որպէս առնէ չուն անվէճ.
Ցայս գեղանի և աննման ձորին մէջ,
Որ գրեթէ բնաւ չունի եղ և էջ։
Երեկոյի ժամ զարկոցէն զկնի։
Մեր դէմ եղեալ հասաք պանդոկ Մաթրաչի.
Գոգ թէ այսօր խոնջ չունեցաք մեք իսկի,
Զի ուղին էր յոյժ սիրուն և զուարճալի։
Յետ հանգստեան մեք պատանիքս միաբան,
Դուրս գնալով խաղացաք ոնց Հայաստան.
Խաղն էր օտոզ՝ ջուխտէշ՝ կտրոց և սարգան,
Արև մտաւ տուաք նոցա նոր վախճան։
Ապա եկեալ նստաք սեղան խմբով մեր,
Առ Ամիրխան առաքինի բարի ծեր.
Ի ձեռն պատրաստ Փրկչին բարիս կիթն և կեր,
Վայելելով ձօնեցաք փոյթ փառս յնթեր։

digitised by A.R.A.R.@

Յետ այնորիկ Փշավանցի Կարապետ,
Այր ծաղրածու հէքիաթագէտ յոյժ վարպետ.
Զորս հինգ հէքիաթ ասայ մեզ անդ յետ առ յետ,
Շատ խնդալէն զմեզ լայուց մերթ ընդ մերթ։

Այնուհետև քուն մեր վերայ իշխելով.
Ական թօթափ մտաք նորա ընդ շքով.
Խանի անկիւն խարխշտի մեր խմբով,
Զուարեցաք զմեզ Հսկողին յանձնելով։

Մինչ ելաք վեր յարշալուսին յայն գլխէն,
Դեռ արեգական չէր արթնցեր յիւր քնէն.
Նախաճաշիկ մի առնելով ողջս մէկէն,
Ի չու անկաք յոյս մեր եղեալ յԱնմահ էն։

Երթամք ահա հանդարտիկ հով զիփիւռով,
Երկու դեհից քաղցր ձորոյս դիրս դիտելով.
Ի սիրտ լերանց մէն մի յիւր անդն ինչ սիրով,
Գործի լեալ են առաւօտեան շաղերով։

Երջանիկ են տեղուս նատողքն իրաւի,
Որ գող և սպա քրդայ մօտէն կան հեռի.
Ատ թէ ոք զիւր դէզ թողու յարան ամսով մի,
Զայն վառելու համար ահ գող չիք իսկի։

Ցաւալի է այս մասին մեր Հայաստան,
Որ յամէ ամ կրէ վնաս բաւական.
Ո՛րչափ աղքատ Հայ զիւղօրայք զանազան,
Դառն աղէտիս ժուժեալ տոկան առանց ձայն։

Վասն զի չկայ պաշտպան և տէր աղքատին.
Որ պատժելով չարն՝ տայ վախճան եղեռին.
Եթէ մի ոք գողն իւր յայտնէ վայ անձին,
Ցայն ժամանակ ատոյգ մահն է իւր բաժին։

digitised by A.R.A.R.@

Նորա համար այս աղէտին առանց ձայն,
Գիտեն տանել ողորմելիքն ամենայն.
Այս զրկանաց վրէժխնդրութեան դատաստան,
Որքոց պաշտպան Տեառն արելեն ապաստան։

Բնութիւն տեղւոյս զլացեր է լայն սահման,
Զիք ընդարձակ վայր, որպէս է Հայաստան.
Զգիտեն ինչ է դիր դնել և գարընցան,
Եգիպտացի ցորեան ցանեն գոգ միայն։

Ցորենի աեղն յաճախեալ են աստ ահա,
Պարզ ծխախոտ, կանեփատ և լուբիա.
Սոյն սա վերջին այնքան առատ բազմանալ,
Որ նաւերով փոխեն մինչև յԵւրոպայ։

Կամաց կամաց հասաք ի ծայր յայս ձորոյն
Որ գրեթէ փակեալ կպեր Սև ծովոյն.
Մերձ Շէկբլուր, որ Պոզթափա տան անուն,
Խոտրեցաք գալ ի Պոնտոս մեք իսկոյն։

Երբ լեռնակի աւարտն առաւ կարաւան,
Հանդիսացաւ իւր քաղաքի աեսարան.
Եկեղեցիք մզկիթ՝ պանդոկն և շուկայն,
Եւ ընակիչք որք զբաղեալ գործովք կան։

Առընթեր մեզ ալէծփեալ տեսանի.
Նաև խրոխտ՝ գոռոզ Սև ծովն ամեհի.
Բեռնաբարձ նաւս ի գիրկս նորա շար շարի,
Ցանքոյթ լեալ կան իբր պարաւոր ի խաղի։

Ի մէջ սոցա շքեղակերտ փառաւոր,
Մի շոգենաւ երևի իբր թագաւոր.
Թև չունի նա թռչի գոգ թէ թևաւոր,
Մինչ ընթանայ՝ իւր չի հասներ ձիաւոր։

digitised by A.R.A.R.@

Ո՞ ոք դիտէ յայս լեռնակէն Պոնտոսի՝
Մի ճոթէն միւս ամենայն ինչ տեսանի.
Եթէ մի ոք ասա՝ քանի ժամ գայ նստի,
Չեմ կարծեր ես՝ թէ բնաւին նա յոգնի։
Զորս հինգ լոպէ քաղաքն այսպէս դիտելով,
Դարձէն ի վար ի՛ջաք հանդարտ ճեմելով.
Ծովոյ հանդէպ մի սրճարան գնալով,
Քանի գիշեր անդ օթեցաք մեր խմբով։
Մեր բնակեալ սրճարանի բուն իսկ տէր,
Հայրենակից մեզ՝ ի Վանայ երկրէն էր.
Ամօք յառաջ եկեալ Պոնտոս բնակէր,
Եւ ըստ կարի մեր խմբին նա եղոյց սէր։
Հարկ եղև մեզ չորս օր մնալ ի Պոնտոս,
Մինչ Պաթումէն շոգենաւն գայ կրկին հոս.
Քանզի՝ նորա օրով յառաջ լեալ եմք որս
Մեր կամաց դէմ այսպէս գործեր են ափսոս.
Շոգենաւուց ընկերութիւն իբրու թէ,
Ցիւր մէջն այս կերպ մի որոշումն արեր է.
Ո՞ր նաւու օրն ինչ մարդ ի տեղս ժամանէ,
Պարտէ զայն մարդ նոյն շոգենաւն փոխարկէ։
Ա՜հա՛ այսպէս ազատութիւն բռնաբար,
Սակս արծաթոյ ի գործ դնեն չարաչար,
Ազատ է մարդ՝ կեղծեն բանիւք անպատկառ,
Եւ զաղքատին սիրեն խեղդել ձայն իսպառ։
Մեր ժամանակ զուր չերթալու աղագաւ,
Պոնտոսի դիրս յոյժ կարճառօտ և սակաւ,
Նկարագրել փութամ թէև ոչ կարգաւ,
Թերթս դիտողէն ներումն խնդրեմ ինձ կանխաւ։

digitised by A.R.A.R.@

Զի ինձ նման մի պանդուխտ հիւր պատանի,
Որ եմ դժբախդ կարեկցութեան արժանի.
Զորս աւուր մէջ որպէս կարէ Պոնտոսի,
Դրից՝ վիպաց հմուտ լինել լի ու լի։

Զայս առնելով արտիս փափագ զոյգ տողով,
Կուզեմ յայտնել տեղւոյս Հայոցն ասելով,
Այսու նոցա բարի նախանձ շարժելով,
Կամիմ որ զիմ թերին ընուն ուղղելով։

Երբ հիմնագիրք սոյն Պոնտոսի հիմն դրին,
Ցափն Սև ծովոյ զայս յարմար վայրն ընտրեցին.
Ցառաջ երթալն դուշակելով զգացին,
Նորա համար միաբանեալ շինեցին։

Ցետ սակաւուց եղև քաղաք շահաստան,
Նկեալ զեղան վաճառականք բաւական.
Բերէին ատ բերս Ասիոյ զանազան,
Ատի նաւուք փոխարկէին յայլ սահման։

Ցաւուրս մեծին Միհրդատայ մեր քաջի,
Որ էր քեռայր սէգ Տիգրանայ խրոխտի.
Սոյն սա քաղաք այնքան ծաղկեալ հռչակի,
Մինչ նախանձու Հռովմայեցւոցն ենթարկի։

Գան ի վերայ բազում զօրօք ահագին,
Եւ մարտնչեն ընդ Միհրդատ արքային.
Նմա երբէք ոչինչ առնել չկարէին,
Թէ դաւաճան չէր լեալ ինքեան իւր որդին։

Զքաջեալն այն առ պաշարողն լու ի լու,
Ցուզայաբար հօրն իւր եղև մատնող.
Մատնեաց զհայրն՝ քաղաքն արար հարկատու,
Եւ ժառանգեաց վայ և նզովս իւր այսու։

digitised by A.R.A.R.@

Միջոց մի սա նոյն յաղթողաց տակ մնաց,
Կալով հլու ծերակուտի կանոնաց.
Ի նոցանէ անկաւ ի ձեռս ևս Յունաց,
Մինչ ի վախճան իշխանութեան կայսերաց։

Յետոյ Տաճիկք յաւուրս Ֆէթիհ Մեհմէտի,
Տիրապետեալ տէր կարգեցան Պոնտոսի.
Անտի մինչ ցայժմ անսայ նոցա հրամանի,
Վաշ մուսացեր է վեհութիւն իւր նախնի։

Սոյն Պոնտոս՝ որ Տրապիզոն ևս կոչի,
Առ յափս շինեալ կայ Սև ծովոյն խրոխտի.
Յարևելից ունի ինքեան գրացի,
Կիւմիւշխանայն՝ Բաբերդ՝ Կարին ըստ կարգի։

Յարևմտից ունի Օլտու և Սև ծով,
Քաղցր Քրասոն ևս կայ ահա տարա քով.
Թրիպօլի Հարաւէն կայ յոյժ շքով,
Իսկ հիւսիսէն Պաֆռումն է իւր գիւղերով։

Երկրիս նստողք երեք ազգէ բազկանան,
Որք են Տաճիկ՝ Յոյն և որդիք Թորգոմեան.
Եւրոպացի մի քանի հատ գերդաստան,
Բացառութեամբ եկեալ են ասա լոկ դեսպան։

Սակս հնութեան յիշելու գոհ արժան բան,
Հին պարիսպէն զատ ինձ թուի թէ չկան.
Մեր վանք՝ մզկիթք թէև ունին հին նշան,
Բայց չեն հասներ վերյիշելոյս հնութեան։

Ինձ թուի թէ երկու հազար խանութեան։
Պոնտոսի մէջ առ ծախս արդ մարդիկ կան.
Արհեստներն են մեծաւ մասամբ նախնական,
Նոր արուեստք դեռ գրեթէ մեզ ոչ գիպան։

digitised by A.R.A.R.@

Մեր ազգին թիւ ըստ իմ կարծեաց թուի թէ,
Պոնտոսի մէջն՝ ութ հարիւր երդն անցանէ.
Այս հաշուոյս մէջ՝ թէ սխալ ինչ մտեալ է,
Ընթերցողէն խնդրեմ՝ որ զիս չմեղադրէ։

Այլ նորա տեղն առնէ գլուխն ի ձեռին,
Եւ անաչառ սրբագրէ զիմ թերին։
Այսու օգուտ գիտեմ առնէ Հայ ազգին,
Ճիշտ տանց համարն ցուցանելով քաղաքին։

Պոնտոսի մէջ Հայոց անուան սեպհական,
Քարկիր երեք եկեղեցի կան միայն.
Զեն գործ դարուս՝ այլ յանցեալ դարս կառուցան,
Մեղք որ չդիպայ գրել նոցա թուական։

Բաց յայսցանէ ունի Հատ մի մենատան,
Որ գետադալձ Պետրոս դրեր քար հման.
Չի յետ մեծի այն Զրօրհնեաց կատարման,
Կառոյց զայս վանս՝ վկայ հրաշիցն յաւիտեան։

Ափսոս՝ որ այժմ չիք միաբան ի մէջի,
Եւ է խապառ բարձի թողի վիճակի.
Իր ողջ կալուածս և արտարայս բարելի,
Ենթարկեալ կան քաղաքացւոց հրամանի։

Ատ Հայն ունի մի Հոյակապ վարժարան,
Որոյ նման կերտ տեղս զոգ թէ սակաւ կան.
Մէջի ուսմունս թէ բաղդատես շինութեան,
Քո բաղձանաց պիտի չգտնես համաձայն։

Հին դրութեամբ Հայ մանուկն ատ ուսանի,
Ընթացս այս է կարեկցութեան արժանի։
Յաղագս ծախուց ամ ըստ ամէ թէ և լի,
Վարժապետաց համար գումարն վճարի։

digitised by A.R.A.R.@

Պոնտոսեցին պէտք է գթայ իւր որդւոյն,
Եւ օր յառաջ կարգադրէ գպրատուն.
Այսու պիտի պտուղ քաղէ նա իսկոյն,
Զի զաւակն անդ լինի հմուտ և գիտուն։

Հին պատմագիրս Հայոց գործոց մէջն իսկի,
Ծանօթ ինչ բան չիք ի վերայ Պոնտոսի.
Գուցէ լեալ են դէտ և իշխան անուանի,
Ափսո՛ս՝ որ վարք նոցին այժմ չեն մեզ յայտնի։

Կիլիկեցւոյց իշխանութեան լուսաւորով,
Տեղւոյս Ստեփան դէտն գնացեր անդ ժողով.
Երևի թէ յայն ժամանակն ատ յոլով,
Երդ հանեալ էր մայր Հայաստան մեր լալով։

Որովհետև կատաղի ազգն Թաթարաց,
Հայոց արեամբ ողջ Հայաստան ոռոգեաց.
Քանի՛ փափուկ կոյս և տղայ ի տես հարց,
Ցափշտակեալ գերի տարաւ առանց դարձ։

Այս պատճառաւ բազումք թողին Հայաստան,
Ընդ տիեզերս խուճապեցան ցիր ու ցան.
Նոյն գաղթելոց գուցէ ոմանք հոս դիպան,
Տեղւոյս անդորը զօդ ծծելով ոչ չոքան։

Ցայս քաղաքէն էր այն ընտիր քահանայն,
Տէր Յովհաննէս արիւնաներկ նոր վկայն.
Որ ի Բիւզանդ ի մէջ տաճիկ բազմութեան,
Արիաբար վկայեալ է ՅԱթմէյտան։

Ըստ պատմութեան Յօհան էրէց նօտարին,
Ցաւուրս եաւուզ սուլթան Մէլիմ արքային.
Ճիշտ ինն հարիւր վաթսուն և եօթ հայ թուին,
Սեպտեմբեր մէկ լեալ է վախճան վկային։

digitised by A.R.A.R.@

Ծաղկեալն ի վարս Հոգեսէր տէր Կիրակոս,
Զիւր առաջին զօդ ծծեր ատ ի Պոնտոս.
Լքեալ զաշխարհն ստացեալ է լոկ Սաղմոս,
Մեր միանձանց լեալ է կանոն և քարոզ։

Սա ընդ Սարգիս մեծի արհլոյն միաբան,
Ընտիր արամբք լցուցեալ են Հայաստան,
Յաւուրս սոցա բաւ վանօրայք շինեցան.
Որպէս թուէ մեր Առաքել պատմաբան։

Բարի վարուք այսպէս կացեալ ի մարմնի,
Վախճանեցաւ ի ծերութեան Հասակի.
Ի Հոլչայ գիւղն՝ որ է Սիւնեաց աշխարհի,
Ի մեր հազար եօթանասուն ճիշտ ամի։

Պոնտասէն էր նոր նահատակն այն արդար.
Խրատօղի արդոյ ազգ Պաղտատար.
Սա ի սէր Տեառն հեղեր զարիւն իւր յօժար,
Վկայելով՝ խայտառակեր բելիար։

Մեղք որ հմուտ չեմ իւր վարուց լիովին,
Զի շիրմէն զատ, վէպք իւր հանդէպս ոչ ելին.
Հազար հարիւր չորս տասն մի եօթն մեր թուին,
Տեսի փոխման արբոյս ի գիր լոկ տարին։

Մերձ նահատակս ննջի ի քաւն հանգստեան,
Կիւզէլ անուամբ տէր Յովհաննէս արբազան.
Սա ի Պոնտոս նստեալ է զահն հովուական,
Եւ խնամեր զիւր ժողովուրդն սեպհական։

Յետոյ հազար երկուք հարիւր մեր թուին-
Քսան և մի զամ ևս դիր դու հետ նմին.
Լքեալ զաշխարհն՝ ննջեր յուսով ծերունին,
Ակնապիշ լեալ՝ աչէ զարդասա Փեսային։

digitised by A.R.A.R.@

Յայս շիրմատան մէջն իբր օտար ոհ ննջի,
Քաջ երաժիշտն և վարժապետն անուանի.
Պուէտ Պետրոս մեծ քահանայն Վանեցի,
Փառս պարծանաց Վասպուրական աշխարհի։

Երախտաւոր գոլով երկրին սա Վանայ,
Մեր կրթութեան սակս զոհ եւ զանձն անխնայ.
Նախ քան զսա մեր պատանիք բայ, մակբայ,
Չէին գիտեր, խօսքիս բազումք կան վկայ։

Երբ մուտ գործեաց սա մեր Տասպայ դպրատուն
Տարաւ հետն անդ փափագելի դիտութիւն.
Յետ ինչ ամաց ունեցաւ շատ ձեռնատուն,
Այսու փութով հռչակեցաւ իւր անուն։

Շնորհիւ սորին սկսեալ է յայն օրէն,
Վան ազատիլ տգիտութեան ճիրանէն.
Իւր այս բարեաց և երախտեաց փոխարէն,
Թող պսակէ Տէրն ընդ սուրբս իւր համօրէն։

Նուաստ գրիչս մինչդեռ էի հնգամեայ,
Կայտառ մանուկ մի և անմեղ երախայ,
Երբ ծնողիս հետ դպրոցէն ներս մտայ,
Երանելւոյս քաղր տիպարին հանդիպայ։

Ձեռքէս բռնեալ հայրն իմ սմա յանձնարար,
Թէ ճեռս կրթեա՛ և լեր որդւոյս բարերար.
Այլ բենի ձայն, որ ականջաց էր դժուար,
Զանիւք սորին եղեն ինձ յոյժ դիւրատար։

Ափսոս որ այժմ ննջեր հանգիստ հող յօտար,
Մեր հայրենեաց այս հազուագիւտ բարերար.
Ի վերայ իւր շիրմին չունի մի լոկ քար,
Եւ լեալ է ոհ գեռնի հողին հաւասար։

digitised by A.R.A.R.@

Ցանուն սորին իւր ձեռնասունքս պէտք է որ,
Մի մահարձան կառուցանեմք փառաւոր.
Ապա թէ ոչ առ նա մնամք պարտաւոր,
Որ տուաւ մեզ երբեմն շատ դատ շահաւոր։

Եկն եհաս ժամն, որ հրաժեշտ մեր յեռին,
Մատուցանեմք Միհրդատայ քաղաքին.
Չի զմեզ տանող դուռ շոգենաւն ահագին,
Դրոշակ բացեալ հրաւէր կարդայ առանձին։

Զայն տեսաք ոչ վառազ վառազ մեր խմբով,
Ամէն ոք զիւր թեռն ու տոպրակ շլկելով.
Զառի վերէն վար իջանեմք տքալով,
Ճիշտ Սև ծովու նաւահանգիստն գնալով։

Հասաք առ ափն այն երերուն մեծ դաշտին,
Որոյ միւս եզր ՝ուր էր՝ մեր աչք չզիտեցին.
Հէջ պատանիքս զայսպիսի ծով ահագին,
Նոր դիտելով՝ ահիւ լցաք գլխովին։

Մեք կարծէաք Ռշտունեաց ծովու պէս,
Մեծ ծով չկայ յաշխարհիս մէջ դէն ու դէս.
Երբ տեսաք զայս՝ որ էլ յաչաց մեր հանդէս,
Լեղապատառ լեալ գոչ դարձաք թէ մարդ կէս։

Թուի փոքր ինչ հանդարտութիւն չունի ծով,
Եւ թոյլ քամին ձգեր յալեաց մէջ վրդով.
Մակոյկք՝ նաւակք ի վերայ իւր իրր գինով,
Շարժեալ ճօճան յար էլ և էջս առնելով։

Ողջ մակոյկպանք խառնաշփոթ ձայնիւ լի,
Պօռան կանչեն ընդդէմ միմեանց անճառնի.
Ի նաւակ իւր մէն մի կամի զմեզ բռնի,
Դնել՝ տանել մինչ շոգենաւն ուղղակի։

digitised by A.R.A.R.@

Ծովու երկիւղն պաշարեալ էր զմեզ արդէն,
Տարակուսեալ չէաք նայեր դէս ու դէն.
Նոյնպէս սոցա ժխոր՝ կռիւն գոռգ մէկէն,
Խլեց տարաւ՝ ինչ որ խելք կար մեր գլխէն։
Մեր փորձառու ընկերաց մին երբ որ մեր,
Լուաւ երկիւղն՝ և նկատեաց մեր պատկեր.
Սփոփելով հանդիսացաւ քաջալեր,
Ասելով թէ ալիքս մեզ ցաւ չեն առթեր։
Յորդորեաց մեզ՝ որ մտանեմք ի նաւակ,
Եւ ունայն տեղ չկորուսանեմք ժամանակ.
Փութալ գնալ ի շոգենաւն համարձակ,
Քանի՛ որ լոյն ամփոփել չի արեգակ։
Մեր փորձառու եղբօր յորդորն լսելով,
Ոգի առեալ արիացաք ըշտապով.
Զմեզ Անեղի բարի կամացն յանձնելով,
Որոշեցաք գալ ի նաւակ մեր խմբով։
Վերջի բարև տալով ափանց Պոնտոսի,
Անքայլ ոտիւք չուն սկսաք շեշտակի.
Մի քառորդ չափ երթն առնելէն զկնի,
Հիւր էաւ զմեզ մեծ շոգենաւն ի գրկի։
Յեռուստ կուսէ զեկավարին գոռգ մօտիկ,
Առ խելս նաւին տեղ մի դատաք խորոտիկ.
Եւ պարզելով մեր փսիաթ և թաղիք,
Զուարեցաք անդ մեր խմբով հանդարտիկ։
Երբ ճոխ արփին լոյն ժողովեալ մտաւ մար,
Եւ նորա տեղն լուսին յերկնից ել կամար.
Մեր շոգենաւն իբր մունետիկ ազդարար,
Զայնիւ չուն իւր դուրս դարձողացն յայտ արար։



digitised by A.R.A.R.@

Ժամ երկուքին սկիզբն արար իւր երթին,
Իբր սրընթաց նժոյգ Հայոց աշխարհին.
Դառ Սև ծովուն ճեղքէր զալիսն ահագին,
Որք փորձէին սատան կալ իւր արշաւին։
Մեծ շառաչմամբ թլփատէ նա զչուն իւր,
Եւ նպատակն առ այս նմա հովն և հուր.
Մինչ հոլովին անիւք փութով յաղի ջուր,
Փրփուրս առնեն իբր անդամանդս լուսափիւռ։
Այսպիսաբար գնամք ահա ցնծագին,
Յայցելութիւն քաղցր Քրիստոն քաղաքին.
Անիւղ լապտերք երկնից կապոյտ կամարին,
Զբօսանաց մեր նիւթ լեալ են առանձին։
Վճիտ լուսին ահ ինչ անուշ իւր լուսով,
Լուսազարդեր մատաղ լերինս զայս՝ և ծով.
Հանդարտութիւն ի վերայ մեր տիրելով,
Ի ցամաքի գոգ նստեալ կամք ապահով։
Մի քանի ժամ սա կերպ խաղաղ և արթուն,
Նստեալ հանգիստ առնէաք պարզ պատմութիւն.
Վերջ յանձնեցաք մեզ խնամոց Բարձրելոյն,
Մրափեցաք խաղաղ քաղցր ի քուն։
Առաւօտեան արև ծագէն զկնի,
Քրիստոնայ տեսաք պատկեր նոզելի.
Զի նաև զիւր երթն կատոյց նորա առաջի,
Տալ առնելով մարդ և վաճառս շեշտակի։
Յետ այնորիկ սկիզբն արաք նոր չուոյն,
Դէպ ի Սամսոն՝ թողեալ զյետ մեր զՕրտուն.
Գալեալ խաղաղ վէտ վէտ ալիք Սև ծովուն,
Զուականաց մեր յաւելուն ցնծութիւն։

digitised by A.R.A.R.@

Հասաք Սամսոն արևն նոր անդ մտաւ մար,
Եւ լուսնակին շող կաթեցաւ յոյժ պայծառ.
Ի գնացից նաւն մեր եկաց Հոն երկար,
Մինչ քաղաքին հետ զիւրն կնքեաց տուրն ու առ։
Յետոյ մնաս բարեաւն ասաց իւր վերջին,
Ընդ թոյլ ալիս չուն սկսաւ նա կրկին.
Ղեկն ուղղեաց դէպի Սինապ քաղաք հին,
Եւ ըշտապէ իբր վազկան գետ անդ ուժգին։
Արշալուսին հետ գրեթէ միաբան,
Նաւն մեր ահա հաս Սինապայ յանգիման,
Նաւահանգիստ սորին է յոյժ պատուական.
Գոգ Սև ծովու յեզերս կայ ոչ իւր նման։
Քաղաքս է մին ի հին շինից աշխարհին
Որ դեռ նշխարք ինչ հնութեանց երևին.
Արիստոտէլ փիլիսոփայն նախ սորին
Ծծեաց զուտ օդն մինչ տեսաւ լոյսն արեգին։
Ժամանակ չէ՝ որ մի առ մի քաղաքին,
Սորագրել զանց և զդիրս լիակին,
Զի շոգենաւն սկսեաց զիւր չուն կրկին,
Ուստի խնդեմ առ այս չդատէք Տոպեցին։
Սուր ընթացիւք Ինապօլուոյ երթամք տես,
Հանդարտիկ հովն՝ ձօնէ ծովուն ծիծաղ հեզ.
Ծնրադրական փառք զոհութիւն Աստուած քեզ,
Որ այսպիսի երջանիկ ժամ եառուր մեզ։
Խումբ խումբ նաւի մէջ չուանքք ինչ չքնաղ,
Նստեալ երդեն ամէն ոք իւր լեզուաւ խաղ.
Երիտասարդն՝ ծերն ու աղքատ՝ կոյր ու կաղ,
Աշխոյժ առեալ՝ վարեն ամ կիրպ քաղցր կենցաղ։

digitised by A.R.A.R.@

Մեր մէջէն ևս Խոտիկ օղլին և Պատուը,
Խանդիւ լցեալ նստան Հանդէպ միմեանց սուր.
Մինն առաւ զիւր ջուրթակն ի ձեռ՝ մինն չնկուռ,
Թելս կքելով սկսեցին զարնել գուռ։

Թէ և ամօք մեր Հայ վարպետք լեալ են ծեր,
Եւ թոռք նոցին յուսմանն էին մեզ ընկեր.
Բայց ծերութեան գոգ այժմ Հասակն ուրացեր,
Իբր պատանի նոր եռանդ են ստացեր։

Զարնեն երգէն եղանակաւ քաղցրաձայն,
Միմեանց Հարցմանց առնելով փոյթ պատասխան.
Այսու իւրեանց ունկն մատուցող բազմութեան,
Կրկնապատիկ դիւր տան անմեղ ցնծութեան։

Եւրոպացի ճանապարհորդք ևս մեզ պէս,
Քաղցր դաշնակաւ կան ցնծութեան ի կրկէս,
Միաբերան Հնչմամբ իւրեանց երկրի ծէս,
Նստեալ երգեն մինն լիք ձայնիւ և մինն կէս։

Ահա այսպէս ամենայն ոք իւր խմբով,
Վարեն կենցաղ իբր ցամաքի ապահով.
Այն խնդութիւն՝ որ մեք ունիմք այժմ մեր քով,
Չեմ կարող ոչ նկարագրել սատ գրով։

Հայրենակից մի Աւանցի նաւապետ,
Ցօտարութեան մէջ պանդխտիլ գայր մեր Հետ.
Սա երբ տեսաւ սոյն շոգենաւն մեծակերտ,
Զարմանալեօք գոգ թէ լցաւ յետ առ յետ։

«Ասէր ինքնին թէ ո՞ւրպէս սա առանց Հով,
«Ջերթն իւր առնէ անառագաստ ապահով.
«Ճեղքեալ զալիսն պատռէ գնայ վազելով,
«Կէս փորն ի ջուր խէցխէցի պէս լողալով։

digitised by A.R.A.R.@

«Կարի մեծ գործ գիտէ տեսնալ այս շոգին,
«Ով հնարեաց լուսաւորէ Տէր հոգին.
«Տես թէ ո՞րպէս զայս մեքենայն ահագին,
«Ֆռացուցեալ դարձուցանէ նա ուժգին։
«Այս օգտաւէտ գիւտ մեր երկրին չէ ծանօթ,
«Ի Հայկայ դարն գիտես ապրիմք՝ մեզ ամօթ.
«Թէ լինէր սա՝ մեր խեղճ Հաննէս Վանայ մօտ,
«Զընկղմելով՝ չէր եղերգեր զայս սև բօթ։
Աղթամարայ նաւով էլանք,
Դեպ մեր Աւանց ճամպախ ինկանք.
Ոստանայ դէմ եկի որ հասանք,
Սև աւուր սև արև տեսանք։
Ուշադ թուխ ամպ երկինք պատեց,
Ասաղ ու լուսնակ զմէն ծածկեց.
Սաստիկ քամին պինտ պինտ փչեց,
Ափ ու ցամաք աչքէս խլեց։
Գոռաց երկինք գոռաց գետին
Խռովաւ ջուր կապտա ծովին.
Կրակտաց չորս դեհէն երկին,
Ահ դող տիրեց ո՞հ իմ սրտին։
Երկինք գետին գիտես չկայ,
Մգլե հիւ հիւ բան չերէվայ.
Սարի նման դնտեղ կուգայ,
Վ՛ուշ խոր անդունդ դէմս կբանայ։
Գոռ ծով դու քո Տէր կսիրես,
Խեղճ անճարիս գութ մի անես.
Քաղցր արևէս զիկ չհանես,
Քար սիրտ մահի ձեռք չը մատնես։

digitised by A.R.A.R.@

Ա՜խ ծով կորի՛ քո դնաեղներ,
Որ զիկ չանեն ձկներաց կեր.
Մօր մէկ հատ եմ էլ տնաւեր,
Գթա՛ և մի կեանքէս հաներ։
Ո՞հ գազան ծով ոզորմ չունի,
Զդիժարանալ վէրէս բակի.
Ալեաց հրաման ետ ուղղակի,
Նաւ կուլ տուին վաղվաղակի։
Քէլէք ասէք իմ ծնողին,
Թող նստի լայ ուր սև որդին.
Թէ Հաննէս կեր էլաւ ծովին,
Արև մտաւ մէր կորճին։
«Հարիւրաւոր Հանէսին պէս պարմանի,
«Ոշտունեաց լափեր է ծովն կատաղի.
«Թէ շոգւոյս գիւտ ի մեր Վանտոսպ փոխադրի,
«Այս կերպ դիպուածք ոչ գան Հանդէպ մեզ իսկի։
«Մեք ի Վան երբ՝ նաւով գնամք ի Դատուան,
«Հանդիպիմք շատ դժուարութեանց զանազան.
«Գոռ ալիք գան իվերայ մեր իբր գազան,
«Բռնանալով մեզ գոգ թէ մահ սպառնան։
«Ուստի քանի՛ չէ սկսեր դեռ քամին,
«Ծոց ինչ խաղաղ փախչիմք մեք յայն միջոցին.
«ՅԱռեռ՝ Բարկաթ՝ Գանձակ՝ Սարի և Էրէրին,
«Մինչ անցանէ անուանեալ Հոմն Սևշեխին։
«Լինի երբեմն՝ որ շաբաթով ունայն տեղ,
«Դատապարտեալ կամք ի նոյն ծոց ո՛հ արտնեղ.
«Զի ծովն ցոյց տայ մէն մի ահա՛ պէտ դնաեղ,
«Որք գան կարգաւ իբր հատեցեալ յարդի թեզ։

digitised by A.R.A.R.@

«Եթէ շոգւոյ գործածութիւն օգտակար,
«Ի մեր Վանտոսպ մտանելոյն լինէր ճար.
«Յայնժամ գիւղիս մեր տի ծագէր օր պայծառ,
«Եւ Վանայ ևս օգուտ հազար անպատճառ։

«Ո՛վ որ սիրէ Վասպուրական մեր երկիր,
«Իմ առաջարկ բանիս լինի ունկընդիր.
«Օրով յառաջ ճեպել պարտի փութով ժիր,
«Շոգին ի Վան գործադրելոյն տայ զրգիռ։

Ահա մինչ նա զիւր ներկայ բանս աւարտէր,
Եւ յաջողումն Փրկչի կամացն յանձն առնէր.
Յայնժամ մեր նաւ Ինապօլի ժամանէր,
Զոյգ ժամու չափ անդ մնալով շունչ առնէր։

Մինչ շոգենաւն կրկին յիւր ձեռն առաւ չուն,
Մեր արեգակն ևս շտապեալ մուտ ի քուն.
Բոլոր աստեղաց յերկնից կամարն պսպղուն,
Շարան շարան ի դուրս եկին յոյժ սիրուն։

Զթերի ճաճանչս ոգին անդրէն լիուլի,
Կրկնապատկէր պտրուն լուսին փարելի.
Հաստատութիւն այն գոգ մի դաշտ ծաղկալի,
Արձանացեալ կայր ահա՛ մեր առաջի։

Վայելեալ մեր զայս անապատ բարութիւն,
Փառք ի բարձունս առաքէաք Բարձրելոյն.
Որ Հաստատեաց զայս ամենայն մեր սիրոյն,
Ուրեմն բիւրիցս օրհնեալ լինի իւր Անուն։

Սուղ ինչ այս կերպ դիւր ժամանակ վայելեալ,
Յերկնից կամարն տեսաք ամպօք խղճոդեալ.
Խիստ մրրիկն ընդ անձրևին ակսալ,
Եւ Հեզութեան ծովուն սատան երևեալ։

digitised by A.R.A.R.@

Վաղվաղակի նա իբր գազան կատաղեալ,
Յետ միմեանց հանէր դնտեղս լեռնացեալ.
Ողջ չուականքս յայս դիպուածէս սոսկացեալ,
Եւ դալստեան մահուն տհաճ սպասեալ։
Բազումք ի մէնջ թմբրեալ էին ոհ արդէն.
Յանակնկեալ պատահարիս շփոթէն.
Անզուսպ ալիքն նոցա մանար մունար գոռ ամէն,
Ծովն քշելով, թողին ոչինչ շորեղէն։
Ոգի ի բուռն մեր նաւաստիք միաբան,
Նաւապետի բանիցն անսան փութաջան.
Կամին փախչիլ յապահով ինչ մի սահման,
Մինչ փոխէ ծովն զայս ընութիւն իւր դաժան։
Զհասին իւրեանց նպատակին ինչ օգուտ,
Զի ճաթեցաւ ջրի կաթսայն փոյթ ընդ փոյթ.
Ալիք մեր նաւն բարձրէն մինչև խոր անդունդ,
Եվ և իջօք առնեն աւազ թունդ ի թունդ։
Այս չար արկածս, որ եվ այսպէս մեր դիմաց,
Ամէնիս ևս խլեալ տարաւ յոյս կենաց.
Ծովն ամեհի սպառնայ իւր բիրտ զօրաց,
Որ պատրաստեն մեզ կեր թռչնոց և ձկանց։
Եկին ի միտս յայս դառնաղէտ միջոցին,
Ալեկոծիլն, իմ հոգելոյս ծնողին.
Թէ որպէս նա իւր ընկերօք միասին,
Յայս ծովու մէջ քաշեր փորձանս ահագին։
Դեռ զիս չծնեալ վաճառական էր ընտիր.
Տփխիս՝ Պոլիս երթևեկեր նա շատ տիր.
Տոկուն ընութեան՝ գործունէի ունէր ձիր,
Եւ օրինակ լեալ էր այսու բազմաց ժիր։

digitised by A.R.A.R.@

Երբեմն մինչդեռ Տփխիս գնայր նա նաւով,
Ընկերաց հետն առեալ վաճառս ապահով,
Ի Վասփուրէն մինչ մտանեն յայս Սև ծով,
Մատնին ի ձեռս սաստիկ հողմոց հապճեպով։
Ցայնժամ յերկուս կիսեալ նաւին բեկանի,
Բազումս կորզեալ ի խորս ծովուն սուզանի.
Մեռնողաց թիւն երեսունէն աւելի,
Ասէր լեալ են ուղևոր և նաւատի։
Ազատեալք որ քառասունի չափ են լեալ,
Տախտակամած լաստի վերայ մի կացեալ.
Երկու օր միշտ ի ձեռս ալեաց տատանեալ,
Մերկ և նօթի ընդդէմ մահու ճակատեալ։
Յետ զոյգ աւուրց ողորմութեամբ Բարձրելոյն,
Նաւ մի անցեալ դիտէ սոցա նեղութիւն.
Անմիջապէս գայ և առնէ օգնութիւն,
Հանեալ ի դուրս տայ եղկելեաց փրկութիւն։
Զայս դիպուածս՝ որ ծնողս երբեմն ինձ պատմեր,
Ի նեղ ժամուս եկեր յաչացս դէմ կացեր.
Հանէսի մահն՝ որ Վանայ ծովն է առթեր,
Հօրս արկածին հետ ինձ շատ են բռնացեր։
Ի վերայ մեր անագորոյն գազան մահ,
Ծանիք սրեալ չուականացս առթէ ահ.
Բազումք ի մէնջ յուսահատեալ արդէն ախ,
Ասեն նորա կրից զոհ եմք չիք ինչ շահ։
Ցայս միջոցին մեր Ամիրխան ծերունին,
Ետես կոծն իմ՝ Բարսեղին և Ղազարին.
Վազվազակի ըստ փորձառու հասակին,
Մեզ քաջալեր հանդիսացաւ առանձին։

digitised by A.R.A.R.@

«Որդեակ սիրուն ասէր նա անդ մեզ լալով,
«Մի վհատիք միշտ այսպէս ոչ մնայ ծով.
«Տէրն ողորմած է ունի ոհ քաղցր գորով,
«Փրկէ զմեզ՝ զինքն օրհնեցէք ջերմ սիրով։
«Նա չուզեր՝ որ այսքան մարդկանց բազմութիւն,
«Ի նանիր տեղ թաղին յալիս Սև ծովուն.
«Եթէ յիշէք դէպս Յովնանու գդմենուոյն,
«Ձեր Հօր պիտի մակաբերէք գթութիւն։
«Ի վերայ մեր գիտեմք անշուշտ գթայ նա,
«Եթէ ասեմք Նինուէացւոց պէս մեղայ.
«Ուրեմն որդեակ եկէք ամէնքս մեք հիմայ,
«Իբր Անառակն դիմեմք լալօք յուս նորա։
Յոլգորականս մեզ նա տալէն զկնի,
Ի գուճս անկեալ կանգնեցաւ փայթ յաղօթի.
«Տէր տես ասէր՝ մեր այս վտանգն սոսկալի,
«Եւ մի տար մեզ ծովուս ալեաց կատաղի։
«Սատեա սմա Տիբերական ծովուն պէս,
«Որ կամի մեր զանուն ջնջել յաշխարհէս.
«Փրկեա զմեզ եկեալ հասեալ յայս վշտէս,
«Եւ դիւրացո՛ մեր դէմ եղեալ զասպարէզ։
«Կատաղութիւն սանձեա հողմոցն և ալեաց,
«Եւ մի հաներ իսպառ զմեզ ի մտաց.
«Տես Տէր քաղումք արդէն ելին ի ձեռաց,
«Ուրեմն փութով յուսաբեկիցս արա այց։
«Թէև գիտեմք այս ամէնն է մեր մեղաց,
«Որք ընդ վզեալ դէմ կացաք քոյդ Հրամանաց.
«Բայց ճանաչեմք քեզ՝ որ ես Հայր ողորմած,
«Եւ չես թողուր երբէք զմեզ ի ձեռաց։

digitised by A.R.A.R.@

Այս և սրա նման աղօթս նա անդրէն,
Մատուցանէր ջերմ սիրով առ գթած էն.
Եւ աղօթից հետ տաք կաթիլք ուղխորէն,
Իբր մարգարիտս վար թափէին յաչերէն։
Օրհնեալ է Տէր՝ զի եռես մեր նեղութիւն,
Յուսահատից գթալով եւ փրկութիւն.
Վաղվաղակի սատեաց ալեաց և ծովուն,
Եւ ջլատեաց անդ ամեհի ոյժ հովուն։
Կարճեցոյց և սա վաղ ընդ փոյթ շիթս անձրևաց,
Զի խիտ խիտ ամպք տեղի տուին հետ միմեանց;
Նոցա փոխան պայծառ արևն ի բարձանց,
Ճառագայթեալ երևէր մեզ գերազանց։
Փառք քեզ Աստուած՝ օրհնեալ լինի քո Անուն,
Որ յայտնի ցոյց տուիր մեզ քո գթութիւն.
Որպէս փոխեաց ծովն զիւր գազան ընութիւն,
Եւ ստացաւ այսպիսի քաղցր հեզութիւն։
Պահ մի յառաջ՝ մեր մեծ ահիւ պակուցեալ,
Ի դէմս տխուր մահուան գալուն սպասեալ.
Այժմ նորա տեղ՝ յոյս փրկութեան մեզ դիպեալ,
Եւ ամէն մարդ ցնծութեան է ենթարկեալ։
Մրրկին տեղն սկսեր հովն զզզուն,
Որ զիւր տայ մեր շոգենաւի գնալուն.
Եւ սարի պէս մեծ մեծ ալեաց Սև ծովուն,
Մանտրիկ ծփանք յաջորդեալ են յոյժ սիրուն։
Դէմ եդեալ եմք երթամք Վոսփորն անվեհեր,
Հանդէպ միմեանց նստեալ ընկեր առ ընկեր.
Բարդ բարդ խրկեմք ի սուրբ սրտէ փառս յնթեր,
Որ զմեզ ոչ եառ՝ ծովու ալեաց լինիլ կեր։

digitised by A.R.A.R.@

Մեր արեգակն դադրեցաւ յիւր գնալէն,
Եմուտ ի քուն յերերուն դաշտս Ջրեղէն.
Նորա փոխան լուսին յերկնից կամարէն,
Ծագեր է մեզ զիւր քնքուշ շողն Համօրէն։
Բաց ի ծովէն՝ և ի յերկնից ուրիշ բան,
Զուականացս ոչ կան յաչացս յանդիման.
Ո՛ւր են կայտառ արք և բլուրք զանազան,
Որ կերպ կերպ մեզ ցուցանէին տեսարան։
Նոքա իւրեանց սահմանեալ վայրն մնալով,
Ի նոցանէ կամք հեռի շատ մղոնով.
Ըստ Առակաց չնչին փայտին անսալով,
Առանց հետի շաւիղս ի ծովն առնելով։
Փառք քեզ Աստուած՝ քեզ պատիւ այժմ և հապա,
Որ եսուր շատ հանճար որդւոցն Ադամայ.
Թէ որպէս նոյնք իրրև ցամաք աներկրայ,
Սիրեն գնալ նաւով յալեաց ի վերայ։
Քեզ ճանաչեմք ո՛վ Արարիչ մերս ցեղի,
Սոյն արհեստիս նախկին վարպետն իրաւի.
Զի յառաջ դու ցոյց եսուր հօրն մեր Նոյի,
Կերտել տապան՝ և մնալ հայր աշխարհի։
Անուհետև դարուց ի դարս թոռք նորա,
Փորձառութեամբ մինչև յայս կէտ բերին նա.
Սովաւ գտաւ մեծ Կոլոմպոսն Ամերիկայ,
Եւ այլք՝ բազում հեռի կղզիք յետ նորա։
Լուսնակի տակ չարս ընկերովք միաբան,
Կերաք առ ձեռն զընթրիսն մեր առանց ձայն.
Վերջ Հաւատոյն Շնորհալի հօրն կարդեալ բան,
Ասելուն պէս կամն յարդեցաք մրափման։

digitised by A.R.A.R.@

Պառկաք Հանդիստ՝ և ննջեցաք քաղցր ի քուն,
Հազար հազար աստեղաց տակ շողշողուն.
Հանդարտիկ հովն տուլէր մեզ սիզ գզգզուն,
Եւ նորոգէր նուաղելոյս զօրութիւն։

Յառաւօտեան մինչ չէր ծներ նոր արփին,
Քուն թօթափեալ փառս ձօնեցաք Արարչին.
Որ իւր անքուն աչօք հսկեաց մեր խմբին,
Պահպանելով զմեզ յարկածից չար դիւին։

Ի խելս նաւին չոքս ընկերօք կամք նստեալ,
Վէտ վէտ յալիս նորին սիրով պշուցեալ.
Մերձ առ մեզ խումբ թլբին ձկանց ժողովեալ,
Նաւին մերոյ զոգ ուղղեցոյց են եղեալ։

Պարեն խաղան ի խորս ծովուն լողալով,
Երբեմն յերես ջրոյն ցատկեն ֆշալով.
Ուճուճակաց կլոր ծակէն ալիկալով,
Վտակի պէս ջուր տան ի դուրս նոյնք յոլով։

Սոյնք ցեղ ցեղի թշնամութիւն առնելով,
Ընդ միմեանս անհաշտ կերպով կան խռով.
Ճիշտ սա է որ՝ միշտ մեծ փոքրին իշխելով,
Կեր տայ հէքն իւր որկորին գութ չանելով։

Ատ մինչ տեսաք կերպ կերպ թռչունս փետրալի,
Յոյժ խնդացաք՝ որ ցամաքէն չեմք հեռի.
Ասացին մեզ՝ քանի ժամէն զկնի,
Պիտի դիտեմք դիրս Վոսփորին սխրալի։

Կարծեմ մի ժամն անց ի վերայ այս ազդին,
Զոկելու չափ տեսաք շղթայն Վոսփորին.
Գլուխ նաւին առ նա ուղղեալ առանձին,
Ի տես նորին փութամք ահա խնդագին։

digitised by A.R.A.R.@

Ժամ տաանի մօտ յերեկոյի միջոցին.
Ներս մտաք մեք ի բերանէն նեղուցին.
Առ այս տուաք փառս գոհութիւն Անեղին,
Որ հոկելով մեզ հասոյց մեր փափագին։

Ցերկու դեհից յափն Վոսփորին կարգ ի կարգ,
Ի՞նչ գեղեցիկ կան տեսանին ճոխ պալատք.
Յորս բնակին Տաճկի հարուստ նախարարք.
Ինչպէս նաև Եւրոպացիք՝ Յոյնք և Հայք։

Ծանր ընթացիւք նազինազ մեր առնեմք չուն,
Ի հանդարտիկ ծոց Վոսփորիս յոյժ սիրուն.
Ճոխ գիւղօրայք տնկօք և տամբք գոյնզգոյն,
Յետ միմեանց մեզ ի հանդէս գան գոգ խկոյն։

Հարիւրաւոր նաւակ՝ մակոյկ բեռնակիր,
Կան իբրև ասող ծոցիս յերես ցանուցիր.
Տեսէք որպէս բեռին առեալ անձանձիր,
Թիավարեալ երթայ մէն մի յիւր տեղ ժիր։

Քանի քանի փոքր շոգենաւ մարդով լի,
Պօլսէն դարձեալ գան ի Վոսփոր շար շարի.
Հանդիպելով գիւղից կեդրոն մի առ մի,
Եւ փոխադրեն ասոի անդ Հիւրս ըստ կամի։

Ցերեկոյին արև մտի գոգ թէ հետ,
Մեր շոգենաւն գիւրն աւարտեաց ներկայ երթ.
Մաքսին գիմաց մերձ ի կամուրջն փայտակերտ,
Ջիւր մեծ խարիսխն ի ծով ձգեաց յետ առ յետ։

Բազում մարդիկ նաւակաւ ի ցամաքէն,
Եկեալ էին առ շոգենաւն մեր արդէն.
Որպէս զի փոյթ նոքեկս Հանեալ ի նաւէն,
Տարեալ տայցեն եղբարց մերոց Համօրէն։

digitised by A.R.A.R.@

Բայց ինչ օգուտ դարձան անդրէն ձեռնունայն,
Ուստի եկին սրտակոտոր նոյնք լման.
Զի մաքսատուն գոյ լինելով մեր ելման,
Հանդիսանայր խոչ մեզ աւաղ նոյն ժամայն։
Պարտաւորեալ մնացաք անդ յայն գիշեր,
Եւրոպացի մի մեծ նաւի առընթեր.
Զերկիւղ ծովուն տիպ ի մտաց հանեալ մեր,
Եւ եղեալ էր խաղաղ վիճակ մեզ ընկեր։
Հազար հազար լուսափիւռ ջահ և լապտեր,
Մեր չորս բոլոր իւրեանց լուսով զարդարեր.
Ամէն մի նաւ յիւր վերայ մի հատ կախեր,
Որ երթևեկ նաւք գան գնան անվեհեր։
Սոյա նման ցամաք կուսէն մէն մի տան,
Լապտերս վառեալ, կան ահա մեր յանդիման.
Նոր դիտելով իմ զայսպիսի տեսարան,
Ապուշ կրթեալ կամ ի մեծի զարմացման։
Զի հայրենիք մեր Վան քաղաքն հնաշէն,
Ճրագին լոյս չերևիր մեզ ի դրսէն.
Որովհետև երդիք տանցն են ի ներսէն,
Եւ տեսանես լոյս ոչ իսկի փողոցէն։
Գիշերն մինչ ժամ գրէթէ չորս նստելով,
Դիւր ժամանակ անցուցաք անդ ժղլելով.
Ապա անդորր խաղաղ կերպով պառկելով,
Մութն լուսի հետ փոխարկեցաք յոյժ սիրով։
Առաւօտեան զկնի ծագման արևուն,
Դարձ գնալու պատրաստեցաք մեք իսկոյն.
Մեզ Հիւրընկալ նաւին տալով մեր ազնոյն,
Նստեալ մակոյի չոգաք ուղիղ մաքսատուն։

digitised by A.R.A.R.@

Անդ մաքառողք մեր թեռ տօպրակ խառնեցին,
Զիր՝ ձուկ պանիր ինչ ունէաք աշեցին.
Երբ դիտեցին որ չկայր ինչ թանկագին,
Ակռաժաժիկ մի կորզելով գնացին։

Երկու կորիճ Հայ բեռնակիր նոյն ժամայն,
Շալակեցին մեր մանտր և մունտրն ամենայն.
Մեզ առաջնորդ լեալ տանէին Վազիր խան,
Զի մեր թաղէն անդ մարդ կային բաւական։

Խեղճ պարմանիք ծանր բեռանց տակ տղզելով,
Ոտ ոտաց տեղ Հազիւ փոխեն տքալով.
Ոլոռն ոլոռն տաք տաք քրտինք սրալով,
Ցերեսաց կան և վար թափեն չռալով։

Այն սա եղբարց դժբախտ վիճակն երբ տեսայ,
Ցաւահարեալ տրտրելով մաշեցայ.
Ի՞նչ է Տէր իմ, ինչ է յանցանք՝ մեղ սոցա,
Որ այսպիսի դառնութեան կան ենթակայ։

Հաշտ աչօք հեղ մի նայեա Տէր ի բարձանց,
Տես այս տխուր վիճակ մեր խեղճ Հայկազանց.
Սուրբ գթութեամբդ արա սոցա փրկիչ այց,
Եւ ազատեա յայս ծանրակիր տանջանաց։

Ո՞Հ մեր վիճակն կարի դառն է և լեղի,
Ա՜խ ու ցաւով և հեծութեամբ խպտռ լի.
Ազատ Հայն որ երբեմն տէր էր աշխարհի,
Այժմ կայ յօտար՝ այլոց ծառայ և գերի։

Անխիղճ մարդիկ մեր թագ՝ պատիւ՝ գաւազան,
Գութ չառնելով խլեալ առին զամենայն.
Ներկայիս ևս դժբախտ որդւոցս Թորգոմեան,
Սիրեն ջնջել զանուն յերկրէն յաւիտեան։

digitised by A.R.A.R.@

Ուրեմն Տէր ասա խնդրեմ ցոյց քո զօրութիւն,
Մի ձգեր նոյնս, որ բռնանան հէգ հայուն.
Բաւ համարեա՛ մեր այս զրկանս՝ նեղութիւն,
Վաղվաղակի հրատարակեա՛ փրկութիւն։
Տես թէ որպէս սոյն պարմանիք պատուական.
Յայս ահագին բեռանց ներքև ճնշեալ կան.
Տար հայցեմ Տէր, տա՛ր զայսոսիկ Հայաստան,
Որք առնեն անդ գիւրեանց առ տուրն, վարն ու ցան։
Թռչուն ձագովք Տէր յիւր սիրէ մնալ բոյն,
Հաւն զոյգ թևօքն պատսպարէ իւր ճեռոյն.
Վոկ Հայն է ո՛հ, որ թողերէ գիւրեան տուն-
Եւ շատ տարի տեսանէ ոչ դէմս որդւոյն։
Այս տարագիր կենաց մեր Տէր տո՛ւր վախճան,
Եւ զրկելոցս արա՛ արդար դատաստան.
Ո՛ւր տեղէն որ լեալ եմք յաշխարհս ցիր ու ցան՝
Կրկին տա՛ր մեզ և կացո՛ անդ ոնատան։
Ցուշիկ յուշիկ կէս ժամու չափ միաբան,
Բեռնակրաց հետ քալելով հատաք խան.
Անդ թաղեցիք մեր և ծանօթք ամենայն,
Խումբ խումբ եկին նոր եկողացս տեսութեան։
Համբոյր միմեանց տուաք անդրէն ջերմ սիրով.
Ուրախութեան զարտասուն հետ թափելով.
Ցեռոյ հանդէպ նոցա ի ծունկ չոքելով,
Զուղին որպէս մեր համառօտ ճառելով։
Վերջ յիւրեանց տան վերայ՝ հարցին ի մէնջ բան,
«Թէ յորպի՞սի վիճակի մէջ կան տոկան.
«Որդւոց մերոց տանե՞ն խնամ փոյթ ուսման,
«Եթէ անտէր բարձի թողի կան խոպան։



digitised by A.R.A.R.@

Մեր թաղեցւոց այս կարևոր մեծ հարցման,
Յետագայիւն պատասխանեց Ամիրխան.
«Առ այս ասէ ձեր տնէն ձեզ նամակ կան,
«Անդ գտանէք ուրախ, տխուր ամէն բան։
«Զէ հարկ լինիլ այս մասին ձեզ բօթաբեր,
«Իւր նամակաւ թող խօսէ ոհ ձեր ընկեր.
«Ի ձէնջ լալօք խեղճ Ամիրխան խնդրէ ծեր,
«Որ ընտանեաց ձեր նայէք ոչ անտարբեր։
«Յիշեցէք զայն նուիրական ձեր պայման,
«Որ արարիք երբեմն Տիրոջ յանդիման.
«Անդ ուխտեցիք դուք ի մէջ Հայ բազմութեան,
«Որ ապրէիք ձեր կնոջ հետ միաբան։
«Մոռանալով մոռացեր էք դուք զայն ուխտ,
«Ուստի երկար կայք և մնայք աստ պանդուխտ.
«Տարին զոյգ հեղ չկամիք նոցա գրել թուղթ,
«Այսպիսաբար դուք դժրեր էք ձեր սուրբ ուխտ։
Զայս ասելով սրտա նորա տուաւ գիր,
Թէ առ եղբայր տար առանձին ընթերցիր.
Տուաւ նաև յանուն նոցին ձուկ՝ պանիր,
Որ ուտելով Վան զընտանիս յիշեն ժիր։
Մէն մի նոցա պատուիրեաց անդ Ամիրխան,
Որ ընտանեաց նամակաց տան պատասխան.
«Զլինի ասէ տեղի տաք դուք ծուլութեան,
«Անկարեկից լեալ լսէք ոչ նոցա ձայն։
«Այլ գթալով իբրև ընկեր վշտակիր,
«Աղաչանաց նոցին լերուք ունկընդիր.
«Գրէք որդեակ սփոփանաց նոցա գիր,
«Որ կարդալ տայ մայր զաւակին քանի տիր։

digitised by A.R.A.R.@

«Ձեր այդ նամակն առ նոսա է թանկագին,
«Վանզի այդու հմտանան ձեր վիճակին.
«Մատաղ որդւոյդ գիտեմ պատմէ անդ քո կին,
«Նժդեհութեանդ չարքաշութիւն դառնագին։

«Յորդոր կարդայ քնքուշ մանկանց քոյ սիրուն,
«Որ սուրբ սրտիւ խրկեն յնթերս գոհութիւն.
«Կարի քաղցր է նոցա ձայն ահ Բարձրելոյն,
«Պիտի լսէ և առնէ ձեզ գթութիւն։

«Եթէ սա կերպ ընձեռնի ձեզ մեծ օգուտ,
«Ուրեմն գրէք ձեր ընդանեաց նամակ փոյթ.
«Այսու ծերոյս զիղձ պսակէք դուք անշուշտ,
«Որ դարձ խրկելն՝ նոցա թղթոցն եղի ուխտ։

«Բանզի մինչդեռ ի Հայրենիս էի Վան,
«Եւ սև բախդէս կայր մնայր ինձ ձգել զայն.
«Ողջ թաղեցիքս իմ Պոլիս գալս երբ լուան,
«Խուռն բազմութեամբ ի տուն իմ գալ սկսան։

«Ի մէջ բազմաց Հաւատարիմ զիս գտեալ,
«Անդ տային ինձ զիւրեանց նամակս ծրարեալ.
«Նաև լալովք խեղճ ծերունւոյս թախանձեալ,
«Որ ճառեմ ձեզ նոցա վիճակ դառնացեալ։

«Ո՜հ խնդրէին յատուկ յինէն ողբալով,
«Թէ Հայր արա՛ ի վերայ մեր դու գորով.
«Երբ ժամանես ի մեծ Պոլիսն Աստուծով,
«Սա՛ մերոցն՝ թէ մեր հետն էր կայք խռով։

«Ի՞նչ է պատճառ որ մեր գրոց պատասխան,
«Զուղարկելով՝ զմեզ մատնէք տրտմութեան.
«Այր և կնոջն այս է շաղկապ և պայման,
«Տէր կայ յերկինս՝ առնէ արդար դատաստան։

digitised by A.R.A.R.@

«Սատ նոցա ի սէր Փրկչին Յիսուսի,
«Բաւ է զմեզ ձգեն անտէր և գերի.
«Մեր կենաց պէս՝ հաց՝ չուրն ամէն է լեզի,
«Յայս վիճակի մէջ տոկալ չէ կարելի։
«Յաջորդելով տարիք միմեանց շար շարի,
«Զմեռք չոգան՝ եկին գարուն ծաղկալի.
«Վարդէն կարօտն էառ սոխակն նազելի,
«Աւաղ միայն մեք մնացաք վշտալի։
«Խանձարուրի մէջ ձգելով փոքր որդիք,
«Մեծանալով լեալ են կայտառ պատանիք.
«Միշտ հարցանեն մեզ յեռագոյն աւանիկ,
«Մայրիկ սիրուն՝ երբ պիտի գայ մեր Հայրիկ։
«Յետ ինչ աւուրց գան պիտի տամք յոյս նոցա,
«Բայց բանից մեր ոչ հաւատան այժմ նոքա.
«Զի կեղծ լինիլն համոզուեր են աներկբայ,
«Այսուհետև խաբելու ևս ճար չկայ։
«Պատմեա՛ Հայրիկ մեր լծակից սիրելեաց,
«Գուցէ գթան իւրեանց մատաղ զաւակաց.
«Թող Վան դառնան փոյթ ըստ նոցա խնդրանաց.
«Եւ տան պատկ որդւոց և մեր բաղձանաց։
«Մեզ պիտոյ չէ բեհեզ՝ ոսկի և արծաթ,
«Եւ ոչ նաև եւրոպական փափուկ զարդ.
«Մեզ համար բաւ է Վանայ չիթ՝ շիլայն հատ,
«Զնոյնս հագնելով լինիմք ուրախ և զուարթ։
«Փորապաշտից պէս չեմք հոգար մեր որկոր,
«Քանզի գիտեմք է նա անկուշտ դժոխք խոր.
«Մեք յօժար եմք ուտել հանդիսատ մի հաց չոր,
«Զատիկ օր թան՝ պահք օր վոշ և սխտոր։

digitised by A.R.A.R.@

«Առաս Հայրիկ թող ցուպ ի ձեռն գան ի Վան,
«Հոս տեղ ապրիմք մեր զաւակօք միաբան,
«Աստուրիս ամէն ինչն է ընդունայն,
«Փոշ՝ զարդի տեղ մեզ մի պատանք կայ միայն։
«Եթէ այս կերպ մերկ ելանեմք յաշխարհէ,
«Վայ նորա որ՝ դրամ կուռքի պէս պաշտէ.
«Ճիշտ մարդն այն է՝ ինչպէս Փրկիչն մեր ասէ,
«Որ անկորուստ զիւր գանձն յերկնից մէջ գանձէ։
«Մեր կենակիցք թէ գան ի Վան շեշտակի,
«Եւ Պօլսոյ պէս աստ աշխատին բատ կարի.
«Վասպուրականն արգաւանդ է և բերրի,
«Աշխատողին վարձատրէ լի ու լի։
«Այս և սոր նման շատ բան ասացին,
«Մեղք որ բազումս միտք ծերունւոյս կորուսին.
«Ուրեմն որդեակք ունկ մատուցէք իմ խօսքին,
«Եւ տուէք վերջ այս ցաւալի վիճակին։
«Դարձէք ի Վան խնդրեմ ի ձէնջ ես լալով,
«Ձեր ծնողաց՝ կանաց՝ որդւոց գթալով.
«Շուայլ երկրէս հրաժարեցէք դուք փութով,
«Թէ աչ եղծմունք իւր ձեզ բռնեն հապճեպով։
«Բազումք ի ձէնջ գիտեմ որդեակք ես արդէն,
«Թէ անց վնաս կրեալ էք յայս քաղաքէն.
«Սա գիւթելով ձեզ համոզեր կուրօրէն,
«Որ կալով աստ մաշիք երթաք համօրէն։
«Ձեր այդ ծաղիկ հասակն խնդրեմ ի նանիր,
«Խենդի պէս մի անցուցանէք յայս երկիր.
«Վան տէր էիք աստ եղեալ էք բեռնակիր,
«Ձեռն ի ծնօտս եղեալ մէջէք դուք մի տիր։

digitised by A.R.A.R.@

«Դարձէք խնդրեմ առ վշտահար ձեր ընկեր,
«Որ ձեզ համար արտօսր ցօղէ իւր աչեր.
«Ցուցէք նոցա ձեր կայտառ դէմս և պատկեր,
«Եւ վերջ տուէք հոգոց նոցին սրտամեռ։

«Անդ աշխատէք դուք նոցա հետ միասին,
«Ցանդաստանս ձեր՝ որ կիս է գոգ Եդեմին.
«Ադամ՝ Աբել՝ Ենովք՝ Ենովս հետ Նոյին,
«Անդ վաստակեալ են ըստ բանի Անեղին։

«Դուք ևս նոցա նման քրտինս թափելով,
«Սերմն ձեր ի հող ձգէք յԱստուած յուսալով.
«Առ այս խօսքիս լերուք որդեակք ապահով,
«Որ նա միոյն փոխան ձօնէ ձեզ յոլով։

«Մինչ գայ աշուն Տիրոջ պարգևս զայն ամէն,
«Բերէք ի տունս ձեր գինին՝ միրգ և ցորէն.
«Ի նոցանէ կոյր՝ որք՝ այրուոյն համօրէն,
«Բաժին հանէք՝ զի օրհնեսցէ զձեզ Էն։

«Միւս մնացեալն քո ընդանեացդ հետ ողջոյն,
«Վայելելով տուր Տուողին գոհութիւն.
«Եթէ լինիս այսպէս զթոտ և սիրուն,
«Ցոբայ նման պիտի օրհնէ Տէր քո տուն»։

Մինչ աւարտէր զիւր այս յորդորն և խրատ,
Բաբելարոյ մեր Ծերուկ Հայրն ալեզարդ.
Ողջ ներկայք որ քանի չափ կային մարդ,
Մրմնջելով նստեալ այն լացին անդ։

Ի դէմս այլոց Հոն Վռանենց Գարեգին,
Ասաց զայս խօսքն Ամիրխանին լալագին.
«Գոհ եմք Հայրիկ այդ յորդորէդ թանկագին,
«Որ յօգուտ մեր զլուցեցիք առանձին։

digitised by A.R.A.R.@

«Մեք այժմ ուխտեմք առաջի քո միաբան,
«Ո՜ փրկաւոր ալևոր Հայր պատուական.
«Որ քիչ օրէն վերադառնամք փոյթ ի Վան,
«Եւ ապրիմք մեր ընտանեաց հետն անխափան։
«Ի՞նչ է այս մեր վարած կենցաղն իրաւի,
«Մտածողի աղիքն իսկոյն գալարի.
«Զուրկ յընդանեաց թափառիմք ասա շատ տարի,
«Միթէ չունիմք մեք մատաղ կին և որդի...։
«Դառնամք այո՛ դառնամք պիտի շուտ ի Վան,
«Մեր մանկութեան յայն ցանկալի օրորան.
«Քեզ ևս Հարաց դարձուցանեմք Ամիրխան,
«Զեմք ուզեր որ ննջես յօտար գերեզման։
Զայս ասելով ելեալ չոգան խմբովին,
Բարեղ տարան զի յանձնեն իւր ծնողին.
Իսկ Ամիրխան առաւ Ղազար պատանին,
Դնաց յէյիպ առ տղայի խորդ քեռին։
Յետ գնալոյ բարեկամաց նոյնժամայն,
Ես, մահտեսի Մարխաս և Փաքի Զրբաշեան.
Մին Հօրքրոջս տեգերորդի, մին փեսայն,
Ի բաղանիս ելեալ չոգաք միաբան։
Մերկացայ անդ իմ կեղտ՝ պատառ շոր՝ շապիկ,
Մտաք տաք տուն քիչ մի հանդչաք հանդարտիկ.
Անտի ելեալ ներս գնացաք ոտ բոպիկ,
Որ թափեմք հոն մեր յանձէն աղտն ու քրտինք։
Երեք տղայ դեռ ինձ նման պատանի,
Սփածանելեաւ կան մեր աչքի առաջի.
Մեզ համար են եկեալ դժբախդքն ուղղակի,
Որպէս զի մեզ լուան մաքրեն ըստ կարի։

digitised by A.R.A.R.@

Զիս մաքրազ Հայ տղային անդ Հարցուցի,
Ի՞նչ է անունդ եղբայր՝ և ո՞ր երկրացի,
Կա՞յ քեզ Հայր մայր՝ կամ կարեկից դրացի,
Զայս քո վիճակն չե՞ն նկատեր նոյնք իսկի։
Հոգոց Հանեալ ետ պատասխան ինձ անդէն,
«Սասց կոչի անուն Հիգոյս իմ Բաբկէն.
«Ես եմ բնիկ Սեբաստիոյ քաղաքէն,
«Կայ Հայր՝ բայց ցաւս ոչ տեսանէ կուրօրէն։
«Իմ այս մատաղ վիճակին ո՛Հ չզթալով,
«Դպրոցի տեղ տաք տուն դրեր զիս սիրով,
«Այսու Հիգոյս դառն ապագայն դիտելով,
«Իւր Հանապազ կարդամ նզովս ողբալով։
«Աւա՜ղ դահիճ են իմ ծաղիկ Հասակին,
«Տեղւոյս խիտ օդն՝ պիղծ գոլորշիք և շոգին.
«Տե՛ս թէ որպէ՞ս դալկացեր գեղն իմ դէմքին,
«Յետ ինչ աւուրց զիս Հնձէ մահն անդատին։
«Քանի՞ քանի ո՛Հ ինձ նման պատանի,
«Կան ի Պոլիս յայս անպատիւ արՀեատի.
«Մեր ծնողքն են նախատանաց արժանի,
«Որ զայս վիճակ մեզ Համարեալ են բարի։
«Մեր պատրիարգն և ազգային վարչութիւն,
«Չե՞ն տեսաներ արդեօք մեր զայս կացութիւն.
«Է՞ր չեն սատեր մեր ծնողաց խստագոյն,
«Որպէս զի թոյլ տան մեզ գնալ դպրատուն։
«Զմեզ խնամել նոցա պարտքն է սեպՀական,
«Վանզի են մեր տէր Հոգևոր և իշխան.
«Թէ չկարեկցին մեր այս անարգ կացութեան,
«Խեղճ պատանեաց մեղաց մնան պարտական»։

digitised by A.R.A.R.@

Ահա այսպէս հէգ Տոսպեցուոյս այն Հարցման,
Դժբախտ Բաբկէն տայր այսպիսի պատասխան.
Մինչ սիրտ կոտոր ի նմանէ լսայ զայն,
Աչի Տէր տայ թշուառութեանց ձեր վախճան։
Տացցէ նաև ձեր ծնողաց գութ սրտի,
Որ յուշ ածեն զայս ձեր վիճակ ցաւալի.
Զգան եթէ կայ մեզ որդի սիրելի,
Եւ հոգ տանեն ձեր կրթութեան ըստ կարի։
Այսու լինիք ապագային դուք բարի,
Յուսալ ծերութեան նոցա զաւակ շնորհալի.
Բազումք ծնողաց ձեր տան յայն ժամ երանի,
Մինչ տեսանեն ձեզ բարի մարդ յաշխարհի։
Լուեալ լինէին զայս ամենայն խեղճ Բաբկէն,
Աստց լալով «զոհ եմ եղբայր յոյժ զքէն.
«Թող զայդ մաղթանս մեր Արարիչն լսէ էն,
«Եւ փրկէ զմեզ յայս նողկալի վիճակէն»։
Յետ լուացմանն ելեալ չոգաք Թախտա խան,
Որ կայ Մահմուտ փաշա կոչեալ պողոտայն.
Առ Գրիգոր բարեկամն մեր Զրբաշխեան,
Եւ հիւր կացի իւր միջոց մի բաւական։
Մեր բարեկամք վասն իմ խորհուրդ արարին,
Թէ փոյթ մի գործ ճարել պէտք է ազային.
Որպէս զի ձեռս բերցէ նովաւ հացագին,
Եւ քիչ ու շատ ժամանէ իւր փափագին։
Որոշելով արժան տեսան լուիլս,
Զիս Հայու տուն սպասաւոր դնելս.
Տէր Խաչատուր քահանային ասին դու,
Շատ մարդ գիտես՝ լեր այս մասին յանձնառու։

digitised by A.R.A.R.@

Շնորհակալ եմ ի նմանէ սիրալիր,
Որ բազմելոց խօսքին եղև ունկընդիր.
«Յանուն զարմի սոյն պատանւոյն՝ ձեր խնդիր,
«Աստ վաղիւն ի գործ դնեմ ժիր աւ ժիր։
«Յառաւօտեան ի ձէնջ խնդրել փափաքիմ,
«Զայս տղայն շուտ ուղարկէք գայ ի Թախտիմ.
«Առ իս՝ որ սուրբ Յարութեան ժամն բնակիմ,
«Որպէս զի փոյթ կատարի իղձ ձեր և իմ»։
Միւս օր կանուխ արշալուսի ճիշտ ատէն,
Ի չու անկեալ անցաք ծովու կամուրջէն.
Դէպի Բերայ Փարուզաղի փողոցէն,
Զառիվերէն վեր ելանեմք տքալէն։
Ինչևիցէ դժուարութեամբ գոգ անլուր,
Ժամանեցաք Հազիւ առ Տէր Խաչատուր.
Մեծ յարգանօք տալով ձեռաց իւր Համբայր,
Նստաք Հանդէպ իմաք մի մի սուրճ և չուր։
Թողեալ զընկերս առեալ տարաւ զիս միայն,
Առ Հանճարեղ Տէր Թադէոս քահանայն.
Ասաց նմա «քեզ յանձն առնեմ զայս տղայն,
«Որ է մի որբ մեծատոհմիկ անպաշտպան։
«Հրահանգեա զինքն ըստ քո բարի բնութեան,
«Ուսո՛ ինչ որ պիտոյէ իւր կրթութեան.
«Որպէս զի ճիշտ մարդ լինելով գայ ի վան,
«Եւ բերցէ փառս առաքինւոյդ յաւիտեան»։
Բանս էրէցին Տէր Թադէոսն սիրտ յօժար,
Ընդունելով՝ ընկալաւ զիս Հայրաբար.
Զորս Հինգ ամիս կացի առ նա՝ ոչ երկար,
Վերջ չոքայ մի Վանեցւոյ տուն յԻսկիւտար։

digitised by A.R.A.R.@

Կուլիչան էր անուն նոր այս տիրոջն իմ,
Սա հանգուցեալ հօրս էր կարի մտերիմ.
Կէս տարի հոս թուի կացի կարծեօքն իմ,
Ատի կրկին վերադարձայ ես ի Լիմ։
Ծառայի կեանք ցաւալի է և ախուր,
Չկարէ զհետ ազատ կամաց գնալ իւր.
Այլ ակնկոր տիրոջ խօսքին լսէ սուր,
Ապա թէ ոչ իւր կայ մնայ թուք և մուր։
Ցարշալուսէն մինչ կէս գիշեր եղկելին,
Ցոտից վերայ կայ աշխատի դառնագին.
Երբ ի մահիճն երթայ ննջէ առանձին,
Անդ տայ փոքր ինչ դիւր վաստակեալ իւր անձին։
Այսպիսեաց ո՛հ հացն է քացախ՝ ջուր լեղի,
Միթէ կեանք է այս կերպ ապրիլն յաշխարհի.
Մի չար բերան զՎ.ան անիծեր ինձ թուի,
Որ իւր որդիք կան յայս վիճակ ցաւալի։
Ես այս պաշտօն չէի ուզեր իրաւի,
Բայց ստիպեալ ակամայից յանձն առի.
Ա՜խ սակս ուման զՀայրենիս իմ թողի,
Սոյն վիճակին բախդն արար զիս արժանի։
Ծանօթք Հիքոյս ո՛հ չարարին զթութիւն,
Դպրոցի տեղ զոյգ գործ ցուցին ինձ իսկոյն.
Ես ընտրեցի երկու չարեաց փոքրագոյն,
Սափրչութեան փոխան՝ մնալ Հայու տուն։
Քանի քանի պարկեշտ մանուկ զեղանի,
Կան արուեստիւ սափրչութեան զզուելի.
Պատճառք նոցին խիստ վայոց են արժանի,
Որք տղայոց արարին խիղճ ոչ իսկի։

digitised by A.R.A.R.@

Ամօթ հազար այն քարասիրտ ծնողաց,
Որք զայսպիսի օգուտս խորհին զաւակաց.
Դնեն յայս գործ՝ հանեն զնոյնս ի ձեռաց,
Աւաղ այսու մտնեն յարիւնն անմեղաց։
Պէտք է կարդալ իւրաքանչիւր Վանեցին,
Զայս ցաւալի ճշմարիտ բանս առանձին.
Եւ յորդորէ պարագայից տղային,
Որք սթափեալ տան վախճան այս եղեռին։
Սա կերպ վաստակ ո՞հ մեզ համար չէ բարի,
Վանզի բազում պարկեշտք լինին որս չարի.
Մեծ ամօթ է այն ծնողացն իրաւի,
Որ յայսպիսի թմբրութենէն չսթափի։
Ո՞հ ամօթ է և ազգանք յոյժ կարի,
Նաև այսու Վասպուրական աշխարհի.
Զի ճեռք ոմանց որդւոց իւրոց ոչ բարի,
Բերեն այսպէս զիւր նախատինս ցաւալի։
Ո՞հ չէ վայել սէգ Արծրունեաց մեծի տանն,
Որոյ որդիք լինին սափրիչ՝ բաղնեական,
Թող սթափի Սեբաստիա ևս և Վան,
Եւ այս ցաւին գտանեն փոյթ մի դարման։
Պէտք է նաև Ջանան խորհին միաբան,
Եւ ի Պոլիս չհանեն այսչափ գաղթական.
Ապա թէ ոչ լեռ սուղ ամաց ինչ անցման,
Հայ չես կարող տեսանել ի Հայաստան։
Սոցա պէս են Բաղէշ, Բալու, Մուշ, Կարին,
Ակն, Եզնկայ, Խարբերդ, Գեղի խմբովին.
Եթէ չառուի յառաջ փոյթ այն ազէտին,
Հայք սպառեալ յերկրէ իսպառ անյետին։

digitised by A.R.A.R.@

Հազարաւոր ուժեղ կորիճ պարմանի,
Որք էին իսկ փեսայութեան արժանի.
Տեսէք որպէս ընդ ասեղօք օտարի,
Կան և մաշին ի գէճ պանտոկս վշտալի։
Ի սոցանէ թէև բազումք պսակեալ,
Եւ քաղցր սիրով ընդ լծակիցս շաղկապեալ.
Սակայն յեսոյ զնոսա միայն անդ թողեալ,
Ինքեանք պանդուխտ յօտար աշխարհ թափառեալ։
Իցէ թէ հոն ճարեն գործ ինչ շահեկան,
Զպարտս տալով դառնան փոյթ ի Հայաստան.
Տանին միոյն Հազիւ լինի յաջող բան,
Իսկ մնացեալք ամօք պարապ կան խոպան։
Տէր իմ ինչ է այս խղճութիւն հեղ մի տես,
Եւ մի խպառ պանդխտութեամբ մաշեր մեզ.
Նժդեհ Հայու դժբախդ աղերս դու դիտես,
Գթա նոցա խնդրեմ ի քէն Աստուած հեզ։
Գորովանօք դիտեա՛ և տես ի բարձանց,
Հատիկ հատիկ տաք տաք կաթիլս Հայ աչաց.
Այնու դիւր տուր նոցա խեղդիչ դառն վշտաց,
Եւ մի՛ ձգեր զողորմելիսն ի ձեռաց։
Եղծեա՛ այդ սև ճակատագիրն՝ որ Վանայ,
Որդւոց ճակատն գրեր գրիչն երկաթեայ.
«Թէ պիտի դուք յօտար երկիր անխնայ.
«Իբրև գերի մնաք մաշիք առ հապա։
«Միտ բերէք ձեր թարմիկ որդին՝ կինն ու Հայր,
«Եւ կարօտով նոցին ճգմիք չարաչար.
«Բազումք ի ձէնջ ախ ու ցաւով անդադար,
«Անդ տուայտեալ պիտի մեռնիք անպատճառ»։

digitised by A.R.A.R.@

Տէր աղաչեմ ջնջեա զայդ սև վճռագիր,
Պանդուխտ Հայու Հեգեկանացն ականջ դիր.
Սուրբ վրիժաւոր ո՛հ նոցա հետ մի՛ մրցիր,
Զի դու գթած Հայր ես՝ իսկ մեք՝ հող մոխիր։
Մի ըստ մեղաց դատեր զմեզ չարաչար,
Ո՞վ է այն մարդ՝ որ պարծի թէ եմ արդար.
Ամէնքս լեալ եմք ո՛հ անասնոց հաւասար,
Զի՞ք ոք բարի առ այս Դու ես լոկ արդար։
Բա՛ւ համարեա զայս մեր Լկանա՝ նեղութիւն,
Ընձեռնեա՛ մեզ վաղ փոյթ քո սուրբ գթութիւն.
Յիշեա զխաչն և զբաժակն քո Որդւոյն,
Մեր յանցանաց հրատարակեա՛ թողութիւն։
Թէ և գիտեմք այդ մեծ շնորհացդ չեմք արժան,
Այլ գործադրեա ի փառս ահեղ քո Անուան.
Թող մի տար որ զմեզ որսայ չար գազան
Մեզ նեղելոցս լեր ապաւէն և պաշտպան։
Նժդեհ Հայոյն տո՛ւր մի յաջող գործ և բան,
Եւ փոյթ ի գիրկս իւր Հայրենեաց դարձո՛ զայն.
Որ ընդանեաց հետ միասին յաւիտեան,
Քեզ Տէր մնան երախտագէտ գոհաբան։
Գիտեմ յիշեն պանդխտութեան զօրն անցած,
Որ ի պանդոկս կային ծարաւ և քաղցած.
Յայնժամ պիտի զաւակաց հետ գեռնամած,
Քեզ զալէլուս և փառս ձօնեն Տէր Աստուած։
Զի նոյնս ժանեաց պանդխտութեանց կորզելով,
Առ ընտանիս կրկին բերեր ապահով.
Վասն այսորիկ գուարթ սրտիւ և սիրով,
Քեզ խնկարկու հանդիսանան ցնծալով։

digitised by A.R.A.R.@

Ուրեմն ունկն դիր՝ լուր Դու նոցա հեծութիւն,
Բեր խանձարուրս յիւրեանց արա գթութիւն.
Յայնժամ պիտի լեցուի փափագ Տոսպեցւոյն,
Մինչ տեսանէ մէն մի պանդուխտ յիւրեան տուն։

Այո՛ նա ևս նոցա նման Տէր արքայ,
Քեզ խնկարկու հանդիսանայ առ հապա.
Զի այց առնես իւր հայրենեաց դու ահա,
Հայն օրհնելով դնես աճման ենթակայ։

Այսու պիտի քիչ միջոցէն զկնի,
Վասպուրական մատաղ սրդովք զեղանի.
Ծլին ծաղկին իբրև դալար ձիթենի,
Դիտողք նոցին Քեզ ձօնեն փառս լի ու լի։

Վան ոչ ևս լայ որդեկորոյս մօր նման,
Ցորդւոց վերայ՝ զի կան իւր իսկ յանդիման.
Հանէ պիտի զիւր սև հանդերձ տրտմութեան,
Որ իւր պանդուխտ որդւոց համար կրէր զայն։

Ի՞նչ ցնծութիւն լինի ծնողաց նոյն կէտին,
Երբ որ աղջիկ և մանչ որդովք խմբովին.
Ակմբելով շուրջ սեղանաւ ի ճաշին,
Մատրուակեալ պարգևս ուտեն Արարչին։

Արդ այսպիսեաց տայ Մարգարէն երանի,
Որ զայսպիսի կենցաղս վարեն յաշխարհի.
Փափուկ խօսք է և լսելոյ արժանի,
Որ մէն մի տան բարի ծնողաց պատկանի։

«Կին քո ասէ որպէս այգի վայելուչ,
«Ժրագլուխ՝ տնարար կայ քո տան քունչ.
Եւ զաւակունքդ շուրջ սեղանաւդ քեզ ի գուճ,
Ո՞հ ինչ սիրուն կան իբր ծաղիկ փունջ ի փունջ։

digitised by A.R.A.R.@

Յայնժամ գիտեմ սա պէս Հօր սիրտ նոյն ատէն,
Փոյթ հրդեհի յայս խնդութեան կրակէն.
Եւ յիւր լուսոյ լճաց կաթիլս ուղխօրէն,
Մարգարտի պէս դան և թորին յայտերէն։
Անդ փղձկեալ պիտի օրհնէ Տէրն փառաց,
Եւ մնայ իւր երախտապարտ անմոռաց.
Որ իւր կայտառ մանկիկ ճեռոց շնորհեաց Հաց,
Եւ ի նոցունց արտահալած արար քաղց։

Այսպէս Հայր մի ստոյգ պիտի Բարձրելոյն,
Ջերմիկ սիրով բարթ բարթ խրկէ գօրհնութիւն.
Որ զերծուցեալ զինքն ի վշտաց գոյնզգոյն,
Խաղաղութեամբ վերադարձոյց յիւր իսկ տուն։

Նա որ երբեմն յօտար աշխարհ տրտում կայր.
Այժմ էր այսպէս զուարթ երես կայ պայծառ.
Պատճառ որ կան յիւր աչաց դէմ շար առ շար,
Քաղցր ամուսին, քոյր և որդիք, Հայրն և մայր։

Գոլովանօք Հայի նոցա սուրբ տիպար,
Եւ օրհնելով օրհնէ զԲերոզն անպատճառ.
Անխիղճ է նա՝ և ունի սիրտ իբրև քար,
Որ մոռանայ զիւր Ազատիչն բարերար։

Հայ չեմ կարծեր եթէ մնայ անտարբեր,
Եւ չուզարկէ սուրբ օրհնութիւնս Տեառն յԵթեր.
Զի նորա ահն մինչ մանուկ էր կաթնկեր,
Մօր ծծին հետ զայն ծծելով մեծացեր։

Նորա պէտք չէ խրատատու այս մասին,
Փղձկեալ սրտիւ գիտէ փառս տալ Անեղին.
«Զտէր Աստուած քո սիրեսցես» խօսք Փրկչին,
Գինդ շինելով Հայ զարդ արեր ականջին։

digitised by A.R.A.R.@

Նա իւր դժբախդ պանդխտութեանց մէջն անգամ,
Զուզեր, որ զիւր օրն հոլովի առանց ժամ.
Թէ զայս չառնէ, գիտէ Տեառն չէ բարեկամ,
Մէն մի հայոյն զայս դասն տուեր պապն և մամ։
Ուստի ճարէ պահ ի ծագել արեգին,
Եւ մերձենայ ակնածութեամբ իւր Փրկչին.
Հառաչելով առնէ զաղօթս որոմագին,
Ուզէ պարէն իւրն, և իւր խեղճ զաւակին։
Յետ աղօթից զոր նուիրէ իւր Փրկչին,
Եւ յայնմանէ յուսայ առնել խնդրելին.
Յեկեղեցուց դառնայ ուրախ իւր գործին,
Տալով նուէր զիւր օրական իւղագին։
Հարուստ Հայոց մէջն ինձ թուի ոմանք կան,
Որ կամովին ի պաշտօն Տեառն ծուլանան.
Մինչդեռ պանդուխտն ևս և աղքատ գաղթական,
Ի ժամ կանխեալ զէնն գեղգեղեն քաղցրաձայն։
Նա ճոխութեանց յՈվկիանոսն ընկղմեալ,
Զանձն պարարեր իբր անզգայ կայ թմբրեալ.
Լուսինին տեղ՝ արև վաղուց է ծագեալ,
Բայց նա խորդայ դեռ երազօք ցնորեալ։
Մեկուսացեր ի նմանէ գլխովին,
Տիրոջ երկիւղն՝ մահն և վճիռն ահագին.
Ուստի այնպէս անհոգ պառկեր եղկելին,
Ի՞նչ պատասխան վերջ պիտի տայ Ստեղծողին։
Թո՛ղ խպնի նա յանբան թռչնոց երամէն,
Որ խնդրեն կուտ նախքան զարև յԱնեղէն.
Սա դեռ խռայ և դուրս գայ ոչ մահիճէն,
Չի կորզեալ է թոյլ մեղկութիւն խելք գլխէն։



digitised by A.R.A.R.@

Ամօթ հազար քեզ տնաւեր փափկութիւն,
Որ այսպիսեաց դու քանդեալ ես հոգւոյ տուն.
Ի սիրտս նոցա չես թողեր ահն Բարձրելոյն,
Եւ դիւթեր ես՝ որ զոհ լինին քո սիրոյն։
Զգեալ ես նոյնս մէջ յարբուիշտ կեր խումի,
Իբրև Շարայն ապաս տանեն որկորի.
Աւաղ այսու լինին խաչին թշնամի,
Որպէս է բանն առաքելոյն Պօղոսի։
Մերժեա եղբա՛յր զայդ մոլութիւն անպիտան,
Դորա համար թո՛ղ հեթանոսք մոմտան.
Չի լոկ հացիւ չապրիր բարի քրիստոնեայն,
«Այլ բանիւ Հօրն» ինչպէս Փրկչին փողէ ձայն։
Ուրեմն փութա՛ յեկեղեցին քան զարև,
Եւ Փրկչիդ դէմ կաց խնկարկու ակներև.
Թէ անձնդ դնես Խաչին շքոյն իւր ներքև,
Այսու ի քէն հալածական լինի դև։
Թող ի բաց անդ ողջ զբաղմունդ մարմնական,
Որ չլինի թէ անտես առնէ Նա քո ձայն.
Ի նմանէ խնդրեա հոգւոյդ պէտս միայն,
Որ է երկնից արքայութիւն անվախճան,
Մարմնոյդ համար մի՛ խնդրեր ինչ բնաւին,
Այն գիտէ տալ՝ որպէս տայ կուտ ագռաւին.
Չի իւր սուրբ բան քեզ ապահով այս մասին,
Կացուցեր է, որ հոգաս ոչ գլխովին։
Դու թէ ցանկաս՝ որ հասնէ ձայնդ մինչ յԵթեր,
Հայ ասխիդ բարիս խնդրեա անվեհեր.
Ցիշեա՛ զի քոյդ է ազգակից և ընկեր,
Եւ զայս պատուէրս Տէրունական մի՛ մերժեր։

digitised by A.R.A.R.@

Յարգեա եղբայր Փրկչիդ խրատն աննախանձ,
Որոյ գին չեն բոլոր երկրիս ակն ու զանձ.
Թէ ասխիդ ուղիղ սրտիւ խնդրես դարձ,
Գիտցիր՝ որ քեզ և նորա հետն առնէ այց։
Ո՞հ նա չուզեր զոյգ հայ եղբայր միմեանց հետ,
Հեռիւ ապրիք՝ որ բելիարն դրդէ մերթ.
Այլ բաղձալով փափագի միշտ սիրով սերտ,
Կալ և մնալ իւր սուրբ բանին աշակերտ։
Ինքն ի խաչին իւր թշնամեացն աղօթէր,
Նոցա՝ որ զիւր անձն խոցեցին կարեվէր.
«Հայր թո՛ղ սոցա, զի ոչ գիտեն» աղերսէր,
Քեզ և ես ճառեր՝ որ կատարես զայն պատուէր։
Արդ՝ եթէ դու զոխս պահելով բանս մերժես,
Եւ ընկերիդ դարձին համար չաղօթես.
Գիտացիր ճիշտ, որ Տէրն երբէք չլսեր քեզ,
Վասն զի չունիս առ քեզ նորա պատկեր հեզ։
Զէ սիրելի՝ լաւ չէ լինիլ քարասիրտ,
Վերոյիշեալն ուշի ուշով առ դու միտ.
Կարեկից լեր գթա եղբօրդ վերայ միշտ,
Եւ մոռացիր՝ զի քեզ երբեմն ետ նա վիշտ։
Ուրեմն խնդրեա՛ յանյիշաչար Անեղէն,
Ջներումն եղբօրդ և ասխիցդ համօրէն.
Վասնզի նոքա հայ են ազգաւ՝ քո ցեղէն,
Մի՛ չարին չար հատուցաներ փոխարէն։
Թէև գիտեմք ծանր է ներել սոպռ եղբօր,
Որ խոցոտէ մեր սիրտ լեզուաւ յօրէ օր.
Բայց քանի որ որդի կոչիմք վերին Հօր,
Պարտիմք ներել՝ որպէս նա մեզ՝ ամէն օր։

digitised by A.R.A.R.@

Եթէ զգայր յարգն օրինաց խղճալին,
Զէր անպատուեր տարապարտուց ընկերին.
Հազար ամօթ իւր պապին և ծնողին,
Որ կրթուեթեան չեն տարեր Հոգ գլխավին։
Յարբունս Հասեալ մեծացեր է իբր անբան,
Սրա՝ նորա սիրտ խոցոտէ ընդունայն.
Թողեր է յիւր աչաց միջի Հատ գերան,
Եւ տեսանէ շիւղն ընկերին միմեայն։
Պէտք է խնդրեմք բազկատարած ի Տեառնէ,
Որ այսպիսեաց փութով շնորհս ընձեռնէ.
Դուցէ այսու ողորմելին զինքն ուղղէ,
Դիտէ զիւր մեղս՝ և դրացին չքամբասէ։
Բանից ստին պարտիմք տանիլ բերանգոց,
Ներել նոցա՝ և ոչ ի սիրտ կրել խոց.
Արդարադատն Աստուած գիտէ զիւրեան գործ,
Զուզեր ի մէնջ տեղեկութիւն Հարց ու փորձ։
Բայց ժուժելով նոցա դարձին սպասէ,
Իցէ օր մի նոյն ապերախտն զինքն շոկէ.
Զի ողորմած մակտիր կրէ ի բնէ,
Ներել՝ թողուլն յանցաւորաց յոյժ սիրէ.
Երկար առեն նորա դարձի աղագաւ,
Կայ՝ սպասէ՝ եթէ խսպառ ոչ դարձաւ.
Յայնմ միջոցին վրէժխնդրութեան տապարաւ,
Պիտի կտրէ նորա կենաց թելն Հարկաւ։
Զայս գիտելով՝ ներելն եղբօր մեզ պիտի,
Եւ աղաչել բազկատարած Յիսուսի.
Որ իւր փառացն առնէ զմեզ արժանի,
Զմատնէ ի ձեռս Արուսեկին դաժանի։

digitised by A.R.A.R.@

Պէտք է պահէ ամենայն ոք զայս խրատ,
Տեառն ծառայէ լինի արթուն և զգաստ.
Եթէ ոքնի վասն Աստուծոյ յօժար ատ,
Լապտեր ի ձեռն գնայ յերկնից յառագաստ։

Կարդալ պէտք է զԱւետարան կտակ սուրբ,
Որ առնէ նա զիւր ընթերցողն Փրկչին հուպ.
Նա անկելուն է հաստատուն ձեռաց ցուպ,
Բազումք նովաւ ոչ մնացին մեղայ դուք։

Ափսոս հազար՝ որ այս սուրբ գիրք մեր ազգէն,
Հարիւրէն մին չգիտէ կարդալ ընդ ամէն.
Եւ վճռեմ թէ Վասպուրական համօրէն,
Սոցա թիւն ևս աւելի է մեր հաշուէն։

Զեմ յիշէր ատ գիւղօրայքն և Մարաստան,
Որ կարդալէն հրաժարեալ են յաւիտեան.
Ո՜հ կաշկանդեր տգիտութեան հատ շղթայն.
Նոյն կողմի մեր խեղճ Հայկազունս ամենայն։

Կայ ոչ յայս կողմն եռանդագին սէր ուսման,
Ծաղր առնեն զայն որ դիմէ ի վարժարան.
Թէ ձգեմք սոյնս մնան մէջ յայս դրութեան,
Յետ ինչ ամաց Հայ չես տեսնար յայն տահման։

Ազգասիրաց պարտն է որ այս աղէտին,
Յառաջս առնեն և խնայեն Հայ զարմին.
Մէն մի գաւառ բանան դպրոց առանձին,
Եւ մարզել տան մատաղ մանկունս խեղճ Ազգին։

Առ այս պարտէ հոգալ հնար և դարման,
Եւ կարկառել փոյթ սոցա ձեռն օգնութեան.
Թող կրթուին և ճանաչեն յարգն ուսման,
Որով թերևս բարգաւաճի Հայաստան։

digitised by A.R.A.R.@

Կորուսեալ են մեր ճոխ լեզուն բաւք արդէն,
Որդին զօտար ոճ ուսանի յիւր մօրէն.
Էրէցն անգամ չգիտէ խօսիլ Հայերէն,
Քոյդ Հարցմանց տայ նա պատասխան քրտերէն։
Տէրունական Աւետարան Հայ լեզուաւ,
Քեզ Հարցողիդ չկարէ ճառել ճիշտ կարգաւ.
Այլ խորդ հնչմամբ կակազէ զայն շտապաւ,
Եւ ներկայիցն զուցէ այսու առթէ ցաւ։
Եթէ նոցա խրատատու քահանայն,
Անկեալ կայ այժմ յայս կերպ վիճակ խղճութեան.
Ո՛ւր կայ՝ մնայ ապա տխմար շինական,
Որ հետ կաթին ուսեր ասէ Հային նան։
Թէ որ նոցա խնամս չտարուի քիչ օրէն,
Պիտի դուրս գան և պակսին մեր տումարէն.
Այլ վշվշալն օգուտ չաներ յայն ատէն,
Զի վասն նոցա կրեցաք սիրտ քարեղէն։
Աւա՜ղ դժբախդ են ողբալիք և շուար,
Ողորմելեացն այց արա՛ Տէր բարերար.
Ո՞Հ Հասեր են տգիտութեան յետին ծայր,
Սուտ խօսողի մի Համոզուին չարաչար։
Լուսերի թոռք և փափապաշտ փաթերայն,
Որք անարգանս բերեն խապառ Հայ անուան.
Աւաղելիք յետ զգուելի ուրացման,
Սիրեն լափել զարիւն ազգին իբր գազան։
Մոռացեր են Հայկայ ցեղի յատկութիւն,
Եւ ուխտեր են երկպառակել զազգ ողջոյն.
Դաշն կռեալ են ընդ միմեանս Հաստատուն,
Ջնջել յերկրէ մարտիրոս Հայն և լեզուն։

digitised by A.R.A.R.@

Պղտոր ջրոյ մէջ ձուկ որսալ յոյժ սիրեն,
Ուր կռիւ կայ աչքախփոց անդ դիմեն.
Սուրբ սիրոյ տեղ հեռ ու նախանձ քարոզեն,
Հլու որդին ծերուկ հօր դէմ փոյթ հանեն։
Զոյգ եղբարց մէջ կաց՝ վէճ ձգեն անխափան,
Որ օր առաջ կործանել տան Հայաստան.
Փրկչին մերոյ Հոգեկեցոյց տուրբ մատեան,
Ի թիւր կարծիս շրջել սիրեն իւրովսան։
Զեն գութ աչ՝ եր դժբախդ Ազգին անպիտանք,
Երկաթէ կարծր կրեն սիրտ և խղճմտանք.
Ապերախտից միմեայն է կամք և ջանք,
Որ Հայն ձգէ զիւր ծէս՝ կրօն՝ ժամն ու վանք։
Հեռացեր են մեր բուն Ազգէն կամովին,
Կոյրզկուրայն դիմեալ են գիրկս յօտարին.
Սակս շահ անձանց որչափ ստոր խոնարհին,
Զեմ գրեր զի չառթէ զգուանս լսողին։
Մինն ծխէ խունկ պորտապարարտ Լուտերին,
Եւ թիւր բանից նորին անսայ գլխովին.
Նորա, որ իւրն եկաց սատան հին ուխտին,
Եւ եղև քար գայթակղութեան ահագին։
Եւ այլ ոմն փափն խոստովանի անսխալ,
Այս հերձուածոն խապառ լեալ է մոլորեալ.
Որպէս կարէ մարդ որ մեղօք է ծնեալ,
Աստուծոյ պէս կրել զկամս անսխալ։
Թողէք եղբայր՝ թողէք զփափն և Լուտեր,
Նոցա կամաց մի խոնարհէք գլուխ ձեր.
Ելեք խնդրեմ այդ անկումէն փոյթ ի վեր,
Եւ միացէք Հայկայ տանն հետ անվեհեր։

digitised by A.R.A.R.@

Ո՞Հ ձեր ի մէնջ բաժանումն է ցաւալի,
Հայ սիրտ կրողն՝ մեծ ցաւ զգայ իրաւի.
Միմեանց սիրելն՝ Փրկչին է յոյժ հաճելի,
Իսկ պառակտելն՝ է արդարև գործ չարի։
Անէծք հազար և նախատինք այն մարդոյն,
Որ կործանել կամի այսպէս Ազգի տուն.
Վասակ է նա՝ և իւր գործն է վատութիւն,
Ամէն բերան գիտեմ վայ տայ այնպիսոյն։
Բզիկ բզիկ զԱզգ պառակտելն՝ ի՞նչ օգուտ,
Ո՛վ որ գործէ նմա վախճան բերէ փոյթ.
Մէն մի Հայուն պիտի առ Ազգն այս մի ուխտ,
Զի միացեալ ընդ նա սիրով առցեն գութ։
Պէտք է այո՛ պէտք է մեզ սուրբ միութիւն.
Զի լոկ այսու կարէ ապրել Հայկայ տուն.
Ապա թէ ոչ այս ողբալի անջատումն,
Շուտով պիտի ջնջէ յերկրէն Հայ անուն։
Եթէ այս կերպ վտանգ կայ մեր յանդիման,
Եղբայրն եղբօրն պարտի տալ ձեռն հաշտութեան.
Սովաւ պիտի խայտայ բերկրի Հայաստան,
Մինչ տեսանէ զորդիս յայս սուրբ միութեան։
Այսու նաև գոռոզ Հռոմն այն հպարտ,
Խպարտ ի մէնջ պիտի լինի յուսահատ.
Զի միութիւնս փշրելոց է ակնթարթ,
Փաթերայից նորին առ մեզ լարեալ կարթ։
Սրա գոռոզ և փառամոլ յատկութիւն,
Տակն ու վերայ արարեալ է Հայու տուն.
Կիլիկիոյ մինչև ցարդ կայր տէրութիւն,
Եթէ առ սա յոյս չդներ Հաստատուն։

digitised by A.R.A.R.@

Առանց լալու կարդալ ո՛հ չէ կարելի,
Զարարս դահիճ չեպիսկոպոս Նիկոլի.
Տեսէք որպէս վարձկան հովիւն նողկալի
Կերաւ զոչխարսն իբրև գազան կատաղի։

Ո՜հ անխիղճն այն և քարասիրտ տմարդին,
Զգթաց ընաւ Լեհայ Հայոց վիճակին.
Յետ հերձուածոյն ընդ ճիզվիթաց միասին,
Գաղթականաց զոքքան չարիս հասուցին։

Նկեղեցեաց դուռն փակեցին շատ տարի,
Զանօթս՝ սպասս կորզեալ առին նոյնք բռնի.
Այնուհետև Հայք եղեն անդ միշտ գերի,
Փուճ յաջորդացն Լոյոլային զզուելի։

Աւաղ այս կերպ ձեռամբ սորին անարժան,
Հայք կորուսին քառասուն հազար գերդաստան.
Թէ ոք շրջիլ երթայ այժմ ի Լեհաստան,
Կարող չէ հայ մի գտանել յայն սահման։

Թող անիծուի՛ իւր յիշատակ և անուն,
Որ այսպիսի ցաւ հասուցեալ է Հայուն.
Մեզ արարեալ Լանկթամուրի չարութիւն,
Սորա չափ ո՞հ ծանր չերևիր հայ որդւոյն։

Բիւր անէծս ևս ճիզվիթ անուն կրողին,
Որք ուխտեալ են Հայս ըզքտել կամովին.
Սոցա արարս ինձ ասա գրել չէ դիւրին,
Զի շատ ամաց և հատորոց կարօտին։

Անխիղճ ճիզվիթք և կատաղի փաթերայք,
Ո՞նց գերեցին մեր Աւետիք պատրիարգ.
Կապեալ տարան ի Մարսիլեայ զայն երագ,
Եւ յանել բանտ ձգեցին զինքն խեղճ կրակ։

digitised by A.R.A.R.@

Մնաց նա անդ շղթայակապ շատ տարի,
Անոք անտէր ի դառն վիճակ ողբալի.
Հէգ չունեցաւ իւր սրտացաւ ոք բարի,
Ամէնքն էին ոհ ոխերիմ թշնամի։

Կեղտ աղտի մէջ այնքան թողին անխնամ,
Մինչ որ ոչիլն հինեց մորուան իւր և ծամ.
Պահս չուտելուն համար մի ոք անզգամ,
Գանակոծեր զողորմելին ժամէ ժամ։

Զայս չարութիւն այն աստիճան հասուցին,
Մինչ ակամայ յիւր հաւատոց հանեցին.
Հէգ պատրիարգն փափին ստրուկ շինեցին,
Այսու իբր թէ մեծ յաղթանակ կանգնեցին։

Ի՞նչ հայ է որ՝ զայս ցաւալի անցս կարդայ.
Եւ ճիզվիթացն ասէ թէ են քրիստոնեայ.
Ինձ պէս գիտեմ արտմրելով վշտանայ,
Եւ անիծէ չար յիշատակս միշտ նոցա։

Թող կործանէ Տէր փոյթ ասցա միութիւն.
Որ չեն առներ բնաւ այլոց դթութիւն.
Այլ Չանք և իղձ նոցին սա է գոհ ողջոյն,
Որ ամէն մարդ մերժէ կամաւ հայութիւն։

Այս ճիզվիթաց կարի պաշտպան էր Հասուն.
Մինչդեռ նստաւ Պօլիս աթոռն իւր իսկոյն,
Իբրև Գրող տեսանէր սա հայութիւն,
Ամօթ հազար իւր չար կրից և ոգւոյն։

Երբեմն էր սա հայ ծնողաց երախայ,
Որ ոչ բարեաւ զինքն ծնան ի Բերիայ.
Ազատ հայ էր՝ եղև ստրուկ և ծառայ,
Եւ փափին միշտ եկաց հլու պաշտօնեայ։

digitised by A.R.A.R.@

Անխղճօրէն դաշինս կռեաց ընդ նմա,
Չի արասցէ զազգ մեր գերի Հռոմայ.
Հայկայ օրէն ինչ ունէաք մինչ հիմայ,
Կուզէր ի մէնջ կորզել առնել անխնայ։

Սակայն եհաս մեզ գթութիւն Բարձրելոյն,
Եւ նորա փոյթ խայտառակեաց վատութիւն.
Նա որ կամէր ջնջել յերկրէն հայ անուն,
Անդարձ յաքսոր գնաց առ փաին վաշ խակոյն։

Յարգելու չէ զայս կերպ դահիճն ազգութեան,
Զայն՝ որ կուզէ ջնջել զանուն Հայութեան.
Միթէ՞ Վասակն արժանի՞ է յարգութեան,
Թող ամէն մարդ առ այս խորհէ իւրովան։

Մխիթարեան կրօնաւորք ևս վատաբար,
Յայս դիպուածէն ընկճեցան չարաչար.
Հռոմայ դէմ հայ իրաւանց քաջաբար.
Ո՛չ կարացին մնալ պաշտպան մինչ խպառ։

Այլ շահ անձին իւրեանց և եթ խորհելով,
Հայ տաճարաց շահ զոհեցին անդ փութով.
Վայելո՞ւչ էր միթէ նոցա սա կերպով,
Կրել յանձինս զանուն ո՛հ վատ տիաղոսով։

Սոքա են՝ որք երբեմն բանիւ և գրով,
Հայ իրաւանց ձևանային ջատագով.
Զայն ամենայն կեղծիս լինիլ մեզ շուտ ով,
Նոյնք ծանուցին՝ թէ որպիսի կան հոգով։

Թող սթափի պարզամիտ Հայն այն տխմար,
Որ ի ոտունց բարիս Ազգին իւր յուսայր.
Թէ լինէր ոչ Սեբաստացի Մխիթար,
Այս պառակտումն չէր ժամաներ մինչ մեր դար։

digitised by A.R.A.R.@

Ընդվզեաց նա իւրովք Հանդերձ ի Հայոց,
Եւ զինքն յանձնեաց մոն ճիզվիթաց խնամոց.
Տօն ցնծութեան եղև նոցա յայս միջոց,
Զի յուսային տալ մեզ վախճան աչքխփոց։

Յանցեալ դարուն այն սաքա ի Պոլիս,
Մեր ազգին շատ հասուցին վիշտ և չարիս.
Զրկպառակել յաջողեր են խղճալիս,
Եւ հօր կամաց ներհակ ցուցեալ են զորդիս։

Փափ պաշտելու սակս մինչ ի փոքր Հայաստան
Սեբաստացին մարդ խրկեր է լուելեան.
Եւդոկիայ, Գաղատիայ ամենայն,
Խմորելով պատակտեալ են ընդունայն։

Սորա յաջորդք և հետևողք մեր օրով,
Զազգն ուրացան լոկ փափին կամս յարգելով.
Տիրոջ երկիւղն յանձանց ի բաց դնելով
Զամանչեցին մեզ հերձուած են ասելով

Ամօթ հազար քեզ կամաւոր կուրութիւն,
Թէ մինչև ուր կարես իշխել դու մարդոյն.
Սոյն պատուելիք ազատ էին և գիտուն,
Էր արարին հապա սա կերպ վատութիւն։

Զայս անիրաւ զրպարտութիւն ցաւալի,
Հրապարակաւ նոյնք արարին իրաւի.
Ի Վատիկան հանդէպ փափին Պիոսի,
Գուցէ ընդդէմ գործեալ իւրեանց իսկ խղճի։

Վանդի գիտեն ճիշդ թէ Հայք են ուղղափառ,
Եկեղեցին իւրեանց է սուրբ և արդար.
Թադէն օծեր Հաստատ նորա հման քար,
Եւ հաւատով Հայս կացուցեր է պայծառ։

digitised by A.R.A.R.@

Մինչդեռ Հռոմի կռապաշտութեանց մէջ ծփայր,
Եւ Պետրոսն ևս ի Տիբերեայ ձուկ որսայր.
Պարծանք Հայոց պսակաւորն առըր Աբգար,
Կացեալ յՈւրհայ՝ Փրկչին Աստուած հաւատայր։

Գիտեն նոքա՝ թէ Հայկայ տունն անդադար,
Ո՞րչափ անմեղ արիւն թափեր դար առ դար.
Քանի՛ հովիւ՝ այր՝ կին՝ ապայ՝ զօրավար,
Վասն Յիսուսի նուիրեցան սիրտ յօժար։

Մինչև անգամ յաւուրս Հարին Յազկերտի,
Մինչ նեղէր Հայս երկիրպագել կրակի.
Ազգն ողջոյն զահ մահուան դրաւ մեկուսի,
Եւ դէմ եկաց քաջ Վարդանաւն ի մարտի։

Վասն Աստուծոյ արիացան քաջաբար,
Հարին բանակս մոխրապաշտից չարաչար.
Հայք ևս անկան հազար երդուն և վեց այր,
Բայց սրբոք կայ մեր տաճարաց կանթեղ վառ։

Հայ պատմութիւն արդէն ծանօթ է նոցա,
Մեզ երկրորդել ատ բնաւին Հարկ չկայ.
Զայս ամենայն նոյնք գիտելով էր Հապա,
Տկարացեալ անկան ի կարթն Հռոմայ։

Պատճառն այս է՝ զի մինչ փարախն մեր թողեալ,
Զոգան ի բաց իբրև զոչխար մոլորեալ.
Ճիզվիթաց խումբն՝ ո՛հ խղճալեացն հանդիպեալ,
Մեծ դիւրութեամբ զայնոսիկ փոյթ որսացեալ։

Մակաղելով ընդ հովանեաւ օտարին,
Գողն հովիւէն չարոշեցին բնաւին.
Ունկ մատուցին նոցա պղտոր խրատին,
Եւ զոհեցին ծէսն և կրօնն Ազգային։

digitised by A.R.A.R.@

Պէտք չէ յուսալ ի սոցանէ ինչ օգուտ,
Զի կոյրէն լոյսն սպասելն է անօգուտ.
Եթէ լեալ էր նոցա առ Ազգն սոյգ գութ,
Մինչև ցայսօր դարձեալ էին առ նա փոյթ։
Ո՜հ սակս փափին մոռացեալ են ազգութիւն,
Նորա կամաց կամին զոհել Հայ անուն.
Դիպ Կոլէճցւոց ազգ ընդդէմ սոպռ մոլութիւն,
Հաստատեն զիմ վերոգրեալ ասութիւն։
Սոյն՝ այնչափ են մեզ ոխերիմ թշնամի,
Զոր զոյգ տողով չէ աստ գրելն կարելի.
Սակս մեր տածեն սոյգ նախանձ Կայենի,
Եւ չեն ուզեր՝ որ մնայ Հայ յաշխարհի։
Ուխտ և դաշինս կռեր են հետ Հռոմայ,
Միշտ խոցոտել զերկիւղած Հայն անխնայ.
Մոլի նախանձն յոյժ բռնացեր է նոցա,
Եւ շիներ զիւր կոյր կամարար պաշտօնեայ։
Նորա համար զրպարտանաց բանս յոլով,
Մեզ ասեր են խիղճ և ամօթ չանելով.
Յայն սիրտ՝ որ չիք ազգային ինչ գութ՝ գորով,
Հարկաւ չար հեռն տիրէ նմա անխռով։
Բողոքական հայք ևս սոցա գոգ նման,
Ուրացեր են Ազգութիւն և Հայաստան.
Մեր անարատ եկեղեցին աննման,
Բամբասելով միշտ զրպարտեն ընդունայն։
Բանս սուրբ գրոց մարգարէից և Քրիստին,
Ի ծուռ կարծիս գիտեն շրջել քմածին.
Ուրաքանչիւր միսիոնար առանձին,
Զայնս բացատրէ համեմատ իւր ճաշակին։

digitised by A.R.A.R.@

Նորա համար սա մեղկ կրօն շատ ճիւղի,
Ծուէնս ծուէնս այժմ բաժանեալ կայ յայտնի.
Իմ սաածին նա վկայէ լի ու լի,
Երբ Անգղիոյ գայ տեսութեան ըստ բախտի։

Պիտի տեսնայ նոյն փարթամ ազգն աննման,
Որք խտրութեամբ չեն ընդ միմեանս համաձայն.
Զի շատ քիչ կայ ատ այնպիսի գերդաստան,
Որք երթան մի յեկեղեցի միաբան։

Վասն զի հերձուած չար բաժանման ահագին,
Ի միմեանց խապառ զատեր այր և կին.
Մինն յարգէ բանս ուխտադրուժ Լուտերին,
Իսկ միւս հոգով չափ մեծարէ սին Կալվին։

Մի ոմն անսայ երիցական աղանդոյն,
Այլ ոմն յարգէ միաստուածեան դրութիւն,
Ես չեմ ուզեր զայս պառակման շատութիւն,
Ատ գրելով՝ տալ լսողաց տաղտկութիւն։

Ուրեմն մեր հայ բողոքական պատուելին,
Ո՞ր ճիւղին հետ սէր կապերէ լիովին.
Թողեր է զիւր պայծառ հաւատ կամովին,
Եւ փեռեկոմանս մէջն անկեալ կայ գլխովին։

Զէ՛ եղբարք չէ՛, խնդրեմ լսէք Ծոպեցւոյն,
Եւ պահեցէք անկեղծաբար Հայութիւն.
Զգէ՛ք ի բաց վոյթ ի ձէնջ զայդ կեղտ անուն,
Դարձէ՛ք առ Ազգն Ջերմիկ սիրով հաստատուն։

Մի յապաղէք մնալ ի գիրկն օտարին,
Վանզի օտարն զիւր մտածէ միշտ բարին.
Նա ի հօրէն կուզէ բաժնել զիւր որդին,
Որ տիրէ մեզ ըստ հնախօս առածին։

digitised by A.R.A.R.@

Օտար են մեզ Հռոմ՝ Լուտեր՝ և Կալվին,
Չեն սիրեր նոյնք մեր միութիւն Ազգային.
Եթէ այսպէս, մեր իսկ պարտքն է առաջին,
Որ բնաւին չանեմք ոտքա խրատին։
Այլ փութապէս ի ոտքանէ փախչելով,
Դառնամք առ Ազգն և միանամք սուրբ սիրով.
Թող տամք ի բաց ինչ որ ունիմք խեռ՝ խռով,
Լոկ Ազգին շահ մեզ նպատակ բռնելով։
Երբ միմեանց սա կերպ տամք ձեռն հաշտութեան,
Եւ պահպանեմք զօրհնեալ անուն Հայութեան.
Յայնժամ պիտի որդեկորոյս Հայաստան,
Փոյթ ափոփի ի վերայ մեր միութեան։
Անհրաժեշտ պարտքն է մէն մի Հայ որդոյն,
Որ իւր Ազգին առնէ զայս մեծ բարութիւն.
Յայնժամ գիտեմ տրտմելոց են նոյնք իսկոյն,
Որք ասէին թէ Հայք չունին միութիւն։
Մեծ նախատինք է արդարև ճիշտ Հայուն,
Որ օտարք տան իւր սա պէս մի վատ անուն.
Ուստի մինչ մեք առնեմք զայս սուրբ միութիւն,
Այնպիսեաց փոյթ պատանձելոց է լեզուն։
Այս մեր ներկայ իններորդաան երրորդ դար,
Խնդրէ ի մէնջ սէր միութիւն անպատճառ.
Եթէ չառնեմք՝ ոչ դիմանամք ընդ երկար,
Եւ հզօր ցեղք զմեզ լափեն չարաչար։
Ուրեմն պէտք է մեզ անպատճառ միութիւն,
Թերևս խապառ տակայ մնայ Հայկայ տուն.
Թող խրատ տայ սիրոյ վերայ Հայը որդոյն,
Եւ յայտնէ թէ այսու է մեր փրկութիւն։

digitised by A.R.A.R.@

. . . Վայրենի քիւրտ և տմարդի այլազգին,
Նոյնք որ այժմիկ պատիժ լեալ են մեր Ազգին.
Մեր միութիւն տեսանելով սարսափին,
Իբր նապաստակ ծակէ՛ ի ծակ խուսափին։

Մեք ենք պատճառ՝ որ քիւրտ դարձեր է գազան,
Աւաղ այո՛ աւաղ Հազար մեր անուան.
Թէ յիշէաք մեր Աղասին և Վահան,
Չէաք մնար այսչափ վատ և անպիտան։

Նոքա կարեն վկայել իմ ասածին,
Որ մի անգամ կարդացեր են Փարպեցին.
Թէ ոնց Վահան իւր փոքր գնդիւն առանձին,
Շատ հեղ յաղթեաց Պարսից ահեղ բանակին։

Այս յաղթութեամբ եհան զանուն քաջութեան,
Եւ սփռեաց մեր վշտալի Հայաստան.
Ցերկրէն Հայոց ջնջեաց մոգն և սարուշան,
Եւ դիպեցաւ Մանդակունեաց օրհնութեան։

Մամիկոնեան այսու եցոյց Պերոզին,
Թէ Հայ վատ չէ՝ ըստ իւր սխալ կարծածին.
Զի յարքունիս նա ի մէջ իւր սև խմբին,
Ասեր էր թէ Հայ վատ է քան զԱսորին։

Իսկ Աղասին մեր դարու քաջ դիւցազուն,
Իւր ընկերօք որչափ գործեր քաջութիւն.
Նոյնք որ կամին կարդալ սորա պատմութիւն.
Թող փնտռեն Վէրք Հայաստանի մէջն խակոյն։

Թէ որպէս նա իւր փոքր խմբով միաբան,
Զարհուրեցոյց անյաղթելի Հասան խան.
Զայն վանելով բանակն արար ցիր ու ցան,
Եւ Հայ գերեաց կտրեց զարտօսք և կական։



digitised by A.R.A.R.@

Քանաքեռցի սա Հայ սպայն անուանի,
Ալ բազուկ էր մեր անմահին Ներսէսի.
Անին զայս քաջ երբ յուշ ածէ մարմոքի,
Վանզի մէջ ցարդ չետես սորա պէս որդի։
. . . Սոյն քաջ և իւր կարիճ ընկերք միաբան.
Էին ամէնք Քանաքեռցի շինական.
Մինչ Հայրենեաց անուամբ նոքա զինեցան,
Քիւրա ու Պարսիկ վախէն կորեկ կտրեցան։
Թէ սոցա պէս զինի ներկայ Հայութիւն,
Եւ պահպանէ զիւր կին՝ որդին՝ Հօտն՝ և տուն.
Կարելի՞ է այնուհետև սոպռ քրտուն.
Առթել Հայուն զայպիսի խիստ նեղութիւն։
Զէնք գործածելն ո՞վ արգելեր է Հայուն,
Եթէ ոչ իւր ներկայ յոռի մեղկութիւն.
Է՞ր պատենի մէջն ամփոփեց սուր կտրուն,
Եւ քրտին եա, թէ առ՝ խփէ յիմ գլխոյն։
Յաչս օտարաց երբեմն Հայն էր քաջ առիւծ,
Ընդէ՞ր դարձեր այժմ իբր գերի մի գծուծ.
Հաներ բեհեզն յանձնէն՝ հագեր մազէ քուրձ,
Կրէ ի վիզն անմտաբար նոցա լուծ։
. . . Յուշ չածելով զիւր ՝պատիւ փառս խղճալին.
Յայս դառն վիճակ կայ և մնայ տակաւին.
Հաներ մտաց զիւր շահ՝ օգուտ՝ և բարին,
Եւ դարաւս պէտք իւր չեն դրդեր բնաւին։
Է՞ր չի նայեր իւր դրացի Ասորին,
Որ հազիւ թէ Հայու տասնէն կազմէ մին.
Այժմ պատուհաս դարձեր է սա գող քրտին,
Եւ զէն ի ձեռն միշտ նեզէ նոյն տմարդին։

digitised by A.R.A.R.@

Ազատութեն վարեն գործեն օրն ի բուն,
Մշակն ի դաշտ՝ և այգեպան մէջ այգւոյն.
Յաշնան գիզեն ի տունս իւրեանց բերս տարւոյն,
Եւ ուտելով զայնս ձօնեն փառս Բարձրելոյն։
Հայ սոցա էր չի նախանձեր այս մասին,
Եւ զէն ի ձեռն չուզեր վարել թշնամին.
Թէ և թմբրեալ՝ բայց հեղ մի խանդ տուր սրտին.
Տես թէ որպէս գառնայ առիւծ ահագին։
Զիւր քաջութիւն թողեր է ոչ գլխովին,
Եթէ ժխտեմ ցաւ լինի ինձ առանձին.
Այլ պահեր է ինչպէս կրակ ի մոխրին,
Լոկ անդ գործէ՝ երբ չախուն գայ ոսկորին։
Երբեմն նման գիսաւորաց երկնային,
Մուշեղ՝ Սմբատ բերէ ի լոյս Հայ տիկին.
Լինին առիթ քաջութեան սոյնք մեր Ազգին,
Ինչպէս էին Մուսէն՝ Կարօն՝ Ազատին։
Սոյն պարմանիք վառեալ սիրով Ազգութեան,
Մարտնչեցան ընդ ամեհի Հասան խան.
Զինքն յաղթելով զօրս արարին ցիր ու ցան,
Եւ փառս բերին այսու բոլոր Հայութեան։
Մեր Աբովեան պուէտ գրիչն ինչ սիրուն,
Նկարագրէ սոցա պայծառ քաջութիւն.
Օրհնեալ լինի իւր յիշատակ և անուն,
Որ աւանդեաց ի գիր սոցա պատմութիւն։
Հասակակից սոյն քաջաց մի Հայ գուսան,
Երգ մի շիներ՝ որ այժմ երգեն յԵրևան.
Զայն զեռեղելն աստ տեսանեմ ես արժան,
Ի խրախոյս մեզ և գալիք Հայութեան։

digitised by A.R.A.R.@

Այն որ ծանօթ է պատմութեան Ազգին,
Ճանաչէ Վահան՝ Մուշեղ՝ Գարեգին.
Նոքա գնացին՝ Տէրն ետ մեզ կրկին,
Սէգ Կարօն՝ Մուսէն՝ և քաջ Ազատին։
Ապրին պաշտպանք մեր Ազգին,
Կարօն՝ Մուսէն՝ Ազատին։
Կեցցեն դիւցազք մեր Ազգին,
Կարօն՝ Մուսէն՝ Ազատին։
Պիտի միշտ պարծի Քանաքեռ աւան,
Որ ծնաւ ձեզ պէս կորիւն աննման.
Դուք Արարատայ ամուր ախոյեան,
Փառք և ցնծութիւն Ասքանազեան տան։
Մասիս՝ Արագած՝ Նպատ և Ցիպան,
Սիրով տեղի տան ձեր սուրբ միութեան.
Դուք նոցա գլխէն տեսէք Հայաստան,
Ո՛ւր տեղ վտանգ կայ Հասէք յօգնութեան։
Մինչ մեր սև բախտէն գազան Հասան խան,
Նկէր խեղճ Հայոց վշտօք զանազան.
Դուք նորա դարձաք սարսափ յաւիտեան,
Զօրս նորին վանեալ տարայք ցիր ու ցան։
Զի մառնար Անին զայն ձեր յաղթութիւն,
Որ Քրտաց՝ Պարսից արարիք նկուն.
Այնու Հայ գերեաց Հասաք յօգնութիւն,
Խումբ խումբ լուծեցիք դառնալ յիւրեանց տուն։
Հայ թշնամւոյ սիրտ թող խոցէ ձեր նետ,
Ձեզ ճանապարհ տան առապարն և դեռ.
Քաջ Հայկայ Աստուածն լինի միշտ ձեր հետ,
Ձեզ համար զայս իսկ խնդրէ Նահապետ։

digitised by A.R.A.R.@

Սոյն քաջաց պէս՝ եթէ գործեմք միաբան,
Հայոց այլևս ոք կարող չէ ասել բան.
. . . . . .
. . . . . .
Թէ լինի ոք ճիշտ ազգասէր այս մասին,
Պատմէ զօգուտ Ազգին մէն մի անհատին.
Պիտի հասնէ անդրէն իւր իսկ փափագին,
Զի ի կամս իւր կան և մնան խմբովին։
Մեղք հազար որ դեռ չկայ մեր ի միջի,
Անզուգական ազգասէր ոք այնպիսի.
Մեծէն մինչ փոքր կղեր՝ իշխան ըստ կարգի,
Գո՛գ թէ լեալ եմք գերի մի մի ինչ ախտի։
Ամենայն ոք հոգայ միայն զիւրն օգուտ,
Ազգն կործանի ընաւին չէ նմա փոյթ.
Մոռացեալ եմք Աստուածեղէն այն խուրբ ուխտ,
Որ պատուիրէ՝ թէ կարօտին արա՛ գութ։
Ծանրանայ պարտս այս ի վերայ կղերին,
Եթէ չառնէ գութ և խնամ իւր հօտին.
Թո՛ղ յիշէ նա որ կենցաղոյս փառք՝ ոսկին,
Զեն ինչ, ընդէ՞ր՝ նոքօք մաշէ զիւր հոգին։
Ուխտեալ են նոյնք ի մէջ սրբոյ տաճարի,
Զի անձնուրաց երթան զհետ Քրիստոսի.
Ո՞ր կղերն է՝ զոր ձեռն եդեալ ի սրտի.
Խոստովանի՝ թէ ուխտս գործով լցուցի։
Հետք Քրիստոսի են աղօթք՝ պահք՝ տքնութիւն,
Եւ ոչ այսպէս մարմնոց մեր տալ փափկութիւն.
Աւա՜ղ հազար՝ աւա՜ղ եղուկ մեր հոգւոյն,
Ի՞նչ պատասխան վերջ պիտի տամք Բարձրելոյն։

digitised by A.R.A.R.@

Լքեալ եմք զայս ճշմարիտ հետս մեր Փրկչին,
Եւ կապեալ եմք ընդ նանիր սէր աշխարհին.
Գայլք կատաղիք առթեն վնաս Հայ հօտին,
Գիտելով մեր՝ կամք անտարբեր տակաւին։

Քաջ հովուի պէս չեմք պահպաներ մեր զոչխար,
Մեք թմրեալ եմք և նա շրջի սարէ սար.
Ո՜հ զողբալին որսայ գազան չարաչար,
Եւ որկորին իւր կեր առնէ անպատճառ։

Նորա զարիւն ի մէնջ խնդրէ Աստուած Բանն,
Երբ կրկին գայ փառօք Հօրն իդատաստան.
Անդ գլուխ կոր Դատաւորին յանդիման.
Ափ ի բերան պիտի մնամք առանց ձայն։

Եթէ այսպէս վտանգ կայ մեր առաջի,
Պարտիմք փոխել զայս կացութիւն նոզկալի.
Տանել խնամս հօտին Հայոց ըստ կարի,
Որպէս պաշտօն մեր ցուցանէ անթերի։

Պէտք է լինիմք օրինակաւ մեր քարի,
Հայ սերնդոց համեմիչ աղ իրաւի.
Սիրել զՏէրն ի սուրբ սրտէ լի ու լի,
Նոյնպէս զընկերն մեր ըստ իւր իսկ հրամանի։

Թող յետագայք մեզ պարտք լինին առաջին,
Որ քաղցր աչօք դիտեմք զցաւն աղքատին.
Գթալ այրուոյն՝ գնալ ի տես հիւանդին,
Նաև նմա՝ որ անկեալ կայ ի բանտին։

Կարեկցելով կոյրին լինել ցուպ ձեռաց,
Եւ դողդողջիւն ծերոյն սրբել աչաց լաց.
Բանին կենաց կարօտելոց բաշխել հաց,
Եւ ոչ ձգել բարձի թողի ի ձեռաց։

digitised by A.R.A.R.@

Ահա այս է սառյգ կոչումն կղերին,
Որ անձանձրույթ Հոգայ զօգուտն իւր Հօտին.
Եթէ այսպէս վարէ պաշտօն կամովին. . . . .
Իւր կան՝ մնան վարձն և պսակն առանձին։

Զայս օրինակ թարգմանիչ Հարք պատուական,
Կատարեցին զիւրեանց պաշտօն միաբան.
Նոցա օրով Դրախտ դարձաւ Հայաստան,
Փութով լցաւ ուսմամբ երկիրն ամենայն։

Ուստի նոցա դարուն՝ Հայ Ազգն վճռաբար,
Ըստ արժանւոյն մակդիր կնքեաց ոսկի դար.
Քանի՛ քանի զգօն մարդիկ շար առ շար,
Ի լոյս եկին՝ և մերժեցին զմեր խաւար։

Սահակ պարթևն՝ և սուրբ Մեսրովբն գովելին,
Մովսէս քերթողն՝ և ճարտասան Փարպեցին.
Դաւիթ անյաղթն՝ Կորիւնն՝ Ղազար Արծրունին,
Բաղդի Եղիշէն՝ Ղևոնդն՝ Եզնիկ Կողբեցին։

Փոքր մատենիկս մէջ չեմ կարող մի առ մի,
Սուրբ Հարց մերոց վարս զետեղել ախրալի.
Փափագողին բաւուն Կորիւնն՝ նքանչելի,
Իւր ոսկեղէն ոճով ցոյց տայ լի՛ ու լի։

Պարտիմք լինիլ անձնուրաց այս սուրբ Հարց պէս,
Բարի գործովք պայծառանալ ի Հանդէս.
Հօտին Հայոց՝ որք կան ցրուեալ դէն ու դէս,
Պահպանութեան Հոգն տուանձնել քաջապէս։

Ըստ պիտոյից տամք նոցա դեղ և դարման,
Եւ հրաւիրեալ հանեմք միշ ի Հայաստան.
Առ կարօտեալ եղբարս նոցին՝ որք անդ կան,
Եւ ակնապիշ մնան նոցա գալստեան։

digitised by A.R.A.R.@

Ի՞նչ ցնծութիւն լինի ո՞հ այն միջոցին,
Եղբայր եղբօր մինչ տայ համբոյր կաթոգին.

. . . . . .

. . . . . .

Բերկրեալ ցնծայ նաև տրտում Հայաստան,
Ի վերայ այս անակընկալ հանդիպման.
Պիտի ձգէ մազեղէն խորգ տխրութեան,
Եւ բեհեզիւք իւր զարդարի հարսնութեան։
Անդ ձօնէ փոյթ փառս ի բարձունս Բարձրելոյն,
Որ արար իւր զայս եզակի բարութիւն.
Մինչ կարօտիւք որդւոցն մաշէր օրն ի բուն,
Այժմ ահա՛ կան ի փափուկ գիրկ իւր սիրուն։
Հառաչելով խնդրէ յանմահ Արարչէն,
Որ զորդիս իւր չցրուէ կրկին դէս ու դէն
Այլ ներելով մեղաց նոցա համօրէն,
Զտունն Հայկայ առ ինքն պահեալ թողցէ շէն։
Խնայեա՛ Տէր ասէ անոք խղճալուոյս,
Ի վերայ իմ զողորմութեանդ ծագեա լոյս.
Ձեռոցս այո՛ գու ես միայն հաստատ յոյս,
Շնորհեա զնոյնս մխիթար ինձ ողբալուոյս։
Ցիշեա զդաշն՝ զոր կռեցեր ընդ Նոյի,
Եւ օրհնեցեր զսահմանս իմ լի ու լի.
Մասին իմ անդ եղև խորան սխրալի,
Յոր մատոյց քեզ Նոյ պատարագն խնկելի։
Հաճոյ եղեն յետ Նոյի քեզ գործք Հայկայ՝
Որ հատ զարևն անատուածին գոռ Բէլայ.
Գիտեմ եռուր ոյժ զօրութիւն գու նմա,
Քև զօրացեալ արար հակայն անզգայ։

digitised by A.R.A.R.@

Նախանձ քո սուրը նախանձեցաւ արին այն,
Իբր Փենեհէս և երկնաչու Նղիայն.
Նետիւ միով տապալեցոյց նոյն գազան,
Որ մինչ քոյդ փառս կապտել փորձէր ընդունայն։
Անշուշտ գիտեմ սոյն քեզ հաճոյ մարտէն յետ,
Օրհնեցեր դու դիւցազն այն Հայկ նահապետ.
Զիմ այս սահմանս՝ որ բիւր ծաղկանց ծաղկի թերթ,
Նոյիւ եռուր կալուած նմա սիրով սերտ։
Երբոր բաժին էառ զիս Հայկն ի Նոյէն,
Ի գիրկս իմ եկն որդւովք թոռամբք համօրէն.
Ի հարք գաւառն իմ նստելով կերտեաց շէն,
Եւ իւր անուամբ կոչեաց զնա Հայկաշէն։
Կառոյց նաև ի մէջ Տոսպայ նոյն քաջ Հայկ,
Զայլ մի կերտ ևս որ կայ հուպ ի Վան քաղաք.
Յետ միմեանց թէև անցան բազում դարք,
Բայց դեռ կայ շէն՝ և յորջորջի Հայկավանք։
Հռչակելոյն որդիք թոռունք յետ նորա,
Զպարապ սահմանս իմ լցուցին ամսօրեայ.
Զանուանս իւրեանց եդին լերանցս ի վերայ,
Դաշտաց՝ գետոցս՝ որք են առիս շրջակայ։
Զպարարտութիւնս իմ ուտելով լիուլի,
Որդեծնութեամբ աճեալ զեղան յոյժ կարի.
Մինչ շատ աշխարհ ի մարդոյ էր ամայի,
Ես իբրև ծով բազմութեան մէջ ծփայի։
Փարիզ, Լոնդոն, Հռովմ, Վեննայ և Պէրլին,
Դեռ չծնած մարդոյ կարօտ կրէին.
Կարեկցելով ամայութեան ես նոցին,
Ձեռոցս տուի անոնց կերտող և բաժին։

digitised by A.R.A.R.@

Չէի կարծեր ողորմելիս բնաւին.
Որ դիպէի այս դառնաղէտ վիճակին.
Դատարկանալ ի բնակչաց գլուխին,
Կալ և մնալ ծաղր և ծանակ օտարին։
Սպասէի ի նոցանէ իբրև մայր,
Երախտաւոր մնային ինձ դար առ դար.
Բայց որ օգուտ մուրացան հէք մինչ խապառ,
Եւ արարին գետնի հողին հաւասար։
Աստուած հզօր՝ Աստուած սրբոյն Թադէի,
Բարդուղիմեայ, Աբգարու և Գրիգորի.
Աստուած գթած Տրդատայ և Ներսէսի,
Հայցուածք նոցին եղիցին քեզ հաճելի։
Գթա՛ հեղ մի ի վերայ մեր խեղճ Ազգի,
Եւ քոյդ շնորհաց արա զմեզ արժանի.
Բաւ է թողուս մեր Հայրենիք ամայի,
Եւ Հայոց ազգն այսքան դժբախտ և գերի։
Այս վիճակիս խնդրեմ փութով տո՛ւր վախճան,
Հայն արա՛ Տէր կարեկցութեան քոյդ արժան.
Ինչէ թերևս ի փառս ահեղ քո Անուան,
Զերծեալ կացցէ քեզ յաւիտեան գոհաբան։
Զորս Ընկերացս առթիւ գրեալս ի սմին,
Հէրիք և բաւ է ուշադիր դիպողին.
Զայս ասելով պիտի վերջ տայ իւր բանին
Հայրենազուրկ հէք Նահապետ Տոսպեցին։

digitised by A.R.A.R.@

## Բացատրութիւն անծանօթ ինչ բառից մատենկիս.

| | | | |
|---|---|---|---|
| Ա.կուաժաժիկ | կաշառ | մոն | վատ |
| աբոբիկ | ծուխու թռչուն | մոզ | խաշոր մոծաղ |
| Գիւռ | աբաղ | Շէնքեր | շեփեր |
| գոտի | անդամալոյծ | շաշոբդ | տխմար |
| գօրոմաստ | մաճնաթան | շօրոբալ | տրոբվեր |
| Դէր | անգամ | Զուռ | սեսակ մի այծի |
| դիւրան | հարթ | Չռալ | ջրի ծայն |
| Եվ | երբ | Պախրի | միս տաւարի |
| Զիկ | ինձ | պէր | ոչխար կթատեղ |
| զպուն | կապայ | պէրօր | ոչխար կթող |
| զվռել | շրջել | պանեղ | միջակ գիւղացի |
| թեռ | ղոյդ ջուալ | պուճուճակ | ծոծրակ |
| ժղլել | զբուցել | պսրել | դատարկախօս |
| Լաւէժ | անուն երդի | պտրուն | լրացեալ լուսին |
| լեզ | էդ գոմէշ | պօլատ | պոչ կտրած |
| խաւրծել | թթուաշ բոյսէ | Սարշայ | խաղ ինչ |
| խէծխէծ | թռչուն ծուխու | տուկեր | շինել |
| Կիթ | ձու | Վխալ | ղշուել |
| կլաւ | խղալի միս | վռօշ | ձաւարէ ապտուր |
| կողատ | մեծ ձուկ | Տղղել | ճնշուիլ |
| կուկլուկու | աքլօրի ձայն | տմտմայ | ճախճախուտ |
| կտրոյ | խաղ ինչ | տնղեղ | ալիք ծուխու |
| կօռ | ծեռաց վայտ | Փողքիկ | վոքր լաչակ |
| Համբայ | գիւղի ձայնուոր | Քեաղախիկ | կարճ ապայ |
| հիւ հիւ | բնաւին | քեալակ | լատտ |
| հրաց | միասին | քուայ | քարուտ |
| Ջլբուր | կեբակուր մի | Օռաոզ | խաղ մի |
| Մաշլախ | վերաբկու | Ֆշալ | շաւաչել |
| մզլել | մռայլել | Ֆռալ | պրատել |
| մէղել | մռածել | | |

digitised by A.R.A.R.@

# ՅԻՇԱՏԱԿ ԱՆՄՈՌԱՑ ԿԱՆԳՆԷ

## ՉԱՑՍ ՄԱՀԱՐՁԱՆ

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԾՆՈՂԱՑՆ ԻՒՐՈՑ

# ԱՒԵՏԻՍ ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆԻ՝

ԱՌՆ ՏՈՀՄԱԿԱՆԻ՝ ՀՕՐՆ ԻՒՐՈՑ. ԵՒ ՀԱՄԵՍՏԱՓԱՑԼ

# ԻՒՂԱԲԵՐ

ՏԻԿՆՈՋ ՄՕՐՆ ԻՒՐՈՑ.

1850 և 1842 *ամի. առ Տէր Հանգուցելոցն.*

## ՀԵՂԻՆԱԿ ԳՐՔՈՅՍ

digitised by A.R.A.R.@

## Ա. ՄԵՐ ՀԱՒԱՔԱԾՈՅ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ

Սոյն յիշատակարանց ընդհանուր թիւ մինչև 1500-ն անցանէ, որ ի 1860-էն ի վեր մինչև յայժմ հաւաքեալ թէ քաղաքաց՝ թէ եկեղեցեաց, թէ վանօրէից, և թէ մասնաւոր անձանց քովէն բացուած և տաժանակիր աշխատութեամբ ձեռք բերելով ընդօրինակեալ եմ. և եթէ շնորհիւ Աստուծոյ տպագրութեամբ ի լոյս դան՝ մեր պատմութեան և տեղագրութեան շատ թերիսն կարեն իրենց առատ նիւթերով ամբողջացուցանել և լրացուցանել։

## Բ. ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՆ ՎԱՆԱՅ

Աստուն սիրելի Ներսէս սրբազան պատրիարքի հրամանաւ 1880 մինչ էի ի Կ. Պոլիս. գրել սկսայ Վանայ ընդարձակ ստորագրութիւն՝ սկիզբն առնելով ի նախկին հիմնադրէ նորին ի Հայկայ. (որոյ անուամբ մինչև յայժմ մեր ի քաղաքին կայ աւան մի Հայկավանք անուամբ. և ժողովրդական աւանդութիւնս հիմնադիրը աւանիս դնէ Հայկ որդէս և բերդին՝ յառաջ քան զպատերազմն Բելայ) և այլ և այլ վիպերգութիւնս նորին մինչև յայժմ. քաղելով Վանապատական դիպուածս մեր Հայ Պատմութենէց. և Թերի Թողեալս նոցին լրացուցին առ մեզ եղեալ Հայ Տարեգիրք և նօտարք։

## Գ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՆՔ ՎԱՆՕՐԷԻՑ ԵՒ ԵԿԵՂԵՑԵԱՑ

Մեր այլ և այլ վիճակները այցելութիւն առնելու ժամանակ մեզ հանդիպեալ Վանօրէից՝ եկեղեցեաց՝ դպրոցաց՝ և նըշանաւոր անձանց արձանագրութիւնս ի մի հաւաքեալ մի հատոր գրոց պատրաստեալ եմ՝ տպագրութեամբ լոյս տեսնելու փափագով։

digitised by A.R.A.R.@

## Դ. ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ

Շատ գրքերէ՝ արձանագրութիւններէ՝ նամակներէ՝ և կոնդակներէ մի ճոխ հաւաքածոյ կազմեալ եմ։ որոյ հրատարակութեամբ մի շատ անծանօթ մնացած դէպք այլ և այլ վիճակաց պիտի լոյս գան և ծանօթանան Ազգին։

## Ե. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌՔ

Վանայ գաւառական լեզուին պատկանող 2650-է չափ բառս որ մեր բառարանի մէջ անոնց հեռքերն անգամ չեն տեսնուիր՝ խնամով հաւաքեալ շարադասեր եմ այր ընելի կարգաւ հանդերձ բացատրութեամբ՝ և տպագրութեան պատրաստեր եմ։

## Զ. ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԳԻՒՂՕՐԱՑՔ

Սոյն Զորս Ընկերքի նմանն գրուած մի ուսումնարան է. է 1865 ամի գրեալ՝ մինչ է նուիրակութիւն եղած էի Նարեկայ ուխտին համար ըստ խնդրանաց տեղւոյն Վանահօր Հիզանցի Յովսէփի վարդապետի. և ես ըստ իմ սովորութեան է գիր առի ինձ հանդիպեալ գիւղօրէից ամիսուն դիրս և միճակ հանդերձ ծանօթութեամբ, և կայ մնայ բարերար ձեռի մի օժանդակութեան. որպէս զի տպագրութեամբ ծանօթանայ Ազգին։

## Է. ԿԱՊՈՏԻԿ

1860 ամի Մուշ և Բաղէշ գնալուս միջոցին է գիր գրոշմեալ եմ ութսանեկ յանդիս. որոյ մէջ մեզ հանդիպեալ գիւղօրէից և շինից նկարագրութիւնները արեր եմ ըստ կարի և պատրաստեր եմ վասն տպագրութեան։

digitised by A.R.A.R.@

## Ը. ՄԵՐ ՄԱՍՆԱՒՈՐ ՏԱՐԵԳԻՐՔ

Թէպէտ սոյնն մինչև քսան ժամանէ, որք այլ և այլ ժամանակի մէջ ծաղկեալ է գէր առած են իրենց օրով պատահեալ դէպքերը, եթէ հրատարակութեամբ և լոյս տեսնան՝ մեր պատմութեան շատ օգուտ կընծայեն և քաղցր է ինձ յուսալ՝ որ ընթերցասէր և կարող Ազգայինք՝ պիտի փութան ազատել սոյն հայ տարեգրաց աշխատութիւնս ի ձեռաց սպառիչ ժամանակին։ Եւ այս յեռագայ կարգ է նոցա ըստ երիցութեան ժամանակին

---

Սիմէօն վարդապետ Բախուանցի 2. Գրիգոր Ծերենց Նահատակ 3. Մինասենց Թոմայ վարդապետ Աղթամարցի 4. Յովհաննէս կրօնաւոր 5. Մովսէս քահանայ Արծկեցի 6. Բարսեղ քահանայ Արճիշեցի 7. Յովհաննէս քահանայ Սրճիշեցի 8. Բարսեղ վարդապետ Վարագեցի 9. Գրիգոր վարդապետ Կամախեցի 10. Վարդան վարդապետ Բաղիշեցի 11. Դաւիթ վարդապետ Բաղիշեցի 12. Գրիգոր դպիր Վանեցի 13. Բարդուղիմէոս վարդապետ Շուշանցի 14. Անծանօթ տարեգիր Վանեցի 15. Բէյլար Վանեցի 16. Մուրատխան Վանեցի 17. Նազար վարդապետ Թլեցի 18. Մի այլ անծանօթ տարեգիր Վանեցի 19. Յովհաննէս Արքեպիսկոպոս Սեբաստացի 20. Յարութիւն քահանայ Խալֆայեան Վանեցի 21. Յակոբ եպիսկոպոս Թոխուզեան Վանեցի. առանց դոցնց ընդօրինակութիւն ևս քովս ունիմ։

### Սիմէօն վարդապետ Բախուանցի։

Ինն ամաց տարեգրութիւն առնէ սա սկսեալ է 1392 ամէ. և պատմագրէ համառօտ ոճով զքանի գլխաւորս երբեմն նաւորին Վանկի ամուրայ։

digitised by A.R.A.R.@

## Գրիգոր վարդապետ Ծերենց Խլաթեցի։

Իւր ուղղափառեայ ոճով ոտանաւորը տաբեզբուլթիւն սկսանէ է 1386 ամաց Փրկչին ի մահուանէ Կախիկ Յովհաննէս վարդապետին. և հասուցանէ մինչև ի կլկին գալն շահ Ռուհայ ի Հայաստան և մինչև ցառումն Աղունայ բերդին ի բռնաւորէն Սքանտարայ՝ որդւոյն Կարա Ուսուֆայ. մերձ յետուն ամաց պատմութիւն է գործ նորին։ Իսկ ինքն Գրիգոր Ծերենց յետ լինչ ամաց նահատակի ի Վանս Սիպանայ ի զօրացն Ռոշկանցի Քրդաց։

## Մինասենց Թոմայ վարդապետ Աղթամարցի։

Երեսուն երիք ամաց միայն տաբեզբուլթիւն ունի սա. սկսեալ ի 1419 ամաց հետէ՝ սկիզբն պատմութեան իւրոյ գնելով զպատուհասն մարախին. որ քան զաւազ ծովու անթիւ էին ասէ։ Պատմէ զգալուստն շահ Ռուհին. զմահն զարա Իսուֆին, և զայլ և այլ կռիւս Սքանտարայ՝ ընդ դրացի ամիրայս և պարոնս. զառումն Վանայ. և զտիրելն բերդին Մակուայ. (որ միայն նա կայր ասէ ի ձեռն քրիստոնէից) պատմէ զհրաբուխ Սրմրուտ լերին. որ կայ անծանօթ առ պատմաղիրս Հայոց. և այլ բազում կարգալոյ արժանի պատմութիւնս առնէ. որք զիպեցան յիւրում ժամանակի։ Էր սա ի միաբանութիւնէն Աղթամարայ. և ծաղկեցաւ յաւուրս կաթուղիկոսաց տեղւոյն Դաւթի Գ. և Զաքարիացի մեծի որ նստաւ յամի 1561 հրամանաւ Զհան շահայ ի սուրբ աթոռն Լ.ջմիածնի։

Փափագէի որ սոյն վերոյիշելոց պէս՝ մնացեալ տաբեզբաց վերայ ևս հակիրճ ծանօթութիւն տալ սիրելի ընթերցողացս, բայց մատենիս համառօտութեան պատճառաւ զանց արարի առ այժմ։

Հ.Ս.Խ. / ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴ
СССР АН ИСТОРИЧЕСКАЯ БИБЛИОТЕКА
7/XI—1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
*Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

Գինն է 50 կ.

Ծախվում է «Կովկասեան գրավաճառանոցում
Զ. Գրիգորեանցի։»

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

18983

2013

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@